Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*[**http://www.armin.am**](http://www.armin.am)

*Էլ. փոստ՝*[**info@armin.am**](mailto:info@armin.am)

*Ռուբէն Մելքոնյան*

# ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

*Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն*

Երևան
2009

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ի 791

*Գիրքը հրատարակվում է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով, «Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա*

Ի 791 Իսլամացված հայերի խնդիրների շուրջ - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2009. - 112 էջ + ներդիր 2 էջ:

Սույն գրքույկում փորձ է արվում ընդհանուր գծերով ներկայացնել հիմնականում Հայոց ցեղասպանության տարիներին բռնի կրոնափոխված հայության պատմության առանձին դրվագներ, նրանց սերունդների շրջանում ներկայումս տեղի ունեցող գործընթացները, թուրքական պետական և գիտական որոշ շրջանակների մոտեցումները հարցին:

Նախատեսված է պատմաբանների, արևելագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-9000-9-4

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2009
© «Նորավանք» ԳԿՀ, 2009

## *Առաջաբան*

Տարբեր ժամանակաշրջաններում բռնի կրոնափոխության, հիմնականում՝ իսլամացման ենթարկված հայության խնդիրը համարվել է հայագիտության ամենակարևոր և քիչ ուսումնասիրված թեմաներից մեկը: Կասկածից վեր է, որ ներկայումս ևս այդ թեման մեր գիտության օրակարգային հարցերից է: Գիտական մամուլը թերթելիս հաճախ տեսնում ենք, որ հայտնի շատ գիտնականներ հանդես են եկել հիշյալ խնդրի համակողմանի ուսումնասիրության կոչով: Եթե ավելի վաղ դարերում իրենց արմատներից բռնի հեռացված հայության մասին կան լուրջ և մակերեսային աշխատանքներ, ապա հատկապես 20-րդ դարասկզբին՝ Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայության խնդիրները վերջին տարիներին են հայտնվել մեր գիտական, հասարակական շրջանակների օրակարգում: Տարբեր դարերում բռնի իսլամացված հայության ոչ բոլոր խմբերն են մինչև մեր օրերը պահպանել էթնիկ պատկանելության գիտակցությունը կամ հիշողությունը, սակայն որոշ խմբերում դրանց հետքերը, այնուամենայնիվ, դեռևս նկատվում են: Խոսքն առաջին հերթին վերաբերում է 19-րդ դարի վերջերի հայկական կոտորածների և 1915թ. Ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայությանը և նրանց սերունդներին: Հարցի համատեքստում ուրույն տեղ է զբաղեցնում նաև 16-րդ դարից սկսած՝ բռնի իսլամացման ենթարկված Սև ծովի հարավարևելյան ափերին բնակվող հայությունը, որը հայտնի է համշենահայություն անվամբ[1]:

[1] Սույն աշխատանքի շրջանակներում հիմնականում անդրադառնալու ենք Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայերի խնդրին, ուստի ավելի վաղ դարերում կրոնափոխված հայության հարցը դուրս է մեր քննության սահմաններից:

Կրոնափոխ, դավանափոխ հայության խնդիրներով Հայաստանում ակտիվորեն զբաղվում է «Նորավանք» ԳԿՀ-ն. նշենք, որ հիմնադրամում գործում է ծրագիր, որի ուսումնասիրության ոլորտն են կազմում ինչպես բռնի կրոնափոխ՝ իսլամացված, այնպես էլ դավանափոխ (կաթոլիկ, բողոքական և այլն) հայության խնդիրները: Հիմնադրամի նախաձեռնությամբ դաշտային-հետազոտական աշխատանքներ են անցկացվել Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերում: Կրոնափոխ հայերի թեման օրակարգ բերելու և լուսաբանելու հարցում հատկապես պետք է առանձնացնել «Հանրապետական» ամսագրի և նրա գլխավոր խմբագիր Մուշեղ Լալայանի գործադրած ջանքերը. արդեն շուրջ երեք տարի այդ ամսագրում տպագրվում են ծպտյալ, իսլամացված, դավանափոխ հայերի թեմային նվիրված հոդվածներ, որոնք արտատպվում են հայաստանյան և սփյուռքի տասնյակ պարբերականներում ու համացանցային կայքերում: Համշենահայերի (թե՛ քրիստոնյա և թե՛ մուսուլման) խնդիրներով զբաղվում է «Ձայն համշենական» ամսաթերթը (խմբագիր՝ Սերգեյ Վարդանյան), որը տպագրվում և անվճար տարածվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքի գաղթօջախներում: Վերջին ժամանակներս Հայաստանում և Սփյուռքում ավելանում է նաև գիտնականների, մասնագետների թիվը, որոնք զբաղվում են թեմայի ընդհանուր կամ առանձին կողմերի ուսումնասիրությամբ, ինչը շատ ողջունելի է: Հարկ է առանձնահատուկ նշել, որ կրոնափոխ, դավանափոխ հայության խնդիրները գտնվում են ՀՀ Սփյուռքի նախարարության ուշադրության կենտրոնում և տեղ են գտել «Հայաստան-Սփյուռք գործակցության» հայեցակարգում:

Բռնի կրոնափոխված հայության խնդրի ուսումնասիրության աշխուժացմանը զուգահեռ մեր գիտական դիսկուրսում ծառացել է նաև հետևյալ հարցը. հային բնորոշելու համար գերակայությունը պետք է տալ էթնի՞կ, թե՞ կրոնական պատկանելությանը: Մեզանում, շատ հաճախ, արմատացած է այն մտածելակերպը, թե հայ կարող է համարվել միայն քրիստոնյան, և ըստ այդմ՝ *այլակրոն հայ* հասկացությունը բացառվում է, ու սրա համար, իհարկե, բերվում են բազմաթիվ հիմնավորումներ: Փաստենք, որ սա բարդ հարց է և գտնվում է տարբեր դիսցիպլինների հատման տիրույթում, սակայն, մեր կարծիքով, ներկայում խնդրին պետք է մոտենալ ոչ թե ցանկալին կամ իդեալականը տեսնելու, այլ այսօրվա կոնկրետ իրականության դիրքերից: Իսլամացված հայերի և նրանց սերունդների գոյությունը փաստ է, և առնվազն անարդար կլինի անտեսել տարատեսակ դժվարությունների մեջ իրենց հայկական ծագման հիշողությունը պահպանած մարդկանց: Անհրաժեշտ է շեշտել նաև, որ *իսլամացված հայ* տերմինը մեզ համար ավելի շատ նրանց ներկայիս իրավաբանական կարգավիճակը բնութագրող անվանումն է:

Պայմանականորեն *իսլամացված հայություն* անվանված տարբեր խմբերի հանդեպ մենք պետք է ունենանք տարբերակված վերաբերմունք և, որ ամենակարևորն է, սպասումներ: Թուրքիայի բռնի կրոնափոխ հայության խնդիրը բազմաշերտ է, և այդ ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունները կարևոր են, սակայն այս հարցում անհրաժեշտ և պարտադիր է որդեգրել մասնագիտական մոտեցում, հակառակ պարագայում կարող են ի հայտ գալ անցանկալի արդյունքներ: Սկիզբ առած և շարունակվող գործընթացը նորանոր փակ էջեր է բացում Հայոց

մնացորդաց պատմության մեջ, որոնց հավաքումը և համակարգումը թույլ կտա ավելի ամբողջական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ: Սակայն այդ ամենը պահանջում է նաև ժամանակ, հմտություններ, հնարավորություններ և ապացուցում այն անձանց տեսակետների սնանկությունը, որոնք շտապում են ժամանակից շուտ և անհիմն կամ, լավագույն դեպքում, մեկ-երկու հնացած փաստարկների հիման վրա վերլուծություններ ու եզրակացություններ անել:

Սույն գրքույկով համեստ փորձ ենք կատարել ընդհանուր գծերով ներկայացնել հիմնականում Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի կրոնափոխված հայության պատմության առանձին դրվագներ, նրանց սերունդների շրջանում ներկայումս տեղի ունեցող գործընթացները, թուրքական պետական և գիտական որոշ շրջանակների մոտեցումները հարցին: Հուսով ենք, որ գրքույկը կօգնի ընդհանուր պատկերացում կազմել Թուրքիայի կրոնափոխ հայերի խնդրի առանձին կողմերի մասին և կնպաստի հետագա աշխատանքներին:

*Ռուբեն Մելքոնյան*

## *Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում. ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ*

Տարբեր ժամանակաշրջաններում Հայկական լեռնաշխարհ ներխուժած նվաճողները որդեգրել են տեղի բնիկ ժողովուրդների, այդ թվում և հայերի, բռնի ձուլման քաղաքականությունը, ինչի իրագործման հիմնական մեթոդներից է եղել բռնի կրոնափոխությունը կամ դավանափոխությունը։ 11-րդ դարում Հայկական լեռնաշխարհ և տարածաշրջան ներխուժած՝ իսլամ դավանող թյուրքական ցեղերի հիմնած պետություններում ձուլումն առավելապես ընթացել է բռնի իսլամացման միջոցով, որի զոհեր են դարձել տեղի բնիկ ոչ մուսուլման ժողովուրդները։ Հայերի բռնի կրոնափոխության համար կիրառվել են բազմապիսի մեթոդներ. ինչպես մահվան սպառնալիք, այնպես էլ հարկային, իրավական կոշտ հալածանքի քաղաքականություն և այլն[1]։ Ընդունելով պարտադրված իսլամը՝ հայերի այդ հատվածը ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով կամա թե ակամա հեռացել է նաև մայր արմատից և քրիստոնեություն դավանող ազգակիցներից, ինչը, ի վերջո, հանգեցրել է նրանց մասնակի կամ լիակատար ձուլմանը։ Սրա գլխավոր պատճառներից է նաև այն, որ ինչպես անցյալում, այնպես էլ հաճախ մեր օրերում կրոնական պատկանելությունը գերադասվել է էթնիկ պատկանելությանը, և մարդկանց տարբերակել են համաձայն այդ սկզբունքի։ Ըստ այդմ՝ հայ և քրիստոնյա հասկացությունները նույնացվել են, և բացառվել է այլակրոն հայ հասկացությունը։ Արևելագետ Ալեքսան Խաչատրյանն այս առիթով նշում է. «Քրի-

[1] *Երեմեև Դ.,* Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 139-143, 187-188; *Кондакчян Р.,* Турция: внутреняя политика и ислам, Ереван, 1983, стр. 22-25.

ստոնեությունը հայերի համար ոչ միայն դավանանք էր, այլև՝ աշխարհայացք, ազգային գոյության հիմք: Այդ պատճառով էլ հավատափոխությունը միջնադարյան Հայաստանում գրեթե համազոր էր ազգային դիմախեղման: Այլ կրոնին հարել նշանակել է ազգությունը փոխել: Քրիստոնյա, ընդ որում՝ լուսավորչական, լինելը դիտվել է որպես հայության չափանիշ: Դավանափոխությունը, հետևաբար, որակվել է որպես ազգուրացություն և դավաճանություն»[1]:

Հայտնի փաստ է, որ հայերի բռնի իսլամացումը հատկապես մեծ ծավալներ է ընդգրկել թյուրքական ցեղերի Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ ներխուժելուց հետո[2]: Կրոնափոխության առավել հարմար թիրախներից են համարվել երեխաները, որոնց իսլամացնելով վաղ տարիքում՝ կարելի էր ավելի հեշտ ջնջել ազգային և կրոնական դեռևս ձևավորվող ինքնագիտակցությունը: Հենց այս տրամաբանությամբ է գործել Օսմանյան կայսրությունում մեծ տարածում գտած և երկար դարեր կիրառված մանկահավաքի (դևշիրմե) ինստիտուտը, որն ունեցել է նաև «արյան հարկ» անվանումը[3]: Օսմանյան կայսրությունում հայերի իսլամացման վերջին լայնածավալ ակցիան տեղի է ունեցել 1915-23թթ. Հայոց ցեղասպանության տարիներին:

Ներկայիս Թուրքիայի կրոնափոխ հայության զերակշիռ մե-

[1] *Խաչատրյան Ա.,* Հայերի մահմեդականացումը միջնադարյան Հայաստանում (8-15-րդ դդ.), Իրան-նամէ, Երևան, 1993, թիվ 1, էջ 26:

[2] *Ամատունի Գ.,* Դարերու ընթացքին թրքացած հայեր, քրտացած հայեր, Նայիրի շաբաթաթերթ, Բեյրութ, 1980, հ. 1-12:

[3] *Զուլալյան Մ.,* «Դևշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1959, հ. 2-3 (5-6), էջ 247-256; *Շաքարյան Ա.,* «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. դևշիրմե, Երևան, 2006:

ժամանությունը իսլամ է ընդունել պարտադրված՝ կյանքի և մահվան ընտրություն ունենալով։ Խոսելով Թուրքիայի ուծացած կամ այդ ճանապարհին գտնվող հայերի մասին՝ հաճախ բախվում ենք նրանց կարգավիճակի սահմանման վիճահարույց և, միևնույն ժամանակ, բազմաշերտ խնդրին։ Կարծում ենք՝ հարցի ճշգրտման համար արժե հաշվի առնել հետևյալ փաստարկները. Թուրքիայի իսլամացված հայերը ձուլման և ինքնության կորստի տարբեր աստիճաններում գտնվող մարդիկ են, բոլորը չէ, որ մաքուր հայկական էթնիկ նկարագիր ունեն, և եթե որպես ելակետ վերցնենք իսլամացված հայության և նրանց սերունդների շրջանում առկա որոշ երևույթներ և տեղի ունեցող գործընթացները, ապա պայմանականորեն նրանց կարելի է բաժանել երկու խմբի.

ա. Էթնիկապես մաքուր հայեր, որոնք պահպանել են ազգային-կրոնական (քրիստոնեական) սովորույթների, տոների, ծեսերի առանձին տարրեր, հաճախ մոռացել են լեզուն կամ կիրառում են «սիմվոլիկ հայերեն», բայց դեռևս, թեկուզև քողարկված ձևով, ունեն հայկական ինքնագիտակցության որոշակի տոկոս։ Նրանք գաղտնի շարունակում և փորձում են պահպանել այս ամենը, ձգտում դա փոխանցել իրենց սերունդներին։ Այս խմբին պատկանողները մասնագիտական գրականության մեջ անվանվում են **ծպտյալ հայեր**։

բ. Հայերի սերունդներ, որոնց նախնիները ստիպված իսլամացել են, նրանց գերակշիռ մասը գիտի և նույնիսկ ընդունում է դա, սակայն անհամեմատ ավելի քիչ են պահպանել ազգային-կրոնական սովորույթների տարրերը։ Այս նույն խմբում կարելի է ընդգրկել նաև մարդկանց, ովքեր ունեն հայկական ծագման որոշակի տոկոս, ում տատը կամ պապը հայ է եղել, և այդ հիշո-

դությունը պահպանվել է նրանց մեջ: Նրանք էլ հենց կազմում են խառնածինների այն մեծ բանակը, որի գոյության փաստը քննարկման ավելի լայն ոլորտներ է ընդգրկում ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Խառնածինների մի մասը հպարտությամբ խոստովանում է, որ ունի նաև հայկական ծագում, սակայն, միևնույն ժամանակ, հանդիպում են մարդիկ, որոնք տարբեր դրդապատճառներով կտրականապես ժխտում են իրենց հայկական ծագումը: Ավելին. ըստ տարբեր աղբյուրների՝ նրանց շարքում կան ծայրահեղ ազգայնական կազմակերպությունների անդամներ. մեր կարծիքով՝ այս երևույթն ունի հստակ հոգեբանական կողմ: Ուշագրավ է նաև, որ բռնի իսլամացված հայության և նրանց հետնորդների շրջանում տեղի են ունենում հետաքրքիր գործընթացներ, որոնք ներկայումս աճի միտում ունեն:

Թուրքիայի իսլամացված հայերի խնդրի անգամ մակերեսային դիտարկման արդյունքում ի հայտ եկած շատ փաստեր ինչ-որ տեղ թույլ են տալիս խոսել նրանց շրջանում պահպանված որոշակի հիշողության մասին, ինչը համապատասխան նպաստավոր պայմանների դեպքում տեսականորեն կարող է նրանց հնարավոր ինքնակազմակերպման բավարար հիմք դառնալ: Ակնհայտ է, որ Թուրքիայում բնակվող բազմաթիվ ծպտյալ և իսլամացված հայերի շրջանում կա ազգային ակունքները պահելու ձգտում կամ գոնե դրանց հանդեպ հետաքրքրություն: Սակայն Թուրքիայում իրենց գոյությունը պահպանած, ուծացման և ինքնության կորստի տարբեր մակարդակներում գտնվող հայերի սերունդների մեջ էթնիկ և կրոնական ինքնագիտակցության տարրերի գնահատման համար պարտադիր ու

կարևորագույն պայման է հստակ պատկերացնել և հաշվի առնել այն միջավայրը, որտեղ ապրում են նրանք: Թուրքիայում, ուր հայ կամ ընդհանրապես ոչ մուսուլման լինելն այսօր էլ ծայրահեղ վտանգավոր է, դասական հայկականություն պահպանելը դժվար, եթե չասենք՝ անհնարին է, ոչ միայն Ստամբուլում, այլև անհամեմատ ավելի հետամնաց, հետադեմ արևելյան շրջաններում: Թուրքիայի կրոնափոխ հայերի խմբերն ունեն խեղված հոգեկան և հոգեբանական վիճակ, ապրում են վախի և ենթագիտակցական վախի պայմաններում, ունեն երկու ինքնություն՝ արտաքին և ներքին աշխարհների համար: Ուստի, այլակրոն հայերին ինչ-որ տեղ «մեղադրել» և հայ լինելու հայաստանյան չափանիշների մեջ տեղավորել-չտեղավորելուց առաջ պետք է հաշվի առնել այս ամենը, ինչը ենթադրում և պահանջում է նեղ մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ: Հայկական ինքնագիտակցության տարբեր շերտերի պահպանման ամենախոսուն ապացույցներից կարող է լինել այն փաստը, որ պատեհ առիթի դեպքում բռնությամբ և հարկադրանքով արմատից կտրված հայերը վերադառնում կամ գոնե փորձում են վերադառնալ իրենց արմատներին:

Ներկայիս Թուրքիայում բնակվող և մեր ուսումնասիրության շրջանակների մեջ մտնող ծպտյալ և իսլամացված հայությունը առավելապես ձևավորվել է հետևյալ խմբերից.

- Հայոց ցեղասպանության ժամանակ՝ երբեմն միայն արտաքուստ, մուսուլմանություն ընդունած հայեր:
- Ցեղասպանության ժամանակ առևանգված, այնուհետև թուրքերի կամ քրդերի հետ ամուսնացած հայ կանայք և աղջիկներ:

- Ցեղասպանության ժամանակ մուսուլմանների կողմից բռնի որդեգրված հայ երեխաներ:
- Որոշ թվով հայեր, ովքեր ապաստան են գտել մուսուլման հարևանների կամ այլ մարդկանց մոտ:
- Սահմանափակ թվով հայ արհեստավորներ և բացառիկ մասնագետներ, որոնք իսլամացել են իշխանության իմացությամբ և կամքով:

Խոսելով Ցեղասպանության տարիներին հայերի իսլամացման մասին՝ թուրքական մի շարք աղբյուրներ շեշտում են, թե շատ հայեր նաև կամովին են իսլամ ընդունել: Սակայն, ինչպես վերը նշվեց, «կամովինն» իրականում մահի և կյանքի միջև ընտրություն էր նշանակում: Որոշ թվով հայերի պարտադրվել է իսլամ ընդունել, բայց դա համատարած բնույթ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ, քանի որ թուրքական պետական մեքենան 1915-ին իրականում ցանկացել է բնաջնջել, այլ ոչ թե ձուլել հայերին: Այս փաստի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ Ցեղասպանության տարիներին հայերի «կամովին» մուսուլմանություն ընդունելու պատրաստակամությունը ոչ միշտ է միանշանակ հավանության արժանացել իշխանությունների կողմից: Օրինակ, Թուրքիայի կառավարության օսմանյան արխիվում պահպանվել են ժամանակի բարձրաստիճան պաշտոնյաների, առավելապես ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի՝ հայերի կրոնափոխությանը վերաբերող հրամանները և գրագրությունը, որոնցում նա պահանջում է հաշվի չառնել կրոնափոխությունը և նախապես որոշված վայրեր աքսորել նաև իսլամ ընդունած հայերին[1]:

[1] *Dündar F.,* Modern Türkiyenin şifresi. İttihat ve Terakki'nin etnisite mühendisliği (1913-1918), İstanbul, 2008 (2-inci baskı), s. 301.

Կրոնափոխ հայերի խնդրի չլուսաբանված էջերից է արդեն հանրապետական Թուրքիայում հայերի բռնի իսլամացմանն ուղղված պետական քաղաքականությունը, որի մասին առանձին դրվագներ երբեմն սպրդել են մամուլի էջերում: Սակայն մենք կցանկանայինք կոնկրետացնելով աշխարհագրությունը՝ ներկայացնել Սասունում անցյալ դարի կեսերին հայերի բեկորների հանդեպ կիրառված իսլամացման քաղաքականության որոշ դրվագներ: Ավելորդ չենք համարում նշել, որ այդ մասին փաստերն անձամբ ենք գրի առել հենց տեղում իրականացրած դաշտային-հետազոտական աշխատանքների ընթացքում:

Տարբեր աղբյուրներում հանդիպում են կցկտուր տվյալներ, որոնք վկայում են, որ Սասունում մնացել են ինչպես Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված, այնպես էլ տարբեր ճանապարհներով փրկված քրիստոնեադավան հայեր: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանությունը զուգորդվել է նաև հայկական մշակութային հուշարձանների ոչնչացմամբ (մշակութային ցեղասպանություն), և 1915-ից հետո պատմական Հայաստանի տարածքի կիսավեր կամ ամբողջովին ոչնչացված եկեղեցիներում ու վանքերում անհնար է եղել հայ հոգևորականների ներկայությունը: Այս պայմաններում Սասունի վերապրած քրիստոնյա հայերը կրոնական ծեսերի կատարման հարցում բախվել են լուրջ խոչընդոտների: Միամտություն կլինի կարծել, թե Ցեղասպանությանը հաջորդած տարիներին քրիստոնեությունը պահպանած սասունցիներին հայ հոգևորականով չապահովելը միայն Հայոց պատրիարքության «անտարբերություն»-ից է բխում: Պարզ է, որ պետական լուրջ հսկողությունը թույլ չի տվել հայ հոգևորականներին գալ պատմական Հայաս-

տանի տարածքներ, իսկ հազվադեպ գաղտնի այցերին միշտ հետևել են ճնշումներ, բռնարարքներ:

Ահա այսպիսի պայմաններում գոյատևած քրիստոնեադավան սասունցիների կղզյակների հանդեպ արդեն 1950-ականներին սկսվում է իսլամացման ալիքը: 1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից հայերին իսլամ ընդունելու կոչ-պահանջ է ներկայացվել, որը, սակայն, հակազդեցություն է առաջացրել սասունցիների մի մասի շրջանում, որոնք մերժել են պարտադրված կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվել են, ընդ որում՝ դրանցում ընդգրկվել են նաև ուժային կառույցները: Այս ամենի հետևանքով քրիստոնյա հայերի մի մասը, գոնե արտաքուստ, տեղի է տվել և ընդունել իսլամ: Բռնի մեթոդներին զուգահեռ թուրքական պետությունը գործի է դրել նաև այլ միջոցներ, և առանց հոգևորականի հայկական գյուղեր հաճախ սկսել են այցելել մուսուլմանական *իմամներ, շեյխեր,* որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում և այլն: Այս մեթոդը նույնպես արդյունք է տվել, քանի որ հովվապետից զրկված հայերը ստիպված են եղել դիմել այդ քայլին: Սակայն ուշագրավ է, որ ըստ մեր զրուցակիցների, իրենց ազգակիցների կրոնափոխությունը միանշանակ չի ընդունվել շրջապատի հայերի կողմից, որոնք անթաքույց քննադատել են կրոնափոխներին: Երբեմն դա օգնել է իսլամացման դադարեցմանը կամ ծավալների նվազմանը: Ըստ տարբեր աղբյուրների վկայությունների՝ այդ վայրերում հայերի իսլամացման դեպքեր գրանցվել են նաև ավելի ուշ տարիներին, օրինակ՝ 1980-ականներին: Շարունակվող հալածանքները ստիպել են Սասունի վե-

րապրած հայերի մի մասին տեղափոխվել Ստամբուլ, մի մասն ընդունել է թուրքական պետության և ստեղծված վիճակի պարտադրած կրոնը, մի մասն էլ վերածվել է ծպտյալ քրիստոնյաների: Հարկ է նկատել, որ այդ ժամանակահատվածում նմանատիպ քաղաքականություն է կիրառվել պատմական Հայաստանի տարբեր վայրերում վերապրած հայության խմբերի նկատմամբ: Այս ամենը փաստում է, որ Թուրքիայի Հանրապետությունը շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման քաղաքականությունը, որը, ի վերջո, տվել է իր արդյունքները, և այսօր պատմական Հայաստանի տարածքում՝ չհաշված առանձին կղզյակները, բացահայտ քրիստոնյա հայեր գրեթե չկան:

Այսօր էլ թուրքական մամուլում երբեմն հայտնվում են նյութեր, որոնք փաստում են, որ Թուրքիայի տարբեր գավառներում մնացած հատուկենտ քրիստոնյա հայերի նկատմամբ չի դադարել իսլամացման քաղաքականությունը, որին նպաստում են նաև հասարակության տարբեր շերտեր: Այսպես, թուրքական «Հյուրիյեթ» թերթի հրապարակումներից մեկում նշվում է, որ Քասթամոնուի Քափաքլը գյուղի բնակիչ, 53-ամյա Ասատուրը 2004թ. իսլամ է ընդունել՝ վերցնելով Ահմեթ Քազերօղլու անուն-ազգանունը: Նման քայլի է դիմել նույն գյուղի մեկ այլ բնակիչ՝ 68-ամյա Նամըք Օզչելիքը[1]: Ցավոք, հայերի կրոնափոխության նորօրյա գործընթացներում նկատվում են նաև հայաստանցի հայեր. օրինակ՝ 2009թ. Հայաստանի քաղաքացի Հերմինե Անդրանիկյանը, ամուսնանալով Թուրքիայի Բուրսա քաղաքի բնակիչ Էրսին Մանթըի հետ, փոխել է կրոնը և ընդունել Էմինե անունը[2]:

[1] Ermeni vatandaşlardan 'soykırım' tepkisi, Hürriyet, 26,4,2009.
[2] Ermeni gelin Müslüman oldu!, http://www.hyetert.com/haber3.asp?Id=32908&DilId=1

Թուրքիայում ներկայումս բնակվող կրոնափոխ հայերի խնդրի ամենաբարդ կողմերից է նրանց թվաքանակի հարցը, քանի որ հստակ թվեր ներկայացնելը կապված է մի շարք խոչընդոտների հետ: Շրջանառվող թվերը տատանվում են հարյուր հազարից մինչև մի քանի միլիոնի սահմաններում, սակայն մենք հակված ենք ավելի զուսպ գնահատականների: Բացի այդ, խոսելով թվերի մասին՝ պետք է տարբերակումներ արվեն ծպտյալ և իսլամացված, հայերի ու նրանց սերունդների, խառնածինների միջև, ինչն էլ ավելի է բարդացնում խնդիրը: Այս թեմայի համատեքստում հարկ եմ համարում մեջբերել Հրանտ Դինքի տեսակետը, որը, կարելի է ասել, տասնամյակներով ուշադրության կենտրոնում է պահել Թուրքիայի բռնի իսլամացված հայերի խնդիրը: Դինքը իր, թերևս, վերջին հարցազրույցներից մեկում անդրադառնում է իսլամացված հայերի խնդրին և խոսում նրանց թվաքանակի մասին. *«Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան, որ քաջութիւն ունին հրապարակաւ արտայայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ և ես ըսեմ, որ ապագայ հայ կեանքի ամենամեծ և ամենայուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա: Եթէ Թուրքիան Եվրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեմ սխալիր,* ***եթէ հայութիւն առնուազն երկու միլիոն եւ շատնայ, Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւով*** *(ընդգծումը մերն է- Ռ.Մ.): Ինծի համար շատ կարևոր հարց է այս հարցով աշխատիլ և գտնիլ այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները: Շատ կարևոր է գտնել այդպիսի հայ մը և իրեն տալ իր հայութիւնը»*[1]:

[1] Հանդիպում՝ Պոլիս հրատարակվող «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Տինքի հետ, Օրակարգ, Գլենդել, 10.01.2007:

## *Հայ երեխաների բռնի իսլամացումը Հայոց ցեղասպանության տարիներին*

Առանձին և լուրջ ուսումնասիրության թեմա է Ցեղասպանության ընթացքում առևանգված կամ ծնողների կոտորվելուց հետո մի կերպ փրկված հայ երեխաների հարցը։ Ինչպես վկայում են մի շարք աղբյուրներ, այդ թվում և թուրքական, Հայոց ցեղասպանության տարիներին մեծ թվով հայ երեխաներ են առևանգվել թուրքերի և քրդերի կողմից։ Որբ մնացած հայ երեխաների մի մասն էլ օսմանյան իշխանությունների հրամանով և նախաձեռնությամբ բաժանվել է մուսուլման ընտանիքներին[1], ինչպես նաև հավաքվել են թուրքական որբանոցներում և իսլամացվել։ Այս մասին վկայող փաստեր են պահպանված օսմանյան արխիվներում։ Համադրելով տարբեր աղբյուրների ներկայացրած փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բռնի իսլամացումն ու ձուլումը կատարվել են երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն խավերի կողմից.

1. Ծնողներին կորցրած, կոտորածից մի կերպ փրկված, անտեր, անտուն, անխնամ մնացած հայ երեխաները պետության կամքով իսլամացվել են և բաժանվել մուսուլման ընտանիքներին։ Որպես վերը նշվածը հաստատող օրինակ կարելի է մեջբերել օսմանյան արխիվում պահպանված 1915թ. հուլիսի 10-ով թվագրված պաշտոնական հրամանը, որտեղ ասվում է, որ իսլամացված որբ հայ երեխաներին պետք է հանձնել բարեկեցիկ մուսուլման ընտանիքներին, հատկապես այն գյուղերում ու գյուղաքաղաքներում, ուր հայեր չկան։ Եթե երեխաների

[1] *Başyurt E.,* Ermeni evlatlıklar, İstanbul, 2006, s. 36.

թիվը մեծ է, նրանց պետք է հանձնել դժվարությամբ ապրուստը հոգող մուսուլման ընտանիքներին և ամեն երեխայի համար ամսական 30 քուրուշ վճարել նրանց: Պետք է ցուցակագրել այդ երեխաների թվի և գտնվելու վայրի մասին տվյալները, դրանք ուղարկել կենտրոն[1]: Հատուկ նշվում է, որ այս երեխաները հանձնվում են այդ ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրվի մուսուլմանական կրթություն: Նույն բովանդակությամբ գրություններ հանդիպում են նաև հետագայում՝ ուղղված տարբեր նահանգների ղեկավարներին: Ուշագրավ է այն, որ հրամաններում հատուկ նշվում էր, թե երեխաներին պետք է բաժանել հատկապես այն վայրերում, ուր հայեր չկան[2]: Նպատակը, ըստ երևույթին, այն էր, որ հետագայում նույնպես այդ երեխաները հնարավորություն չունենան շփվելու իրենց ազգակիցների հետ և հեշտությամբ ձուլվեն ու իսլամանան:

Բացի այդ, օսմանյան կառավարությունը, չնայած պատերազմական վիճակին, իր նախաձեռնությամբ հայ որբերին հավաքել է թուրքական որբանոցներում՝ իսլամացնելու և թուրքացնելու նպատակով: Օսմանյան արխիվներում պահպանվել են երիտթուրքական պարագլուխ, ռազմական նախարար Էնվերի գրությունները՝ ուղղված ներքին գործերի նախարար Թալեաթին, որտեղ նա ցանկություն էր հայտնում և պահանջում, որ հայ որբերն ուղարկվեն հատկապես թուրքական որբանոցներ: Էնվերի՝ ներքին գործերի նախարարությանն ուղղված 1916թ. մայիսի 9-ի գրության մեջ նշվում է. *«Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին եթե վերցնեք մեր որբանոցները, ես պատ-*

[1] *Gürün K.,* Ermeni dosyası, Ankara, 1988, s. 287; նույնը տե՛ս նաև *Atnur İ.,* Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 65.

[2] *Atnur İ.,* Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 66.

*բաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա համար անհրաժեշտ ծախսերը»*[1]: Կրթության նախարարության՝ Մարդինի նահանգապետարան ուղարկած 1916թ. հունիսի 1-ի ծածկագիր հեռագրում նշվում է, որ Մարդինի որբանոց պետք է վերցնել միայն իսլամացած հայ երեխաներին[2]: Ավելի վաղ՝ 1916թ. ապրիլի 30-ին, անխնամ մնացած հայ կանանց և երեխաների վերաբերյալ ներքին գործերի նախարարության հրապարակած ընդհանուր հրամանի 3-րդ կետում հստակ նշվում էր. «Մինչև 12 տարեկան հայ երեխաներին վերցնել մեր որբանոցները»[3]:

Կարելի է եզրակացնել, որ Էնվերի և մյուսների՝ հայ որբերին հատկապես թուրքական որբանոցներ վերցնելու շահագրգռվածությունը պայմանավորված էր նրանց իսլամացնելու և ձուլելու ցանկությամբ, քանի որ այդ տարիներին Օսմանյան կայսրության տարածքում գործում էին եվրոպական, ամերիկյան միսիոներական որբանոցներ ևս:

Որբ հայ երեխաների իսլամացման և ձուլման հարցով հետաքրքրված մյուս բարձրաստիճան պաշտոնյան հայտնի երիտթուրքական պարագլուխ Ջեմալ փաշան էր, որը զբաղվել է Սիրիայում և Լիբանանում գտնվող հայ որբերի հարցերով: Նրա նախաձեռնությամբ Ային Թուրա ֆրանսիական ճիզվիտական միսիային պատկանող մենաստանում ստեղծվել է որբանոց, ուր հավաքվել են հայ երեխաները՝ իսլամացվելու և թուրքացվելու նպատակով[4]: Ջեմալը հատուկ Ստամբուլից հրավիրել է պանթուրքիստ կին գրող Հալիդե Էդիբին, որը հայտնի է Ցեղաս-

[1] Նույն տեղում, էջ 56-57:
[2] Նույն տեղում, էջ 57:
[3] Նույն տեղում, էջ 67:
[4] *Parseghian N.,* New revelations on the Armenian genocide, http://www.aztagdaily.com/EnglishSupplement/FEA_02012006_0001.htm

պանության տարիներին հայ երեխաների իսլամացման և թուրքացման ակտիվ ջանքերով:

2. Հայ երեխաների իսլամացմանը և թուրքացմանը ներգրավված են եղել նաև թուրքական հասարակության լայն շրջանակները. Հայոց ցեղասպանության տարիներին թուրքերը և քրդերը առևանգել են բազմաթիվ հայ մանուկների և իսլամացրել: Թուրքական կողմը, չկարողանալով ժխտել այս անառարկելի փաստը, միևնույն ժամանակ շրջանառության մեջ է մտցրել այն վարկածը, թե իբր «բարեգութ» թուրքերն ուղղակի հումանիստական զգացումներից ելնելով՝ «փրկել» են աքսորյալ հայ երեխաներին: Կողմ չլինելով բացարձակ գնահատականների՝ հնարավոր ենք համարում ընդունել, որ երբեմն, խիստ սակավ դեպքերում կարելի է չբացառել նման վարկածը, բայց գերակշիռ դեպքերում հայ երեխաներին խլել են բռնությամբ նրանց իսլամացնելու, թուրքացնելու նպատակով և առաջնորդվել են ոչ թե հումանիստական, այլ զուտ անձնական, նաև տնտեսական շահերով: Հասկանալու համար թուրքերի և քրդերի՝ աքսորյալ հայ երեխաներին «փրկելու» և իսլամացնելու շարժառիթները, մեր կարծիքով, ամենևին երկրորդական չեն իսլամա-թուրքական իրականության որոշ նրբերանգներ: Խլելով և ձուլելով հայ երեխաներին՝ թուրքերը և քրդերը մի կողմից՝ ձեռք էին բերում ձրի աշխատուժ, մյուս կողմից՝ հատկապես հայ աղջիկ երեխաները համալրում էին նրանց հարեմները: Մի կարևոր նրբերանգ ևս՝ կապված իսլամա-թուրքական ամուսնական սովորույթների հետ, համաձայն որի՝ տղայի կողմն ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի գումար: Ձեռք բերելով հայ

աղջիկ երեխաներին՝ մուսուլմանները, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ փաստեր, այնուհետև նրանց ամուսնացնում են իրենց տղաների հետ՝ այդպիսով խուսափելով նաև ամուսնական «գլխագին» վճարելու ծանր պարտականությունից: Այժմ ևս Թուրքիայում ծայր առած «էթնիկ ինքնության ճգնաժամի» քննարկման շրջանակներում ի հայտ են գալիս նոր փաստեր Ցեղասպանության ժամանակ առևանգված հայ երեխաների, հատկապես աղջիկների մասին, որոնց և մուսուլմանների ամուսնության հետևանքով ներկայիս Թուրքիայում ձևավորվել է հայկական արյան որոշակի տոկոս ունեցող խառնածինների հոծ բանակ:

Ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայ երեխաների և մասնավորապես նրանց ազատման հարցով զբաղվել է նաև Ազգերի լիգան, որի որոշմամբ ստեղծվել է հետաքննող հանձնաժողով[1], որի զեկույցում նշված են բավական ուշագրավ փաստեր: *«Հայ կանանց ու երեխաներին գերությունից ազատելու աշխատանքները դժվարանում էին թուրքական կողմից մշտապես հարուցվող խոչընդոտների հետևանքով: Մասնավորապես, քրիստոնյա երեխաներին պարտադրում էին մոռացության մատնել իրենց ծագումը, կեղծվում էին նրանց ծննդյան վկայականները, երեխաներին թուրքական անուններ էին տրվում: Թուրքական մանկատներում մեծ թվով երեխաներ կային, որոնք ներկայացվում էին որպես քուրդ, սակայն իրականում նրանք հայեր էին: Նույն դժվարությունները հարուցվում էին նաև գերյալ քրիստոնյա կանանց հայտնաբերելու և ազատագրելու հարցում:*

[1] *Պարսամյան Ս., Միրզոյան Ա.,* Ազգերի լիգայի փաստաթղթերն ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը: http://www.genocide-museum.am/arm/g_brief_09.php

*Ինչպես նշվում է Հինգերորդ համաժողովի զեկույցում, գտնել նրանց գրեթե անհնարին էր, քանի որ* ***«այդ հանցանքին մեղսակից էր ողջ ժողովուրդը»*** (ընդգծումը մերն է- Ռ.Մ.)»[1]*:*

1921թ. օգոստոսի 30-ին Ազգերի լիգայի խորհրդին է ներկայացվում զեկույց, որի տվյալների համաձայն՝ 90.819 հայ երեխա և կին է ազատվել մուսուլմանների ընտանիքներից, և շուրջ այդքան էլ դեռ պահվում է[2]:

Հայ երեխաների բռնի իսլամացման խնդրի համատեքստում առկա են նաև որոշակի փաստեր, որոնք թույլ են տալիս խոսելու Օսմանյան կայսրության, թերևս, վերջին և Թուրքիայի Հանրապետության առաջին՝ հայ որբերից կազմված *ենիչերինեի* մասին: Հայտնի է, որ Օսմանյան կայսրությունը հարուստ է եղել ոչ մուսուլման բնակչության երեխաներին բռնի իսլամացնելու և նրանցից *ենիչերի* ռազմական միավորների ստեղծման փորձով: 20-րդ դարի սկզբներին՝ 1919-1921թթ., տխրահռչակ թուրք զորավար Քազըմ Քարաբեքիրն արևելյան ճակատում՝ Էրզրումում, Կարսում, Սարիղամիշում, Երզնկայում և այլուր, հավաքելով որբ, անտուն, անխնամ հայ երեխաներին, նրանց ռազմական բազմակողմանի կրթություն է տալիս, ինչպես նաև դաստիարակում մոլի «թուրքականության» ոգով, մասնավորապես *«հավանական թշնամիների, առաջին հերթին՝ հայերի նկատմամբ ատելության և «վրեժխնդրության» ոգով»*[3]: Նաև այս երեխաներից է հետագայում կազմավորվում այսպես կոչված *«Գյուրբուզլեր օրդուսու»* զորամիավորումը, որը թարգմանաբար

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] *Ավագյան Ա.,* Թուրքական բանակի բարձրաստիճան սպայության էթնիկական կազմի խնդրի շուրջ, Հայկական բանակ, Երևան, 2007, թիվ 1, էջ 41:

նշանակում է «Ամրակազմների բանակ»: Թուրքական աղբյուրները մանկահավաքության գործընթացը ներկայացնում են որպես Քարաբեքիրի «մարդասիրական զգացումների» դրսևորում: Որոշ աղբյուրներ նշում են, թե վերոհիշյալ բանակում ոչ բոլորն են եղել հայ երեխաներ, հավաքվել են նաև հայերի կողմից սպանված թուրքերի, քրդերի որբ երեխաները: Քարաբեքիրն իր հուշերում նշում է, որ 1922թ. «Երեխաների բանակի» թիվը հասել է 6000-ի[1]: Հայտնի է նաև, որ «Գյուրբուզլեր օրդուսու»-ի շատ անդամներ հետագայում որոշակի դիրքեր են գրավել թուրքական զինվորական համակարգում: Ըստ պատմաբան Արսեն Ավագյանի՝ 1960-70-ական թվականներին նրանցից ոմանք կարևոր դիրքեր են զբաղեցրել թուրքական զինված ուժերում: «Երեխաների բանակ»-ի ներկայացուցիչներից են, օրինակ, գեներալ Մեմդուհ Թաղմաչը, որը 1968թ. եղել է Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար, իսկ 1969-72թթ.՝ Գլխավոր շտաբի պետ, գեներալ Ջեմալ Թուրալը 1964-66թթ. եղել է ցամաքային ուժերի հրամանատար, 1966-69թթ՝ Գլխավոր շտաբի պետ, գեներալ Սեմիհ Սանջարը 1972թ. եղել ցամաքային ուժերի հրամանատար, 1973-78թթ՝ Գլխավոր շտաբի պետ[2]: Թուրքական ազգայնականության ոգով դաստիարկված այս ենիչերիները ջնջված ազգային ինքագիտակցության շնորհիվ կարողացել են բարձր դիրքեր գրավել Թուրքիայի զինված ուժերի համակարգում, ինչը ոչ թուրքերի համար արգելված է առ այսօր:

Այս նույն թեմայի համատեքստում արժե մեջբերել Թուր-

[1] *Karabekir K.,* Çocuk Davamız, c. I, İstanbul, 1995, s. 87. Նույնը տես նաև, *Ավագյան Ա.,* նշվ. հոդ. էջ 41:

[2] *Ավագյան Ա.,* նշվ. հոդ. էջ 42:

քիայի ռազմական համակարգում բարձր դիրքերի և մեծ ճանաչման հասած Աթաթուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենի անունը: Առանց չափազանցության կարելի է ասել, որ Սաբիհա Գյոքչենը լեգենդար անուն է շատ թուրքերի համար, Թուրքիայի առաջին կին օդաչուն է, ավելին՝ աշխարհի առաջին ռազմական կին օդաչուն, որը երկար տարիներ կարևոր դիրք է զբաղեցրել թուրքական ռազմաօդային ուժերի համակարգում, ճանաչվել է աշխարհի հայտնի 20 օդաչուներից մեկը, ընդ որում՝ այս տիտղոսին արժանացած առաջին և միակ կինն է: Սակայն ամենակարևոր հանգամանքը, որ հստակ առանձնացվում է նրա կենսագրության մեջ, այն է, որ 1938թ. Դերսիմի ալևիների ապստամբության ժամանակ ռմբակոծել է ապստամբներին, ինչը մեծապես օգնել է թուրքական բանակին՝ վերահսկողության տակ վերցնել Դերսիմը և ճնշել խռովությունը: Ժամանակի թուրքական մամուլը բազմիցս անդրադարձել է «հերոս Աթաթուրքի» «հերոս աղջկան»:

Թուրքական պաշտոնական աղբյուրներից տեղեկանում ենք, որ Սաբիհա Գյոքչենը ծնվել է 1913թ. մարտի 22-ին Բուրսայում, հայրը Հաֆըզ Մուսթաֆա Իզեթն է, մայրը՝ Հայրիեն: Վաղ տարիքում կորցրել է ծնողներին և մնացել ավագ եղբոր խնամքին: Այնուհետև՝ 1925թ. Բուրսա ժամանած Քեմալ Աթաթուրքը որդեգրում է աղջկան և տանում Անկարա: Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահի կամքով էլ Սաբիհան ստացել է զինվորական կրթություն:

Սակայն այլ և գերազանցապես հայկական աղբյուրները պնդում են, որ Սաբիհա Գյոքչենն իրականում Այնթափի Ջիբին գյուղից է և մեկն է այն հազարավոր հայ երեխաներից, որոնք

Հայոց ցեղասպանության ժամանակ կորցնելով ծնողներին՝ հայտնվել են որբանոցներում: Սակայն Սաբիհա Գյոքչենի վերաբերյալ աղմկահարույց նյութը, որը տպագրվեց 2004թ. փետրվարի 6-ին Ստամբուլի «Ակօս» թերթում, սպասվածից ավելի բուռն արձագանքի արժանացավ: Թերթում հայաստանաբնակ Հռիփսիմե Սեբիլջյանը հայտարարում էր, որ Սաբիհա Գյոքչենը իր հարազատ մորաքույրն է: Այնուհետև նա ներկայացնում էր մոր, այսինքն՝ Սաբիհայի քրոջ պատմությունը: Ըստ Հռիփսիմե Սեբիլջյանի մոր՝ Տիրուհու, իրենք բնիկ այնթափցիներ են, մայրը Մարիամ Սեբիլջյանն է, հայրը՝ Ներսես Սեբիլջյանը, որը սպանվել է 1915թ.: Ինքը՝ Տիրուհին, ունեցել է հինգ եղբայր ու մեկ քույր՝ Խաթունը, որը հենց նույն Սաբիհա Գյոքչենն է: Ցեղասպանությունից հետո մեծ ընտանիքը, ինչպես շատ ուրիշներ, ցրվել է, և Խաթուն ու Տիրուհի քույրերը հայտնվել են որբանոցում, որտեղից էլ Աթաթուրքը վերցրել է հետագայում հայտնի օդաչու Խաթուն Սեբիլջյանին կամ վերանվանյալ Սաբիհա Գյոքչենին[1]: Այս ամենը՝ ընդհուպ մինչև որբանոցում իր և քրոջ բաժանումը, հետագայում զավակներին է պատմել Տիրուհի Սեբիլջյանը, որը 1946թ. Սիրիայից Հայաստան գաղթելուց հետո էլ շարունակում էր փնտրել արդեն մեծ ճանաչում գտած քրոջը: Սակայն նրա բոլոր փորձերն անհաջողության են մատնվում: Սակայն, մեր կարծիքով, Սաբիհա Գյոքչենի հայ լինելը վկայող ամենավստահելի և արժանահավատ աղբյուրը թուրքահայ հայտնի լեզվաբան, պատմաբան Բարս Թուղլաջիի (Բարսեղ Թուղլաջյան) հայտարարությունն է: Հայտնի է, որ նա ժամանակին մտերիմ հարաբերություններ է ունեցել Սաբիհա Գյոքչենի

[1] *Dink H., Lokmagözyan D.,* Sabiha-Hatunun sırrı, Agos, 6.02.2004.

հետ ու «Ակոսի» աղմկահարույց հոդվածից և՛ առաջ, և՛ հետո պնդել է, որ իրականում հայտնի օդաչուն ևս իմացել է իր հայկական ծագման մասին[1]: Սաբիհա-Խաթունը նույնիսկ սովորել է մի քանի հայերեն բառ, որոնք օգտագործել է Բարս Թուղլաջիի հետ զրուցելիս: Երբ համադրում ենք այս փաստերը, որոնք աննշան շեղումներով համընկնում են, հավանական է դառնում, որ իրականում Աթաթուրքի հոգեզավակը հայուհի է և Հայոց ցեղասպանության հազարավոր իսլամացված որբերից մեկը: «Ակօս»-ում տպագրված «Սաբիհա Գյոքչենի գաղտնիքը» հոդվածի հեղինակներն էին Հրանտ Դինքը և Տիրան Լոքմագյոզյանը: Հենց այդ հրապարակումից հետո Թուրքիայում սկսվեց հալածանքների և քննադատությունների մեծ ալիք, որը հետագայում բևեռվեց Հրանտ Դինքի անվան շուրջ: Հոդվածը մի քանի օր հետո արտատպեց թուրքական «Հյուրիյեթ» թերթը, այն երկար ժամանակ մնաց թուրքական մամուլի, քաղաքական գործիչների, հասարակության ուշադրության կիզակետում: Բանը հասավ այնտեղ, որ պաշտոնական խիստ հայտարարությամբ հանդես եկավ Թուրքիայի Գլխավոր սպայակույտը:

Սակայն, եթե զերծ մնանք անհարկի զգացմունքայնությունից, ապա կարող ենք ասել, որ Սաբիհա Գյոքչենը կամ Խաթուն Սեբիլջյանն իր կենսագրությամբ և ռազմաօդաչուական գործունեությամբ, որքան էլ կոպիտ հնչի, համապատասխանում է *ենիչերի* ձևակերպմանը: Նա վաղ հասակում թուրքացվել ու իսլամացվել է, նրան տվել են ռազմական կրթություն և դաստիարակել «թուրքերի հոր» աղջիկը լինելու հոգեբանությամբ: Ազգային ինքնագիտակցության այն ենթադրյալ առկայծումները,

[1] *Bümin K.,* Sabiha Gökçen tartışması -2, Yeni Şafak, 24,02,2004.

որոնց մասին վկայում են տարբեր աղբյուրներ, միշտ ստորադասվել են թուրքական առաջին օղաչուի, այլ խոսքով՝ ենիչերիի կերպարին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ որբերի բռնի իսլամացումը կրել է պետական քաղաքականության բնույթ և գտնվել բարձրաստիճան թուրք ղեկավարների ուշադրության կենտրոնում: Հարկ ենք համարում հատուկ շեշտել, որ թուրքական իշխանությունների այս քայլի մասին ՄԱԿ ցեղասպանության կանխարգելման կոնվենցիայի 5-րդ կետը հստակ նշում է, որ ցեղասպանություն է համարվում մեկ էթնիկ, կրոնական խմբի երեխաներին բռնությամբ մեկ այլ խումբ տեղափոխելը[1]:

[1] http://www.genocide-museum.am/arm/genocide.php

## *Կրոնադարձությունը Թուրքիայի ծպտյալ հայերի շրջանում*

Բռնի կրոնափոխված հայերի շրջանում տեղի են ունենում տարատեսակ գործընթացներ, որոնցից մի քանիսն արժանի են հատուկ ուշադրության: Դրանց թվին է պատկանում քրիստոնեություն վերընդունելու կամ կրոնադարձման երևույթը: Այս խնդիրը գտնվում է նաև թուրքական տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում, և այդ ուղղությամբ աշխատանքներ են կատարվում: Մասնավորապես, թուրքական իշխանությունների նախաձեռնությամբ վերջին տարիներին հանգամանալից հետազոտություն է կատարվել Թուրքիայի իսլամից հրաժարված և այլ կրոն, հիմնականում՝ քրիստոնեություն ընդունած քաղաքացիների մասին: Խնդիրը քննության է առնվել նաև միսիոներական շարժման ակտիվացման համատեքստում: Ներկայացված է, թե Թուրքիայում եկեղեցու վերածված ինչքան տներ են գործում, քանի Ավետարան է բաժանվել մարդկանց և այլն: Սրանով փորձ է արվել պատասխանել նաև բավական աշխույժ քննարկվող «քրիստոնեություն ընդունող թուրքեր» խնդրին, և, ի վերջո, եկել են այն եզրակացության, որ կրոնափոխվածների գերակշիռ մասը ոչ թե թուրքեր են, այլ Թուրքիայում ապրող այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ (հայեր, հույներ, ասորիներ): Մանրակրկիտ ուսումնասիրվել են բնակչության գրանցամատյանները՝ ավելի քան 100 տարվա ընդգրկմամբ, որպեսզի տրվի այս հարցերի հստակ պատասխանը: Արդյունքում՝ հայտնի են դարձել նաև հայերիս համար հետաքրքիր որոշ տվյալներ. այսպես, պարզվել է, որ 1916-2004թթ. Թուրքիայում իսլամից պաշ-

տոնապես հրաժարվել է մոտ 2000 քաղաքացի, մանրամասն ուսումնասիրությունն ի հայտ է բերել, որ նրանց մեծ մասը կամ ավելի կոնկրետ՝ 1340-ը, ծագումով հայեր են, որոնք վերընդունել են քրիստոնեություն[1]: Հետազոտողները եկել են այն եզրահանգման, որ վերոնշյալ 1340 հայերը ոչ թե կրոնափոխ են, այլ կրոնադարձ, քանի որ բնակչության գրանցամատյանների ուսումնասիրության ընթացքում (ընդ որում՝ նաև օսմանյան ժամանակաշրջանի) վեր է հանվել կրոնադարձների մինչև 3-րդ, 4-րդ սերնդի նախնիների էթնիկ և կրոնական պատկանելությունը: Պարզվել է, որ հիշյալ մարդիկ ծագումով հայեր են, որոնց նախնիները Հայոց ցեղասպանության ժամանակ արտաքուստ ընդունել են իսլամ, որպեսզի ազատվեն աքսորից ու կոտորածից, իսկ իրականում շարունակել են գաղտնի պահել քրիստոնեական ավանդույթները, այլ խոսքով՝ ծպտյալ հայեր են:

Ուսումնասիրությունում ամենայն մանրամասնությամբ ներկայացված է անգամ կրոնադարձության աշխարհագրությունը: Այսպես, կրոնադարձությունն ավելի շատ կատարվել է Ստամբուլում, որին հետևում են Դիարբեքիրը, Ադըյամանը, Բաթմանը, Սեբաստիան, Դերսիմը և Մալաթիան: Ստամբուլում կրոնադարձությունն ուսումնասիրել են նաև ըստ թաղամասերի, և արդյունքում պարզվել է, որ կրոնադարձներն ավելի շատ գրանցված են Ստամբուլի Ֆաթիհ թաղամասում (մոտ 150 մարդ), որին հետևում են Շիշլի և Էմինօնյու թաղամասերը: Ավելորդ չի լինի ներկայացնել նաև «ծպտյալ» հայերի կրոնադարձության մի քանի կոնկրետ փաստ, որոնք տեղ են գտել հիշյալ աղբյուրներում: Դրանցից պարզ է դառնում, որ երբեմն կրոնա-

[1] *Başyurt E.,* նշված աշխ., էջ 64:

դարձվում են ամբողջ ընտանիքով, ազգականներով: Ի դեպ, գրեթե բոլոր կրոնադարձված հայերին ներկայացնելիս տրվում է նաև նրանց տոհմածառը, և հետաքրքիր օրինաչափությամբ ծնողների, երբեմն էլ պապերի ու տատերի ոչ հայկական անուններին հետևում են արդեն ավելի ավագ սերնդի նախնիների հայկական անունները: Ժամանակագրորեն դասակարգելու պարագայում ցեղասպանությունից առաջ ծնվածների գերակշիռ մասը կրում է հայկական, իսկ արդեն 1915-ից հետո՝ գերազանցապես ոչ հայկական անուններ, այսինքն՝ սրանով կարելի է պատկերացում կազմել նաև առերես իսլամացած հայերի ծպտյալ կյանքի սկզբնավորման ժամանակաշրջանի մասին.

1. 1971 թվականին Թունջելի (Դերսիմ) նահանգի Դոլուքյուփ գյուղում գրանցված, 1947թ. ծնված էթնիկ հայ Սեֆեր Աքյուզը, որ շրջապատում հայտնի է եղել որպես մուսուլման, դիմելով քաղաքացիական հարցերով Ստամբուլի 1-ին ատյանի դատարան, հրաժարվել է իսլամից և ընդունել քրիստոնեություն: Այնուհետև մի քանի տարվա ընթացքում նույն ընտանիքից 34 հոգի ևս ընդունել են քրիստոնեություն:
2. 1995 թվականին Յոզղաթ նահանգի Բողազլըյան գավառում գրանցված Հաջի Սարըքայան ընդունել է քրիստոնեություն, իսկ նրանից մի քանի տարի առաջ և մի քանի տարի հետո նույն քայլին են դիմել նաև նրա 14 ազգականները: Վերջինը քրիստոնեության է դարձել Օգնուր Սարըքայան, 2003 թվականին:
3. Սասունում գրանցված Ջենգիլների ընտանիքից 1975-2003թթ. 9 մարդ ընդունել է քրիստոնեություն:

4. Պատահում է նաև, որ կրոնի հետ միասին փոխում են նաև անունները և վերցնում հայկական անձնանուններ: Օրինակ, Էլյազիգի նահանգի Քեբան գավառում գրանցված Թյուրքան Աքչան, 1995 թվականին ընդունելով քրիստոնեություն, փոխում է նաև անունը՝ դառնալով Մարիամ Սարգսյան:
5. 1993 թվականին Թունջելիում գրանցված 84-ամյա Մուսթաֆա Աթեշը, որը մասնակցել է նաև 1937թ. Դերսիմի ապստամբությանը՝ «դարբին Մուսթաֆա» անունով, վերադարձել է քրիստոնեության:
6. Կրոնադարձվածների ցուցակում մեր հանդիպած տարիքով ամենափոքրը 2004 թվականի փետրվարի 19-ին ծնված Մելիսա Չաքըրն է, որի ծնողների (Սյուզան և Սարգիս)՝ 2004 թվականի մայիսի 27-ի դիմումի համաձայն, փաստաթղթերում փոխվել է նրա կրոնական պատկանելությունը[1]:

Սակայն պատահում է նաև, որ միևնույն ընտանիքից կրոնադարձվում են ոչ բոլորը, և ստացվում է տարօրինակ պատկեր, երբ, օրինակ, հինգ եղբայրներից երեքը, բացահայտելով իրենց հայկական ծագումը, ընդունել են քրիստոնեություն, իսկ մյուս երկու եղբայրները շարունակում են մնալ մուսուլմաններ:

Թուրքական աղբյուրները մի հետաքրքիր նրբերանգի վրա էլ են ուշադրություն հրավիրում՝ արձանագրելով, որ ծպտյալ հայերը ձգտում են ձեռք բերել մեկից ավելի գրանցում, բացի այդ, հաճախ փոխում են գրանցումը՝ փորձելով «կորցնել հետքերը»[2]: Հայտնի է, որ թուրքական համապատասխան գերատես-

[1] *Başyurt E.,* Asıl dinlerine dönüyorlar, Aksiyon, 14,03,2005, # 536, s. 34.

[2] Նույն տեղում, էջ 36:

չություններում կրոնափոխ, որդեգիր հայերն ու նրանց սերունդները հատուկ գրանցված են, ինչն արված է նաև այն նպատակով, որպեսզի իշխանությունների համար անվստահելի այս խմբին պատկանող մարդիկ պատասխանատու պաշտոններ չզբաղվեն և մնան մշտական հսկողության տակ:

Բռնի իսլամացված հայերի կրոնադարձության խնդրին է անդրադարձել նաև Ստամբուլի Գեդիկփաշա թաղամասի Հայ Ավետարանական եկեղեցու հովիվ, վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն: «Ազդակ» թերթին տված հարցազրույցում նա նշել է. *«Մենք գաւառներուն մէջ աշխատանք կը տանինք, հաւատքի և կրօնին զօրութեամբ մեր արմատներուն, մեր պատմութեան հետ առնչակից դարձնել բոլոր այն հայերը, որոնք այսօր, կամքէ անկախ պատճառներով, հեռացած են մեզմէ: Երկրի բնակչութեան մեծամասնութեան կրօնին՝ իսլամութեան ազդեցութեան տակ գտնուող հայերը ճնշուած են և՝ իրենք իրենց մէջ ամփոփուած: Քաջութիւն չունին իրենց ինքնութիւնը հաստատելու: Երբ Պոլիս կու գան և կ՚այցելեն մեզի, այն ատեն է, որ կը յայտնաբերենք, թէ որքան մեծ թիւով հայեր կան այսօր Թուրքիոյ տարածքին, որոնք դժբախտաբար օրէ օր կը ձուլուին և կը կորսուին թուրքերուն մէջ: Մեր հաշիւներուն համաձայն, անոնց թիւը աւելի քան մէկ միլիոն է»*[1]:

Վերապատվելին շեշտել է նաև, որ հատկապես վերջին տարիներին Թուրքիայի արևելյան գավառներում բազմաթիվ երիտասարդներ վերընդունել են քրիստոնեություն. *«Վերջին քանի տարիներու ընթացքին Անատոլիայէն (Թուրքիոյ ներքին նահանգնե-*

[1] Հարցազրույց վերապատուելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ http://www.dnforum.am/showpost.php?p=14426&postcount=20

*րը - Տիգրիս) երիտասարդներ եկան մեր եկեղեցին, որովհետև իրենց մեծ հայրերն ու մեծ մայրերը ժամանակին հայ քրիստոնեաներ եղած են, որոնք 1915-ին, իրենք զիրենք ազատելու համար թուրքին յաթաղանէն, իսլամութիւնը ընդունած են։ Այս երիտասարդները անմիջապէս որ մեր եկեղեցւոյ անդամ կը դառնային, այսինքն կ'ընդունէին քրիստոնէութիւնը, կը փոխէին նաև իրենց թրքական անունները։ Ամբողջովին հայանալ կ'ուզէին։ Այսօր մեր եկեղեցւոյ վարչութիւններուն մէջ անգամ կը գտնես Ուրֆայէն, Մարաշէն և այլ շրջաններէ հայեր, որոնք վերջին տարիներուն միայն վերադարձած են իրենց հայկական արմատներուն։ Քանի մը ամիս առաջ Էրզրումէն այցելու մը ունեցայ, դարձեալ իսլամացած հայ մը, որ գիտակից էր իր հայ և քրիստոնեայ ըլլալուն, անոր միջոցով կարելի եղաւ աւետարաններ ղրկել իրենց գիւղը և այդպիսով տարածել Աստուծոյ ճշմարիտ խօսքը»*[1]։

Ծպտյալ հայ քրիստոնյաների մասին տվյալների ենք հանդիպում նաև այլ գրավոր ու բանավոր աղբյուրներում: Օրինակ՝ Ադըյամանի շրջանի գյուղերից մեկում ապրող ծպտյալ հայերի մի ընտանիք խոստովանում է, որ առայսօր հալածվում են ինչպես շրջապատում, այնպես էլ պետական հաստատություններում, դպրոցում և այլուր։ Եվ սա՝ չնայած այն բանին, որ պաշտոնապես գրանցված են որպես մուսուլմաններ։ Բավական հետաքրքիր է ընտանիքի տարեց մոր խոստովանությունը, որ իրենք, ճիշտ է, հաճախում են մզկիթի վերածված նախկին հայկական եկեղեցի և նամազ անում, բայց իրենց աղոթքով դիմում են Հիսուս Քրիստոսին։

Ծպտյալ քրիստոնյաների կամ կրոնադարձների ցուցակում

[1] Նույն տեղում։

երբեմն հանդիպում են նաև Թուրքիայում բավական հայտնի անուններ, որոնցից է, օրինակ, Իզմիրի «Սեպտեմբերի 9-ի համալսարանի» նախկին ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Էմին Ալըջըն: Նրա տոհմածառի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոր անունը Մանուֆեր է, սակայն պապերից մեկի անունը Հովհաննես է, իսկ մյուսինը՝ Արթին (Հարություն)[1]: Ուշագրավ է նաև, որ Էմին Ալըջըի երկու եղբայրները՝ 1946թ. ապրիլի 15-ին ծնված ավագ եղբայր Իբրահիմ Ալըջըն Թուրքիայի նախարարների խորհրդի 1988թ. դեկտեմբերի 23-ի թիվ 88/13631 որոշմամբ, իսկ 1956թ. դեկտեմբերի 20-ին ծնված եղբայր Ազիզ Ալըջըն նախարարների խորհրդի 1989թ. ապրիլի 14-ի թիվ 89/13978 որոշմամբ զրկվել են քաղաքացիությունից: Պատճառը նրանց «անվստահելի լինելն է»: Այժմ Ալըջըի երկու եղբայրներն ապրում են Վիեննայում: Հետաքրքիր է, որ ռեկտոր Էմին Ալըջըն իր կրոնական և էթնիկ պատկանելության շուրջ ծավալված քննարկումների ժամանակ ինքնախոստովանական հայտարարություն է արել՝ ասելով. «Ես քրիստոնյա եմ»[2], ավելացնելով, որ ինքը լավ գիտակցում է իր հայտարարության վատ հետևանքների մասին: Նա պնդել է, որ Թուրքիան լաիկ երկիր է, և ամեն ոք ունի կրոնի ու դավանանքի ազատության իրավունք: Սակայն, ընդունելով իր քրիստոնյա լինելը, նա կտրականապես ժխտում է հայ լինելու պնդումները, իսկ լրագրողների բերած փաստարկներն իր տոհմածառի և, մասնավորապես, պապերի հայկական անուններ ունենալու վերաբերյալ՝ անպատասխան է թողնում:

[1] Milli gazette, 28,09,2003.
[2] Vakit, 14,09,2003.

Ծպտյալ հայերի կրոնադարձության դեպքերին անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել հատկապես հետևյալ երկու կարևոր հանգամանքի վրա.

1. Ըստ իսլամի՝ այն մարդիկ, որոնք, ընդունելով մուսուլմանություն, այնուհետև հրաժարվում են դրանից, ենթակա են մահապատժի: Սակայն քանի որ Թուրքիան կրոնապետություն չէ և լաիկ է, ուստի այդ պատիժն իրավական ուժ չունի, սակայն դա չի բացառում այն, որ իսլամից հրաժարվածները կրոնական ծայրահեղականների կողմից կարող են որպես թիրախներ ընկալվել: Այսինքն՝ այս կրոնադարձությունը նույնիսկ Եվրամիությանն անդամակցել ձգտող Թուրքիայում պետք է խիզախություն համարել:
2. Հաճախ էթնիկ պատկանելությունը ստորադասվում է կրոնական պատկանելությանը, և «հայ» ու «քրիստոնյա» հասկացությունները նույնացվում են: Այդ պատճառով էլ ծպտյալ հայերի կրոնադարձությունն ինչ-որ առումով կարելի է համարել նաև վերադարձ ազգային ակունքներին՝ ազգադարձության: Հայոց ցեղասպանությունից ավելի քան 90 տարի հետո էլ, ապրելով և մաքառելով դժվարին պայմաններում, առերես կրոնափոխված ծպտյալ հայերը կարողացել են պահպանել ազգային-կրոնական նկարագրի շատ շերտեր և դրանք փոխանցել սերունդներին:

### *Ներէթնիկ ինքնագիտակցության դրսևորումներ Թուրքիայի ծպտյալ հայերի շրջանում. ներքին ամուսնություններ*

Կարելի է ասել, որ Թուրքիայի բռնի կրոնափոխված հայության մեջ էթնիկ և ազգային ինքնագիտակցության մակարդակով ու նկարագրով առանձնանում է ծպտյալ հայերի խումբը, որն ի տարբերություն իսլամացված հայերի այլ խմբերի՝ ձգտում է անաղարտ պահել նաև էթնիկ նկարագիրը: Ուշագրավ է և, միևնույն ժամանակ, կարևոր, որ այս խմբի հայերի ընտանեկան կենցաղում ևս պահպանվել են ներէթնիկ ինքնագիտակցության հետաքրքիր դրսևորումներ, որոնցից կուզենայինք առանձնացնել հատկապես ներքին ամուսնությունների սովորույթը: Ի՞նչ է սա ենթադրում. ծպտյալ հայերն արտաքուստ մուսուլման ներկայանալով՝ ոչ միայն գաղտնի շարունակում են ազգային-կրոնական որոշ սովորույթներ, այլև ձգտում են ամուսնանալ իրենց նման ծպտյալ հայերի հետ: Ընդ որում՝ ներքին ամուսնությունների ժամանակ երկրորդ պլան են մղվում տարիքային, դասակարգային, սոցիալական և այլ խոչընդոտներ: Այսինքն՝ ծպտյալ հայերը, կարելի է ասել, էթնիկ ինքնապահպանման բնազդով ձգտում են պարտադիր ամուսնանալ հայի հետ: Ներքին ամուսնությունների ինստիտուտը ենթադրում է նաև ծպտյալ հայերի շրջանում որոշակի ցանցի առկայություն, որը թույլ է տալիս նրանց, թեկուզ հեռակա, ճանաչել միմյանց: Երբեմն այս վարկածի օգտին է խոսում նաև ներքին ամուսնությունների աշխարհագրությունը, երբ բավական հեռու գյուղերի բնակիչներ ամուսնանում են իրար հետ: Որոշակի փաստեր կան, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ հատկապես ինքնաբացահայտ-

ված և կրոնադարձված ծպտյալ հայերի շրջանում եզակի են արձանագրվում նաև բացահայտ հայերի հետ ամուսնություններ: Նման օրինակներից է աղըյամանցի Սաղըք Բաքըրջըօղլուն, որն ապրելով Ստամբուլում՝ պաշտոնապես կրոնադարձվել է, ընդունելով իր պապերի կրոնը՝ քրիստոնեությունը, և ամուսնացել հայաստանցի մի աղջկա հետ, իսկ որդուն՝ Անդրանիկ Վարդանին, ուղարկել հայկական դպրոց:

Ծպտյալ հայերի մեջ տարածված ներքին ամուսնությունների սովորույթի և փոխադարձ ճանաչման հնարավոր ցանցի գոյության որոշ փաստերի ենք հանդիպում նաև հայկական թեմատիկայով գրված ժամանակակից թուրքական փաստագեղարվեստական գրականության մեջ: Օրինակ, գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընի «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստագեղարվեստական գրքում քյահթացի ծպտյալ հայի զավակ, Գերմանիայում բնակվող Հաջը Իբրահիմը, խոսելով ներքին ամուսնությունների մասին, ասում է. *«Մեր մօտ ամուսնութիւնը միշտ «մերիններուն» (ծպտյալ հայեր - Ռ.Մ.) միջեւ տեղի կ'ունենայ: Դուրս ոչ աղջիկ կը տրուի, ոչ ալ դուրսէն աղջիկ կ'առնուի»*[1]: Իսկ երբ նրանց դրացի քուրդը խնդրել է Հաջը Իբրահիմի քրոջ ձեռքը, նրա հայրը մերժել է, սակայն վախենալով, որ կարող են աղջկան փախցնել, ամուսնացրել է «մերոնցից» ճաղատ, տգեղ, աղքատ և որբ մի հովվի հետ: Քեմալ Յալչընի նույն գրքում ծպտյալ հայուհի Սուլթան Բաքըրջըգիլը պատմում է, որ իր պապը չորս տղաներին էլ ամուսնացրել է ծպտյալ հայերի հետ, իսկ 12-ամյա աղջկան, վախենալով, որ քրդերը կփախցնեն,

[1] *Եալչըն Ք.,* Հոգիս քեզմով կը խայտայ, Երևան, 2003, էջ 350:

ամուսնացրել է 30-ամյա ծպտյալ հայի հետ, դրանով իսկ, ըստ իրեն, փրկել աղջկան[1]:

Պատահական չէ, որ ծպտյալ հայերի շրջանում տարածված ներքին ամուսնությունների սովորույթը շարժել է նաև թուրք գիտնականների հետաքրքրությունը: Նրանք այդ հարցն ուսումնասիրել են՝ ձեռքի տակ ունենալով բազմաթիվ հնարավորություններ և փաստեր: Մանրակրկիտ հետազոտելով կրոնադարձված հայերի տոհմածառերը՝ նրանք ի հայտ են բերում փաստեր, որոնք ապացուցում են, որ հաճախ և, իհարկե, ոչ պատահաբար ամուսնություններ են տեղի ունենում ծպտյալ հայերի սերունդների միջև: Ծպտյալ հայերի ներքին ամուսնությունների մասին թուրքական աղբյուրներում հանդիպած օրինակներից մեջբերենք մի քանիսը.

1. Ծպտյալ հայ Չեթին Բոզքայան (ծնվ. 1923թ.), որը 1990թ. 67 տարեկանում կրոնադարձվել է՝ ընդունելով քրիստոնեություն, ամուսնացած է հայուհի Շաքե Բոզքայայի հետ: Ներկայացված է նաև նրանց տոհմածառը, որից պարզվում է, որ նրանց ծնողները ծագումով հայեր են: Ավելին, նրանց որդին՝ Գյուլա Արփադ Բոզքայան ևս 1990թ. 29 տարեկանում վերընդունում է քրիստոնեություն: Հետաքրքիր է, որ Գյուլա Արփադ Բոզքայան ամուսնանում է 1967թ. ծնված Նարգիզ Բոզքայայի հետ, որի ծնողները նույնպես ծագումով հայեր են: Նարգիզ Բոզքայան ևս 1996թ. վերընդունում է քրիստոնեություն:
2. Ահմեթ Քարաքուշի, որի ծնողները հայեր են եղել, կինը՝ Տիգրանուհին և որդին՝ Պերճը, 1986թ. դատարանի որոշ-

[1] Նույն տեղում, էջ 359:

մամբ վերադառնում են քրիստոնեության: 1989թ. կրոնադարձվում է նաև Ահմեթ և Տիգրանուհի Քարաքուշների աղջիկը՝ Ֆաթման, իսկ նրանց մյուս չորս երեխաները մնում են մուսուլման: Սակայն մուսուլման մնացած երեխաներից մեկը՝ Զեմիլեն, ամուսնանում է 1959թ. ծնված Աթափ Քաբեի հետ, որի ծնողները սասունցի հայեր են՝ Սահակն ու Մարիամը: Հետաքրքիրն այն է, որ այս զույգն իրենց տասներեք երեխաներին գրանցում է որպես քրիստոնյաներ:

3. 1966թ. քրիստոնեություն ընդունած և 1967-ին հայ քրիստոնյա Անդրանիկ Չաքըջըի հետ ամուսնացած Ֆիդան Դեմիրի ծնողները նույնպես ունեն հայկական ծագում, ավելին՝ աղբյուրում ներկայացված են նաև նրա հորական տատի ու պապի անունները՝ Մանուկ և Մարիամ: 1996թ. Ֆիդան Դեմիրն անվանափոխվում է՝ ընդունելով Սեդա անունը, իսկ երեխաներին՝ Թալինին և Արային, գրանցում որպես քրիստոնյաներ: Թուրքական աղբյուրները նշում են, որ Ֆիդան Դեմիրի քույրերը՝ Էմինեն և Այշեն, համապատասխանաբար 1962 և 1990թթ., ընդունում են քրիստոնեություն:
4. Ծպտյալ հայի որդի Դավիթ Թաշդեմիրը 1955թ. հրաժարվելով իսլամից՝ ընդունել է քրիստոնեություն: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, Դավթի ծնողները Մուսթաֆան և Ֆադիմն են, սակայն հոր ծնողների անուններն են Արթին (Հարություն) և Սրբուկ, իսկ մոր ծնողներինը՝ Առաքել և Մարիամ: Դավիթ Թաշդեմիրն ամուսնացել է հայ քրիստոնյա Սաթենիկ Թաշդեմիրի հետ, իսկ Դավթի երկու եղբայրները՝ ծպտյալ հայեր Հայրիեի (որի ծնողներն են Հովսեփը և Լուսինենն) և Հաթիջեի (որի ծնողները Կիրակոսը

և Աննան են): Դավթի երրորդ եղբայրն ամուսնացել է հայ քրիստոնյա Սրբուկի հետ: Դավիթ Թաշդեմիրի զարմիկներից Գուլյա Թաշդեմիրը 1992-ին, 66 տարեկանում, Սարգիս Թաշդեմիրը 1982-ին, 48 տարեկանում, Էլմաս Թաշդեմիրը 1977-ին, 33 տարեկանում, վերադարձել են իրենց նախնիների կրոնին և ընդունել քրիստոնեություն: Դավիթ Թաշդեմիրի մյուս եղբայրները, զարմիկները դեռևս շարունակում են գրանցված մնալ որպես մուսուլման:

5. Թունջելիի (Դերսիմ) Այդընլըք գյուղի բնակիչ, ծպտյալ հայ (շրջապատում որպես ալևի ներկայացող), 1944թ. ծնված Ազիզ Չելիքը 1972թ. փոխում է կրոնը՝ ընդունելով քրիստոնեություն, միաժամանակ վերցնում է նաև Սարգիս անունը: Սարգիս Չելիքը ամուսնանում է 1949թ. Արաբկիրում ծնված հայ քրիստոնյա Բյուլբյուլ Յըլընջըօղլուի հետ: Նրանց երկու տղաներն էլ՝ 1972թ. ծնված Սևան Չելիքը և 1977թ. ծնված Սավաշ Չելիքը, քրիստոնյաներ են:
6. Կրկին Թունջելիի Այդընլըք գյուղի բնակիչ, շրջապատում որպես ալևի հայտնի, 1938թ. ծնված Յըլդըզ Ջանիքը, որի նախնիները նույնպես հայեր են, 2004թ. հունվարի 15-ին վերընդունել է քրիստոնեություն: Նրա որդին՝ 1962թ. Ստամբուլում ծնված Մահմութը, 1992-ին ընդունում է քրիստոնեություն: 1980-ին այդ նույն քայլին է դիմում նաև Յըլդըզի քույրը՝ Փերիհանը, անվանափոխվելով Փիրուզ[1]:

Հայ ճարտարապետության պատմության մասնագետ Սամվել Կարապետյանը, անդրադառնալով ներքին ամուսնու-

[1] *Başyurt E.,* Asıl dinlerine dönüyorlar, Aksiyon, 14,03,2005, # 536, s. 35-36.

թյունների խնդրին, նշում է. «*Արևմտյան Հայաստանում մահմեդական հայերը, եթե իրենք զտնում են, որ հայ են, միշտ խնդիրներ ունեն տեղի քրդերի հետ՝ նույնիսկ արյունահեղության մակարդակի։ Քրդերը նեղվում են, որ մահմեդական հայերն իրենց աղջիկ չեն տալիս, աղջիկ վերցնում են, բայց չեն տալիս*»[1]։

Վերապատվելի Գրիգոր Աղաբալօղլուն ևս տվյալներ է փոխանցում իսլամացված, ծպտյալ հայերի շրջանում առկա ներքին ամուսնությունների մասին. *«Կը յիշեմ, ասկէ քանի մը տարի առաջ, Խարբերդի շրջանէն այցելու մը ունեցանք, որ եկած էր մեզ մօտ վկայելու, թէ Խարբերդի շրջանին մէջ կան երկու գիւղեր, որոնք ծագումով ամբողջութեամբ հայ են, և յայտնեց, թէ գիւղին զաւակները իրարու հետ ամուսնութիւն կը կնքեն պարզապէս իրենց արիւնը հայ պահելու համար»*[2]։

Զարմանալի և, միևնույն ժամանակ, ուշագրավ է, որ ներքին ամուսնությունների սովորույթը պահպանվում է ոչ միայն ծպտյալ հայերի շրջանում. այդ մասին վկայող փաստերի երբեմն հանդիպում ենք նաև իսլամացված, ուծացած հայերի և նրանց հետնորդների մեջ։ Օրինակ, թուրք հայտնի լրագրողներից Ամբերին Զամանը իր հոդվածում խոսելով Թոքաթի իսլամացված հայության և նրա խնդիրների մասին՝ առանձնացնում է նաև ներքին ամուսնությունների հարցը։ Ըստ հոդվածագրի, Թոքաթի իսլամացված հայերի ուծացած հետնորդները, ձգտելով պահպանել ներքին ամուսնությունները, հաճախ բախվում են լուրջ խնդիրների, քանի որ հայության այդ սակավաթիվ

[1] Հարցազրույց Սամվել Կարապետյանի հետ
http://www.javakhk.net/forum/lofiversion/index.php/t748.html
[2] Հարցազրոյց վերապատուելի Գրիգոր Աղաբալօղլուի հետ
http://www.dnforum.am/showpost.php?p=14426&postcount=20

հետնորդների մեծ մասն ազգականներ են, իսկ նրանց շրջանում խստորեն պահպանված «յոթ պորտի» սովորույթը թույլ չի տալիս ազգականների միջև ամուսնություններ[1]: Ավելորդ չէ նշել, որ Թուրքաթի իսլամացված հայերը համարվում են իրապես թուրքացած, ուծացած, արմատներից հեռացած, սակայն փաստորեն նրանց մեջ նույնպես նկատվում են ներէթնիկ ինքնազիտակցության տարրեր:

Ստամբուլի «Ակօս» թերթի լրագրող Բագրատ Էստուգյանը նույնպես նշում է, որ իրենց հայկական ծագումը մերժողներն անգամ պահպանում են ներքին ամուսնություններ. *«Հանկարծ չլինի, որ ուրիշ գերդաստանից աղջիկ առնեն, տղերքը պետք է նույն գերդաստանի հետ ամուսնանան: Նրանք մտածում են, որ իրենք տարբեր են, ուրիշներին չպետք է խառնվեն: Անունը հստակ չէ, հա՞յ ենք, քրիստոնյա՞ ենք, թե՞ այն ենք, թե՞ այս ենք, բայց նրանք իրենց տարբեր են համարում»*[2]:

Ծպտյալ հայերի մեջ շարունակվող ներքին ամուսնությունների հետ կապված մի նրբերանգ ենք վերջերս գրանցել անձնական շփումների արդյունքում: Այսպես, Խարբերդի գյուղերից մեկից Ստամբուլ տեղափոխված մի կրոնափոխ հայ կնոջ հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ցանկանում է ամուսնացնել երկու որդիներին և հարսնացու է փնտրում: Մեր հարցին, թե արդյոք ցանկանում է հայ հարսնացուներ գտնել, նա պատասխանեց. *«Ոչ, հայերը մեզ հետ չեն ամուսնանա»:* Այդ դեպքում, հարցրի, երևի մուսուլման թուրք կամ քուրդ հարսնացու է փնտրում, որին հետևեց նրա պատասխանը. *«Ոչ, ցանկա-*

[1] *Zaman A.,* Tokat'ta utanç manzarası, Taraf, 11.7.2008.
[2] Հարցազրույց Բագրատ Էստուգյանի հետ, http://www.hetq.am/arm/society/8217/

*նում եմ մեզ նման ընտանիքներից հարսնացուներ գտնել»*։

Այսպիսով, կարելի է ասել, որ ներէթնիկ ինքնագիտակցության պահպանվող այս դրսևորումը՝ ներքին ամուսնությունները՝ այն կարևոր գործոններից են, որ թույլ են տալիս խոսել ծպտյալ հայերի շրջանում էթնիկ պատկանելության մասին հիշողության և այն շարունակելու ձգտման մասին։

## *Վերապրած հայեր. Էրմենի Վարթո աշիրեթը*

Հայոց ցեղասպանությունը պատճառ է դարձել ոչ միայն 1 500 000 հայերի բնաջնջման, հազարավորների բռնի իսլամացման, այլև անձնական և ընտանեկան բազմաթիվ ողբերգությունների: Ինքնապահպանման և ապրելու բնազդը հայերին մղել է նաև անհավանական քայլերի: Բազմաթիվ օրինակներից մեկն է «Էրմենի Վարթո աշիրեթ» անունը կրող հայկական գերդաստանի պատմությունը, որը կարողացել է վերապրել ծանրագույն պայմաններում, և որի գոյության փաստն անգամ տասնամյակներ շարունակ հայտնի չի եղել:

Հայոց ցեղասպանության ժամանակ աքսորվել է նաև Ջիզրե գավառում բնակվող հայկական Վարթո ցեղախումբը, որը բազմամարդ և հարուստ է եղել: Ճանապարհին հարձակման ենթարկվելով՝ ցեղախմբի հինգ ընտանիքներ փախչում և ապաստան են գտնում հայտնի Ջուդի սարում: Ընտանիքներից մեկը կոչվել է «Մալա Վարթո», այսինքն՝ Վարթոյի տուն: Լեռան վրա ապաստանած ցեղախումբը շուրջ 25 տարի արտաքին աշխարհից մեկուսացված ապրել է այնտեղ՝ տեղյակ չլինելով, թե այդ տարիներին ինչեր են կատարվել Թուրքիայում և ընդհանրապես աշխարհում: Անգամ չեն իմացել, որ փլուզված Օսմանյան կայսրության փոխարեն ձևավորվել է Թուրքիայի Հանրապետությունը: Ցեղախումբը զբաղվել է անասնապահությամբ և բազմացել բացառապես ներքին ամուսնություններով: Ցեղասպանությունից շուրջ երեք տասնամյակ հետո միայն հայկական ցեղախումբը համարձակվել է իջնել սարից և ականատես եղել, որ իրենց նախկին հողերին տիրացել են քրդերը: Հետզհետե

Վարթո ցեղախումբը յուրացրել է քրդական կենսակերպը, հագել քրդական տարազ, խոսել քրդերեն, սակայն այս ամենով հանդերձ խստորեն պահպանել է ցեղային կյանքի ներփակ բնույթը, մասնավորապես՝ ներքին ամուսնությունները, ինչը հնարավորություն է տվել գոնե էթնիկապես չձուլվել քրդերի հետ: Հետաքրքիր է, որ քրդախոս հայերը, ըստ տարբեր աղբյուրների, եղել են ծայրահեղ կրոնասեր և ձգտել ամեն կերպ պահպանել ու շարունակել քրիստոնեական սովորույթները: Չնայած քրդախոս Վարթո աշիրեթի հայերը մայրենիով միայն մի քանի բառ են հիշել և անգամ քրդերեն աղոթել, սակայն ամուսնությունների ժամանակ հրավիրել են հարևան գյուղերի թեկուզ ասորի, նեստորական, քելդանի քահանաներին, որոնք կատարել են պսակի քրիստոնեական արարողություն[1]: Քրդախոս հայերը, տասնամյակներ շարունակ ապրելով սարերում, անմարդկային պայմաններում, այնուհետև քրդական միջավայրում, պահպանել են էթնիկ ինքնագիտակցությունը և հստակ գիտակցել իրենց տարբերությունը շրջապատի քրդերից:

Տասնամյակներ հետո Վարթո ցեղախմբի գոյության փաստը հայտնի է դարձել նաև Ստամբուլի հայկական համայնքում, և Հրանտ Գյուզելյան քահանան այցելել է ցեղապետ Սիյամենթ Յաղբասանին: Երկար ընդմիջումից հետո սա վերապրած հայերի առաջին հանդիպումն է եղել հայ հոգևորականի հետ: Նրա այցի շնորհիվ հայկական ցեղախումբը տեղեկացել է, որ Թուրքիայում, իրենցից բացի, դեռ քրիստոնյա հայեր կան: Քահանա Գյուզելյանն առաջարկել է նաև ցեղապետ Սիյամենթին աշիրեթի երեխաներին սովորելու ուղարկել Ստամբուլ, որտեղ նրանք

[1] *Akar R.,* Cudili Rakelin masalı, Tempo, 25.01.2007, s.7.

հայ-քրիստոնեական կրթություն կստանային: Վարթոյի ցեղապետ Սիյամենթ Յաղբասանն ունեցել է 13 երեխա, որոնք կնոջ՝ Դելալի մահից հետո դժվարին վիճակում են եղել: Բացի այդ, ինչպես նշեցինք, Վարթո աշիրեթը չափազանց կրոնասեր էր, նույնիսկ երեխաները հաճախ անվանակոչվել են Սուրբ գրքում հանդիպող անուններով, և հայ հոգևորականի առաջարկը՝ երեխաներին կրթություն տալու հետ կապված, մեծ սիրով են ընդունել: Ցեղապետ Յաղբասանն առաջինն է օրինակ ծառայել իր ցեղակիցների համար և համաձայնել Ստամբուլ ուղարկել 9-ամյա աղջկան՝ Ռաքելին: Այս օրինակին հետևել են նաև ցեղախմբի մյուս անդամները, և քրդախոս շուրջ 25 երեխա ուղարկվել է Թուզլայի հայկական որբանոց: Մայրենին սովորելու և արմատներին վերադառնալու համար Ստամբուլ մեկնած աղջիկը՝ Ռաքելը, հետագայում դառնում է Հրանտ Դինքի կինը: Որբանոցում Վարթո ցեղախմբի երեխաները բազմակողմանի կրթություն են ստանում, այնուամենայնիվ, նրանց և որբանոցի այլ հայ երեխաների միջև սկզբնական շրջանում ձևավորվում է խորթության ու օտարության մթնոլորտ, որը, բնականաբար, կապված էր նաև նրանց մշակութային տարբերությունների հետ: Որբանոցում ուսումն ավարտելուց հետո Վարթո ցեղախմբի 25 երեխաները չեն ցանկանում վերադառնալ գյուղ, և աշիրեթը, ցեղապետ Սիյամենթի գլխավորությամբ, որոշում է տեղափոխվել Ստամբուլ: Մեր կարծիքով, այս հարցում զգալի դեր են ունեցել նաև Վարթո ցեղախմբի հայերի և նրանց հողերը բռնազրաված քրդերի շարունակական բախումները, ինչպես նաև ազգային-կրոնական ինքնության պահպանման աննպաստ պայմանները: Այսպես, 1978թ. շուրջ 500 հոգանոց Էրմենի Վար-

թո աշիրեթը տեղափոխվում է Ստամբուլ: Հայկական համայնքն աջակցություն է ցուցաբերում նրանց, պատրիարքարանի և հայ գործարարների ջանքերով նրանք տեղավորվում են աշխատանքի: Ուշագրավ է, որ անգամ Ստամբուլում Վարթո աշիրեթը չի փոխում ներցեղային սովորույթները, այդ թվում և ներքին ամուսնությունները: Սա արտահայտվում է նաև այն ժամանակ, երբ Հրանտ Դինքը ցանկություն է հայտնում ամուսնանալ Ռաքելի հետ, որին ճանաչել է դեռևս որբանոցից: Վարթո ցեղի երիտասարդները սպառնում են Դինքին և պահանջում հրաժարվել այդ մտքից: Հարցը կարգավորվում է միայն այն ժամանակվա Հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանի միջամտությամբ: Նա անձամբ է ցեղապետ Սիյամենթից ուզում աղջկա ձեռքը, և կրոնասեր հայը չի կարողանում մերժել բարձրաստիճան հոգևորականին[1]:

1980-ական թվականների սկզբին Թուրքիայում թեժանում է ազգային-կրոնական փոքրամասնությունների դեմ թշնամանքի և հալածանքի մթնոլորտը, որն ավելի ընդգծված էր հայերի նկատմամբ՝ կապված նաև ԱՍԱԼԱ-ի գործողությունների հետ: Հալածանքների օրեցօր սաստկացող ալիքը ստիպում է Վարթո աշիրեթին՝ այլ հայերի նման, կրկին մտածել գոյությունը պահ-

[1] Լինելով կրոնասեր քրիստոնյաներ՝ Վարթո ցեղախմբի անդամները, փաստորեն, խախտել են ամուսնությունների ժամանակ կիրառվող «յոթ պորտի» սովորույթը, որը Հայոց ցեղասպանությունից հետո իջեցվել է «չորս պորտի»: 2009թ. մայիսին Ստամբուլում մեր անձնական զրույցի ժամանակ այս մասին հարցրինք Ռաքել Դինքին, որը պատասխանեց, թե Պողոս Առաքյալը մի միտք ունի, որի համաձայն՝ ստիպողաբար գործված մեղքը մեղք չի համարվում: Ապա հավելելով, որ արյունակիցների միջև ամուսնությունների ժամանակ մեծ է հիվանդությունների հավանականությունը, ասաց. *«Մեր ցեղի մեջ հիվանդ կամ մտավոր հետամնաց մարդիկ չկան, և սա մենք համարում ենք Աստծո շնորհ և նշան, որ մեր ստիպողաբար գործված մեղքը մեղք չի համարվել»:*

պանելու մասին: Ի վերջո, ցեղապետ Միյամենթ Յաղբասանը որոշում է, որ ցեղախումբը պետք է տեղափոխվի Բելգիա, իսկ ցեղապետի որոշումը պարտադիր էր բոլորի համար: Ուշագրավ է, որ նույնիսկ Եվրոպայում նրանք կրկին պահել են ցեղային սովորույթները:

Բավական հետաքրքիր է նաև, որ Վարթո աշիրեթը տարիներ շարունակ պայքարել է իրենց հողերը զավթած քրդերի դեմ, և ներկայումս էլ դատական գործերը շարունակվում են: Ինչպես նշում է Ռաքել Դինքը, իր հայրը՝ ցեղապետ Միյամենթը, 2004թ. Բրյուսելում մահվան մահճում երեխաներից պահանջել է, որ շարունակեն հետամուտ լինել իրենց հողերը վերադարձնելու գործին:

Հայկական Վարթո աշիրեթի ոչ միայն գոյության, այլև էթնիկ-կրոնական ինքնագիտակցության պահպանման ու շարունակման փաստը տեղիք է տալիս մեկ անգամ ևս խորհել ուծացման տարբեր մակարդակներում գտնվող հայերին շրջապատող միջավայրի կարևորության մասին: Եթե Ռաքել Յաղբասանը մնար քրդերով շրջապատված միջավայրում, լավագույն դեպքում դառնալու էր քրդախոս և մեծ մասամբ քրդական կենսակերպ ու մշակույթ կրող հայ, այն էլ՝ ցեղախմբի կյանքի ներփակ բնույթի շնորհիվ: Հայկական միջավայրի ազդեցությամբ նա կարողացավ լիարժեք վերագտնել արմատները և դառնալ հայ կին, հայ մայր Ռաքել Դինք: Նրա նման հազարավոր հայեր ներկայումս քրդախոս, քրդացած կամ թուրքացած են նաև իրենց շրջապատող միջավայրի և պայմանների հետևանքով:

## *Էթնիկ ծագման խնդիրը Թուրքիայում*

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ ներկայիս Թուրքիայում կարևոր խնդիր է համարվում էթնիկ ծագման հարցը, որը չի շրջանցում, նույնիսկ հաճախ տեղ է գտնում նաև քաղաքականության մեջ: Թուրքիայում ընթացող կարևոր գործընթացների կիզակետում ժամանակ առ ժամանակ հայտնվում և ակտիվ շրջանառվում է էթնիկ ծագման հարցը՝ դառնալով քաղաքական գործիչների, վերլուծաբանների, մամուլի ուշադրության առարկա: Արդեն սովորական երևույթ է, երբ Թուրքիայի որևէ բարձրաստիճան պաշտոնյայի «մեղադրում» են այլ էթնիկ ծագում ունենալու մեջ: Թուրքական «ազգային» պետությունում բնական է, որ այլէթնիկ, այն է՝ ոչ թուրք լինելը պետք է ընկալվի որպես վիրավորանք: Կարելի է եզրակացնել, որ տարատեսակ բարդույթների և կաղապարների կողքին թուրքական հասարակության մեջ բավական տարածված է նաև էթնիկ ինքնության, էթնիկ անաղարտության բարդույթը, որի դրսևորումները տարբեր են:

Էթնիկ ծագման խնդիրն ավելի ցայտուն և նույնիսկ հիվանդագին է արտացոլվում Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ՝ դառնալով թուրքական քաղաքական տեխնոլոգիաների կարևոր և բաղկացուցիչ մասը: Կարելի է ասել, որ այդ հարցը տարբեր ինտենսիվությամբ, շարունակ գտնվում է թուրքական քաղաքական օրակարգում, ուստի նմանատիպ օրինակներից հարկ ենք համարում անդրադառնալ մեկին:

Այսպես, 2009թ. մարտին Թուրքիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում թեժ պայքար ընթացավ հատկապես Ստամբուլում, որտեղ քաղաքապետի

հիմնական թեկնածուներն էին իշխող Արդարություն և զարգացում և ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցությունների ներկայացուցիչները: ԺՀԿ-ն Ստամբուլի քաղաքապետի համար առաջադրել էր բավական ինքնատիպ քաղաքական գործչի՝ պատգամավոր Քեմալ Քըլըչդարօղլուին: Շատերի կարծիքով, բավական հավասարակշիռ, ամուր նյարդերի տեր Քըլըչդարօղլուն ներկայիս Թուրքիայի քաղաքական երկնակամարում ծագող աստղերից է: Զարմանալի չէ, որ նրա աճող հեղինակությունը և քվեները պակասեցնելու համար ընտրվեց էթնիկ ծագման հարցը: Մասնավորապես, առաջատար մի քանի ԶԼՄ-ներում տարածվեց հետևյալ հայտարարությունը. *«Քեմալ Քըլըչդարօղլուի մայրը հայ է՝ Յեմուշ անունով և ապրում է Դերսիմում»:* Այս լուրը դարձավ քաղաքական օրակարգի և մամուլի առանցքային նյութերից մեկը: Մի լրագրող, «հետաքննող լրագրողական» ժանրին հատուկ մեթոդներով, զանգահարելով Քըլըչդարօղլուի մորը, ուղղակիորեն հարցրել է. *«Դուք հա՞յ եք»*[1]: Անակնկալ հարցին պատասխանել է վերջինիս դուստրը՝ ասելով. *«Ոչ, մենք մուսուլման ենք»:* Քըլըչդարօղլուի հայկական ծագման մասին լուրերն ավելի վաղ էլ էին շրջանառվում, սակայն դրանք ուժգնորեն արտահայտվեցին այն ժամանակ, երբ նա դարձավ քաղաքապետի թեկնածու, և այն էլ՝ բավական վտանգավոր: Սակայն այս հարցում ևս Քըլըչդարօղլուն պահպանեց իրեն բնորոշ հանգստությունը և շարունակ հնչող հարցերին պատասխանեց հետևյալ կերպ. *«Մայրս կարող է և հայ լինել, կամ քուրդ, կամ հույն, սակայն դրանից մեր մոր հանդեպ*

[1] http://www.nethaber.com/Politika/76816/ONUN-ICIN-ERMENI-DIYENLER-BILE-OLMUS-CHPli

*սերը չի պակասի»*[1]: Այսինքն՝ նա մի կողմից չհերքեց այդ փաստը, մյուս կողմից՝ փորձեց այն տեղափոխել այլ հարթություն՝ ավելացնելով նաև, որ մարդիկ հնարավորություն չունեն ընտրելու իրենց ռասան:

Սակայն նկատենք, որ նմանատիպ քաղաքական հնարքներ է գործադրում նաև նույն ընդդիմադիր ԺՀԿ-ն, որի պատգամավորներից Ջանան Արըթմանը Թուրքիայի նախագահ Աբդուլլա Գյուլին «մեղադրեց» հայկական ծագում ունենալու մեջ՝ նշելով, որ, իբրև թե, նրա մայրը հայ է: Սակայն, ի տարբերություն Քըլըչդարօղլուի՝ Գյուլը այս խնդրին բավական բուռն և էմոցիոնալ պատասխանեց. նախ նա հրապարակավ ասաց, որ իրենց տոհմը մուսուլման և թուրք է, իսկ այնուհետև մամուլում տպագրվեց նրանց տոհմածառը: Բացի այդ, նա հանդես եկավ Արըթմանի դեմ «սիմվոլիկ դատական հայցով»՝ իրեն վիրավորելու համար: Էթնիկ պատկանելության համար միմյանց մեղադրելը, ի դեպ, նոր երևույթ չէ թուրքական իրականության մեջ, և որքան էլ զարմանալի է, տարածված է հատկապես ռասիստ ազգայնամոլների շրջանում. տարբեր ժամանակաշրջաններում ամենակարկառուն ռասիստները միմյանց մեղադրել են ոչ թուրքական ծագում ունենալու մեջ:

Այս ամենը, այսինքն՝ ներքաղաքական պայքարում էթնիկ ծագման շահարկումը, թե՛ իշխող և թե՛ ընդդիմադիր ուժերի կողմից էլ ավելի հակասական է թվում իշխող կուսակցության և, մասնավորապես, նրա առաջնորդ Էրդողանի բազմիցս հնչեցրած այն տեսակետի համատեքստում, թե իրենք դեմ են էթնիկ ազգայնականությանը: Ի դեպ, Քըլըչդարօղլուի սառը պահված-

[1] Նույն տեղում:

քը և, փաստորեն, մոր հայկական ծագումը չհերքելը տարբեր շրջանակների կողմից ավելի ճիշտ գնահատվեց, այնուամենայնիվ, այդ լուրերից հետո նրա վարկանիշն այլևս կտրուկ աճ չարձանագրեց, և, ի վերջո, նա պարտվեց ընտրություններում:

Էթնիկ ծագման խնդիրը քննարկվում է նաև ներկայումս Թուրքիայում ընթացող աղմկահարույց «Էրգենեքոն» ահաբեկչական կառույցի դատավարության շրջանակներում: Պարզվել է, որ ձերբակալվածներից մեկը՝ Հատուկ օպերատիվ վարչության պետի նախկին տեղակալ Իբրահիմ Շահինը, հանձնարարություն է ստացել և աշխատել է տարբեր կուսակցություններում հայկական ծագում ունեցող մարդկանց հայտնաբերման և գրանցման գործով: Խուզարկության արդյունքում հայտնաբերված Շահինի նոթատետրում առկա է ցուցակ, որտեղ նշված են տվյալներ Թուրքիայի քաղաքական կյանքում բավական հայտնի անունների էթնիկ ծագման մասին, որոնց համաձայն՝ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ, Գորշ գայլեր) նախագահ Դևլեթ Բահչելին, Ժողովրդավարական հասարակարգ կուսակցության նախագահ Ահմեթ Թուրքը, ԱՇԿ պատգամավոր Մեհմեթ Շանդըրը, Մեհմեթ Էյմուրը հայկական ծագում ունեն[1]:

Ակնհայտ է, որ Թուրքիայում էթնիկ ծագման հարցը ծավալվում և նոր դրսևորումներ է ձեռք բերում: Թուրք որոշ սոցիոլոգներ, անդրադառնալով լայն թափով շրջանառվող այս թեմային, իրավացիորեն երևույթը դասում են թուրքական հասարակության շրջանում տարածված հիվանդությունների շարքին:

[1] MHP yöneticilerini de Ermeni diye fişlemiş, http://www.hyetert.com/haber3.asp?Id=31202&DilId=1

### *Հայկական ծագման դրսևորումներ Թուրքիայում*

Տարբեր դիտարկումներ և փաստեր թույլ են տալիս պնդել, որ Թուրքիայի իսլամացված հայության և նրա հետնորդների մեջ կա մի շերտ, որը, հայկական արմատներ ունենալով հանդերձ, ոչ միայն ժխտում է դա, այլև փորձելով նաև շրջապատին ապացուցել «զտարյուն թուրք» կամ մուսուլման լինելը, դառնում է ընդգծված հակահայ: Այստեղ միանշանակ է նաև հոգեբանական կողմը. նրանցից շատերը հոգեբանորեն իրենց թշնամի են համարում հայության այն մասին, որն, ի տարբերություն իրենց, կարողացել է հավատարիմ մնալ իր արմատներին և հենց նրանց էլ հռչակում է թիվ մեկ թշնամի: Հայկական ծագում ունեցողների հակահայկականության դրսևորման կարևոր պայման պետք է համարել նաև Թուրքիայում արմատացած մոտեցումը հայերի նկատմամբ, համաձայն որի՝ նրանք ընկալվում են որպես թշնամի ազգ, և իրենք նաև հոգեբանորեն չեն ցանկանում պատկանել թշնամի ազգին: Դրա համար էլ հաճախ ընտրում են տիրապետող ազգի մեջ ուծանալու ճանապարհը: Խնդրին անդրադառնալով՝ ազգագրագետ Հարություն Մարությանն արտահայտել է հետևյալ կարծիքը. *«Մամուլի հրապարակումները, ուղղակի և անուղղակի քաղաքական կամ տնտեսական բնույթի ճնշումները կարող են բերել նաև հակառակ արդյունքների, երբ մարդիկ, ձգտելով ազատվել իրենց տրվող պիտակավորումներից, փոխում են իրենց շրջապատը, կտրում են վերջին կապերը իրենց ազգակիցների, նաև ազգականների հետ ու, փաստորեն, բռնում են ասիմիլյացիայի, ուծացման գործընթացի ուղին: Ընդ որում, այստեղ ևս առկա են բազմաթիվ գործոններ, որոնք կամ արագաց-*

*նում, կամ դանդաղեցնում են նման գործընթացները»*[1]:

Տարբեր աղբյուրներ հայկական կամ առնվազն ոչ «մաքուր թուրքական» ծագում են վերագրում հայտնի թուրք ազգայնամոլների: Նմանատիպ օրինակներից կցանկանայինք անդրադառնալ Թուրքիայի մոլի հակահայերից մեկի՝ Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքի, հայկական արմատներ ունենալու խնդրին: Հիշեցնենք, որ հենց նա է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ ակտիվ պայքարողներից մեկը, որը Շվեյցարիայում դատապարտվեց նաև ցեղասպանությունը ժխտելու համար: Թուրքական որոշակի շրջանակներ մեծ աղմուկ բարձրացրին և Փերինչեքին որակեցին «Լոզանի նվաճող»: Բանվորական կուսակցության ազգայնամոլ նախագահը Հայոց ցեղասպանության փաստը որակում է որպես «իմպերիալիստական սուտ»: Նրա հետքերով է գնում նաև որդին, որը նույնպես լծված է Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի գործին: Ավելորդ չէ նշել, որ ներկայումս Դողու Փերինչեքը ձերբակալված է Թուրքիայում աղմուկ հանած «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության գործով:

Թուրքական տարբեր աղբյուրներում նշվում է, որ Դողու Փերինչեքը ծագումով Երզնկայի Էղին (Ակն) գավառի Ափչաղա գյուղից է: Ավելորդ չէ նշել, որ Ակն գավառը հատկապես հայտնի է հայկական ծագումով կրոնափոխների առատությամբ, իսկ պատմական աղբյուրները հաստատում են, որ 1915-ից առաջ էլ այն եղել է գերազանցապես քրիստոնեաբնակ, այնտեղ ապրել

[1] *Մարության Հ.,* Տրավմատիկ հիշողությունը իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում, «Նորավանք» ԳԿՀ-ի Տեղեկագիր, Երևան, 2008, թիվ 22, էջ 118:

են հիմնականում հայեր, հույներ: Սակայն Փերինչեքի ծագման մասին ավելի խոր, համակողմանի, և որ ամենակարևորն է, լուրջ փաստերով հանդես եկավ թուրքական *«Chronical»* հանդեսը: Հատկապես ուշագրավ է, որ հիշյալ հանդեսում հրատարակված հոդվածում մեջբերվում են արխիվային փաստաթղթեր, այն է՝ օսմանյան դատարանի գրանցումները, որոնք տալիս են տվյալ շրջանի ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական, կրոնական, էթնիկ պատկերի մասին տվյալներ: Դրանք փաստում են, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին շրջանում եղել է հոծ հայկական ներկայություն, նրանց մեծ մասը եղել են արհեստավորներ: Հայերը հատկապես շատ են եղել Ակն գյուղաքաղաքում, մեծ թվով հայեր են ապրել նաև Ակնին ենթակա գյուղերում՝ Քեմեր-գաբ, Ափչաղա, Իլիչ և այլն: Կոնկրետ Ափչաղա գյուղը, որտեղից սերում է ազգայնամոլ Փերինչեքը, գերազանցապես հայկական բնակչություն ունեցող գյուղ էր: Գյուղապետը, գյուղի ավագանու անդամները եղել են հայեր: Դատական գրանցումներում պահպանված են անգամ նրանց անունները. օրինակ՝ Հակոբի որդի Քիրքոր, Արթինի որդի Քիրքոր և այլն: Ինչպես նշվում է հիշյալ հոդվածում, Ակնի հայերի մոտ նկատվել է բավական տարածված և միննույն ժամանակ զարմանալի մի օրինաչափություն. այն է՝ բոլորն ունեցել են տոհմանուններ (համեմատության համար նշենք, որ Թուրքիայում ազգանունների մասին օրենքը շրջանառության մեջ է դրվել միայն 1934թ., և դրանից հետո են թուրքերը սկսել կրել ազգանուններ), սակայն զարմանալի է, որ դրանց մեծ մասը թուրքերեն անուններից էր կազմված՝ Մուրաթօղլու, Դեմիրմենջիօղլու, Չիլինգիրօղլու, Այվազօղլու, Փերինչօղլու և այլն: Բայց դատա-

կան գրանցումներն արձանագրել են մեկ այլ հետաքրքիր մանրամասն և առանձնահատկություն ևս. թեև զրեթե բոլորն ունեին թուրքական տոհմանուններ, սակայն կրում էին բացառապես հայկական անձնանուններ, և թուրքական կամ օտար անձնանուններ կրելը համարվել է բացառություն[1]: Կրկին դատարանի գրանցումներում արձանագրված է, որ Փերինչօղլուները բոլորը հայեր էին, նույնիսկ կան դատական գործեր նրանց մասնակցությամբ, որտեղ, օրինակ, նշվում է. «Հայկական միլլեթից (ազգից) Փերինչօղլու Ստեփանը և Խաչատուրը»: Դողու Փերինչեքի պապի հայրը՝ Մեհմեթ Սադըք Փերինչօղլուն, ծնվել է Ափչաղա գյուղում, 1850թ., նույն գյուղում է ծնվել նաև նրա որդին՝ Մեհմեթ Ջեմալ Փերինչեքը, 1887թ: Սակայն, ինչպես նկատելի է, նրանց անձնանունները հայկական չեն, և փաստորեն խախտված է վերը նշված առանձնահատկությունը: Սա գուցե հնարավոր էր մեկնաբանել որպես բացառություն, սակայն կրկին դատարանի գրանցումներում պահպանված փաստերը լույս են սփռում ինչպես այս, այնպես էլ այլ հարցերի վրա: Այսպես, օսմանյան դատարանի գրանցումներում արձանագրված է, որ Մեհմեթ Սադըք Փերինչօղլուն «մուհթեդի» է, իսկ մուհթեդի նշանակում է կրոնափոխ: Այսինքն՝ պարզվում է, որ նա իսլամ է ընդունել 19-րդ դարի երկրորդ կեսին, բայց թե ինչ պատճառներով, չի ասվում: Սա նաև ցույց է տալիս, որ իսլամացման քաղաքականությունն իր վերելքներով և վայրէջքներով շարունակվել է օսմանյան պետության ամբողջ գոյության ընթացքում: Դողու Փերինչեքն ահա հենց այս իսլամացված հայի սերունդն է, և նրա հայկական ծագում ունենալը հակառակ ազդեցություն է ունեցել

[1] 68 yıllık karanlık macera, http://www.hyetert.com/haber3.asp?Id=30273&DilId=1

և մղել նրան ընտրել ազգայնամոլության ուղին: Սակայն նույնիսկ այդ հանգամանքը նրանց չի «ազատում» հենց թուրքական հասարակության կողմից որպես ոչ թուրքական ծագում ունեցողներ մեղադրվելու վտանգից: Այս մասին «Ակօս» թերթի լրագրող Բագրատ Էստուկյանը գրում է. *«Հապա ի՞նչ ըսենք ազգուրացներուն: Ի՞նչ ազգուրաց, նոյնիսկ ազգատեացներուն: Ելուր տես, որ հաւաքականութեան յիշողութիւնը թոյլ չի տար: Կը քաշէ ու կը բանայ ազգուրացին թաքնուած քողը երեսէն և կը պարզէ այն, ինչ, որմէ փախչած է ամբողջ կեանքին տևողութեան»*[1]:

* * *

Էթնիկ ծագման թեման չի շրջանցում թուրքական հասարակության թվում է թե ոչ մի շերտը: Թուրքիայի բարձրաստիճան հոգևոր ղեկավարներից մի քանիսի անունները նույնպես շրջանառվում են հայկական ծագման համատեքստում՝ դառնալով համաթուրքական քննարկման առարկա:

Մի քանի տարի առաջ Թուրքիայում սկսեց ակտիվորեն քննարկվել այն հարցը, թե Պոլսո Հայոց 82-րդ պատրիարք Շնորհք Գալուստյանը և Թուրքիայի կրոնական հարցերի վարչության նախագահ Լյութֆի Դողանը խորթ եղբայրներ են: Նշվում էր, որ ապագա Շնորհք պատրիարքի մորը՝ Շուշան Գյուլթանեին, 1915թ. ցեղասպանության ժամանակ առևանգում է մի մուսուլման թուրք, որից ունեցած երեխաներից մեկն էլ իբր թե 1970-ականներին դառնում է Թուրքիայի կրոնական հարցերի վարչության նախագահ: Ինչպես նշում են բազմաթիվ աղբյուրներ, նրանց եղբայրներ լինելու մասին տասնամյակներ շա-

[1] *Էստուկեան Բ.,* Ո՞վ է Հայը, Ակօս, 26.09.2008.

րունակ խոսվել է պոլսահայ համայնքում, սակայն հարցի շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, երբ 2005թ. սեպտեմբերին թուրքական «Յենի Աքթուել» հանդեսում հրատարակվեց Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին Բեքչյանի հարցազրույցը, որտեղ նա ասել էր հետևյալը. *«Շնորհք պատրիարքը ինձ պատմել է, որ մորը (1915-ին) փախցրել են, իսկ ինքն ընկել է որբանոց: Մայրն այնուհետև ամուսնացել է իրեն փախցրած մուսուլմանի հետ, որից երկու թե երեք երեխա է ունեցել, որոնցից մեկն էլ կրոնական հարցերի վարչության նախագահ Լյութֆի Դողանն է»*[1]: Բեքչյանը հավելել է նաև, որ պատրիարքի մոր հուղարկավորության արարողությանը մասնակցել են նաև նրա մուսուլման երեխաները, այդ թվում և Լյութֆի Դողանը: Այդ ժամանակ շատերն ասել են. *«Ինչ սուրբ կին է եղել, երկու տղա ունի. մեկը քրիստոնյաների պատրիարքն է, մյուսը՝ մուսուլմանների»:* «Յենի Աքթուել»-ի այս նյութն արտատպվեց մի շարք թուրքական թերթերում՝ քննարկման գլխավոր նյութ դառնալով: Արձագանքները երկար շարունակվեցին և, կարելի է ասել, լիովին չեն մարել անգամ ներկայումս:

Հարկ է նշել, որ Թուրքիայի կրոնական հարցերի վարչությունը ղեկավարել են երկու Լյութֆի Դողան, ընդ որում՝ մեկը հաջորդել է մյուսին: Լուրը տպագրվելուց հետո անմիջապես ծառացավ այն հարցը, թե Թուրքիայի կրոնական հարցերի վարչության 10-րդ և 11-րդ նախագահ Լյութֆի Դողաններից որ մեկն է Շնորհք պատրիարքի ենթադրյալ խորթ եղբայրը: Ավելացնենք նաև, որ երկու նախկին կրոնապետերն էլ անմիջապես հերքեցին իրենց հայկական ծագում ունենալու մասին լուրերը, սա-

[1] Diyanet işleri eski başkanı Lütfi Doğan başpiskopos'un kardeşi, Yeni Aktüel, 06,09,2005.

կայն ուշագրավ է, որ նրանք երկուսն էլ դա վիրավորանք համարեցին: Նույնիսկ խոսվեց դատական գործի հարուցման մասին: Բացի այդ, միմյանց հակառակորդ լինելով՝ նրանք չզլացան նաև հայկական ծագման մասին պնդումներն օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար, և երկուսն էլ ակնարկեցին, թե հայկական ծագում ունի ոչ թե ինքը, այլ մյուս Լյութֆի Դողանը:

Խնդրի վերաբերյալ մեկնաբանություններով հանդես եկան շատերը, սակայն իր ընտանիքի այս մութ ծալքի մասին ավելի վաղ խոսել էր հենց ինքը՝ երջանկահիշատակ պատրիարքը: Այսպես, 1965թ., Հայոց ցեղասպանության 50-ամյակին, թուրք լրագրողներն ուղղակիորեն հարցրել էին Շնորհք պատրիարքին, թե արդյոք եղել է ցեղասպանություն: Հանրապետական շրջանի բոլոր հայ պատրիարքների համար այս հարցը միշտ էլ եղել է ամենադժվարներից մեկը, և նրանցից դիվանագիտական հմտություն է պահանջվել՝ պատասխանից խուսափելու համար: Շնորհք պատրիարքը խուսափողական պատասխան է տվել, թե ինքը պատմաբան չէ, թող պատմաբանները պատասխանեն: Սակայն երբ թուրք լրագրողները պնդել են իրենց հարցը, պատրիարքն ասել է. *«1915-ին ես 7 տարեկան էի, մեր 70 հոգանոց գերդաստանից միայն ես ու մայրս ողջ մնացինք: Աքսորի ժամանակ մորս էլ կորցրի, քանի որ նա ստիպված ամուսնացավ մուսուլման մի թուրքի հետ: Հիմա դուք ինձ պատասխան տվեք, թե ուր են իմ ազգականները: Եթե դուք գտնեք այս հարցի պատասխանը, դրանով նաև պատասխանած կլինեք՝ ցեղասպանությունը եղե՞լ է, թե՞ ոչ հարցին»*[1]:

[1] Ermeni Patriği Şınork Kalustyan'ın üvey kardeşi Diyanet işleri başkanı Lütfi Doğan, www.angelfire.com/wy/yaw/Ermeniler/ermeniler.html

Շնորհք պատրիարքի ընտանիքի հետ կապված խնդրին 2005թ. բավական մանրամասնորեն անդրադարձավ նաև Պոլսո պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը: Ըստ նրա՝ Լյութֆի Դողաններից ոչ մեկը Շնորհք պատրիարքի խորթ եղբայրը չէ. *«Շնորհք պատրիարքի հայրը՝ Միհրանը, ժամանակին Սեբաստիայից փոխադրվել է Յոզղաթի Իղդելի գյուղ: Գալուստյան ընտանիքը գյուղի հարգարժան, ազնվական ընտանիքներից էր, իսկ պատրիարքի մայրը Յոզղաթի Բեբեք գյուղից է, նրա անունը ոչ թե Գյուլդանե է, այլ Շուշան Գյուլթանե: Եթե չեմ սխալվում, 1908թ. գալով Իղդելի գյուղ՝ ամուսնանում է Միհրան Գալուստյանի հետ: Այս ամուսնությունից ծնվում են չորս երեխա՝ Անուշը, Շնորհիկը, Արմենը և Արշակը (հետագայում՝ Շնորհք պատրիարքը): Անուշը երկու տարեկան հասակում մահանում է հիվանդությունից: Իղդելիի կոտորածի ժամանակ Միհրան Գալուստյանը, նրա եղբայրները և ազգականները սպանվում են: Շնորհք պատրիարքն ասում էր, որ իրենց գյուղի մոտակա ձորի մոտ է գտնվում սպանվածների եղբայրական գերեզմանը: Ոմանք նույնիսկ այդ վայրը կոչում են Արյունոտ ձոր: Երեք երեխաների հետ այրի մնացած Շուշան Գյուլթանեին վերցնում է իրենց հարևան Հաջը Ալի Դողանը՝ որպես երկրորդ կին: Շուշանը երեխաների հետ ապրում է ամուսնու՝ Միհրանի թալանված տան առաջին հարկում»*[1]: Մեսրոպ Մութաֆյանը հավանական չի համարում Լյութֆի Դողանի և Շնորհք պատրիարքի եղբայր լինելու հանգամանքը, քանի որ Շուշան Գյուլթանեն երկրորդ ամուսնուց տղա երեխա չի ունեցել: Սակայն ուշագրավ է

[1] Patrik'in müslüman akrabaları, http://www.istanbulfm.com.tr/haber/guncel/patrik-in-musluman-akrabalari.html

հետևյալը. Մեսրոպ Մութաֆյանը նշել է, թե Շուշան Գալուստյանն անհանգստացել է, որ իր փրկված երեխաներին մուսուլման գյուղացիները վատ կվերաբերվեն և միգուցե վնաս տան, ուստի  նրանց փրկության եղանակներ է փնտրել: Նախ ավագ որդուն՝ Արմենին ուղարկում է Թալասի որբանոց, իսկ դրանից մեկ ու կես տարի հետո հանգուցյալ ամուսնու Կեսարիայում գտնվող ազգականներին լուր տալով՝ այս անգամ փոքր որդուն՝ Արշակին է ուղարկում Թալասի որբանոց: Ավագ որդին՝ Արմենը, 1923թ. որբանոցում հիվանդանում և մահանում է: Արշակին ամերիկյան բողոքական միսիոներները նախ տեղավորում են Բեյրութի մերձակա մի որբանոցում, հետո էլ՝ Պաղեստինի Նազարեթ քաղաքի մեկ այլ որբանոցում: 1927թ. Արշակ Գալուստյանն ընդունվում է Երուսաղեմի Հայոց պատրիարքության հոգևոր դպրոց, իսկ 1935թ. ստանալով Շնորհք անունը՝ դառնում է հոգևորական: 1955թ. Էջմիածնում եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո վերադառնում է Ստամբուլ և 33 տարի ընդմիջումից հետո այցելում իր հայրենի գյուղ, հանդիպում մորը:

Երբ ակտիվորեն ծավալվում էին այս քննարկումները, մեկնաբանությամբ հանդես եկավ նաև Շնորհք պատրիարքի զարմիկը՝ նրա խորթ քրոջ որդի Հանիֆի Յըլմազը, ով ապրում է Յոզղաթի նահանգի Չանդըր գավառի Իդդելի, այսինքն՝ պատրիարքի հայրենի գյուղում: Նա նույնպես հայտարարեց, որ Լյութֆի Դողանը Շնորհք Գալուստյանի խորթ եղբայրը չէ, և այդ պատմությունը կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ Շուշանի երկրորդ ամուսնու ազգանունը նույնպես Դողան էր: Պատրիարքի մուսուլման զարմիկը նաև հայտարարել է, որ իր տատը՝ պատրիարքի մայրը, երկրորդ ամուսնությունից հե-

տո իսլամ է ընդունել: Ինչպես ասել է Հանիֆի Յըլմազը, *«Այս փաստը հայտնի էր նաև մեր քեռուն»*[1] (այսինքն՝ Շնորհք պատրիարքին- Ռ.Մ.): Հանիֆի Յըլմազը պատմում է, որ Ստամբուլ տեղափոխվելուց հետո Շուշանին է այցելել նրա երկրորդ ամուսնությունից ծնված աղջիկը՝ Հանըմքըզը, որին իբր թե Շուշան Գյուլլթանենն հայտնել է, թե ինքը շարունակում է մնալ իսկական մուսուլման, և դրա մասին գիտի նաև Շնորհք պատրիարքը, սակայն որպեսզի իր տղային չվնասի, նա բացահայտ ցույց չի տալիս իր իրական կրոնական պատկանելությունն ու գաղտնի կատարում է մուսուլմանական ծեսերը, այսինքն՝ յուրատեսակ ծպտյալ մուսուլման է:

Հարկ է նշել, որ Շուշան Գյուլլթանենի կյանքի այս դրվագն արժանի է հատուկ ուշադրության. հայտնի է, որ ամուսնու մահից հետո նրան իսլամացրել են և տվել Գյուլքըզ անունը: Սակայն Պոլսո ներկայիս պատրիարք Մեսրոպ Մութաֆյանն իր հարցազրույցում նշել է, որ 1959թ., երբ Շնորհք եպիսկոպոսը Երուսաղեմի Հայոց պատրիարքի տեղապահն էր, նրա մայրը՝ Շուշան Գյուլլթանենն, գնում է Երուսաղեմ և դառնում ուխտավոր, բնակվում Սուրբ Հակոբ հայկական վանքում: 1961թ. Շնորհք արքեպիսկոպոսն ընտրվում է Պոլսո Հայոց պատրիարք: Դրանից հետո նրա մայրը տեղափոխվում է պատրիարքարան և ապրում որդու հետ միասին: *«Երբ առողջությունը թույլ էր տալիս, ամեն կիրակի իր պատրիարք որդու հետ միասին այցելում էր եկեղեցիները և անձամբ մասնակցում պատարագներին: Այնպես որ՝ ասեկոսեները նրա «ծպտյալ մուսուլման» լինելու մասին փոքր-ինչ տարօրինակ են»*[2],- կարծում է Մեսրոպ Մութաֆ-

[1] Ermeni Patriği'nden cevap, Sabah, 07,09,2005.
[2] Patrik'in müslüman akrabaları,
http://www.istanbulfm.com.tr/haber/guncel/patrik-in-musluman-akrabalari.html

յանը: Հայտնի է նաև, որ պատրիարքի մայրը մինչև մահն ապրել է որդու մոտ, թաղված է հայկական գերեզմանատանը, հայկական մամուլում անգամ պահպանված են լուրեր նրա հուղարկավորության մասին: Այսինքն՝ բավական իրատեսական է ենթադրել, որ նա պաշտոնապես վերընդունել է քրիստոնեություն, իսկ մուսուլման լինելու պարագայում թույլ չէր տրվի նրան թաղել քրիստոնեական ծեսով և հայոց գերեզմանատանը:

Ներկայացված փաստերը, իրոք, հերքում են Շնորհք պատրիարքի և Թուրքիայի կրոնական հարցերով վարչության նախագահի ազգակցությունը: Ինչպես ասել է Հրանտ Դինքը, *«Վերջ տրվեց տասնամյակներով հայկական համայնքում շրջանառվող այդ ասեկոսեներին, սակայն պարզ դարձավ, որ պատրիարքը նաև մուսուլման ազգականներ ունի»*[1]: Այս սկանդալի հետևանքով նաև պաշտոնից հեռացավ «Յենի Աքթուել» հանդեսի գլխավոր խմբագիրը:

Սակայն վերոնշյալ պարզաբանումներից հետո էլ Թուրքիայի կրոնական առաջնորդներից մեկի հայկական ծագում ունենալու մասին լուրերը չէին դադարում, և Շնորհք պատրիարքի հետ կապված աղմուկի օրերին հեռուստատեսությամբ թուրք պրոֆեսոր Զեքերիա Բեյազը հայտարարեց, որ իրականում Թուրքիայի 12-րդ կրոնապետ Սուլեյման Աթեշի մայրն է հայ: Ավելին, ըստ պրոֆեսորի՝ Սուլեյման Աթեշը իր հոդվածներում քրիստոնեության մասին դրական է խոսում և այդպիսով ծառայում հայ լոբբիին: Որոշ ժամանակ հետո նրան միացավ նաև ազգայնամոլական հայացքներով աչքի ընկնող Սուլեյման Յեշիլյուրթը՝ 2007թ. տպագրած «Անցյալից մինչև մեր օրերը հայ

[1] *Hrant Dink:* Ölenlerin değil, kalanların üzerinden konuşalım, Zaman, 26.11.2005.

և հույն կրոնափոխները» գրքում մանրամասն անդրադառնալով Սուլեյման Աթեշի հայկական ծագմանը: Նշենք, որ գիտական հավակնություններ ունեցող նրա գիրքը լի է բամբասանքային «փաստերով» և «բացահայտումներով»: Իսկ ընդհանրապես գրքում հեղինակը կրոնափոխության համար մեղադրում է միայն զոհերին, բայց ոչ այդ ամենը կազմակերպած և դրան դրդած թուրքական պետությանը:

Սուլեյման Յեշիլյուրթը պնդում է, որ տարբեր աղբյուրների ուսումնասիրության արդյունքում պարզել է հետևյալը. դոկտոր, պրոֆեսոր Սուլեյման Աթեշը ծնվել է 1933թ. հունվարի 31-ին Էլյազիգի (Խարբերդ) Թադըմ գյուղում: Հայրը Իբրահիմ աղան է, մայրը՝ հայազգի Բեթին, որին 1915-ի «աքսորի» ժամանակ նրա հայ ծնողները թողել են տեղի թուրք ընտանիքներից մեկին: Ավելի ուշ Բեթիին ամուսնացրել են կրոնասերի համարում ունեցող Իբրահիմ աղայի հետ և անվանափոխել՝ տալով մուսուլմանական Բեհիյե անունը: Իսլամացված Բեհիյեն ունենում է երկու տղա՝ Սուլեյման և Յավուզ: Սուլեյմանին հայրը մանկուց իսլամական կրթություն է տալիս: Նա ընդունվում և ավարտում է Անկարայի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը, այնուհետև պաշտպանում գիտական ատենախոսություն, ստանում դոկտորի գիտական աստիճան, ավելի ուշ՝ նաև պրոֆեսորի կոչում: 1976թ. իշխանության եկած նոր կոալիցիոն կառավարությունը գործից ազատում է Թուրքիայի կրոնական հարցերի վարչության 11-րդ պետ, ձախ համարվող Լյութֆի Դողանին և նրա փոխարեն նշանակում Սուլեյման Աթեշին: Արդեն այդ ժամանակ սկսվում են նրա մոր հայ լինելու մասին խոսակցությունները, նույնիսկ տարածվում է այն կարծիքը, թե փոխեցին ձախ

նախագահին և նրա փոխարեն բերեցին հայ նախագահ: 1978թ. իշխանության եկած նոր կառավարությունը գործից ազատում է Սուլեյման Աթեշին, որն էլ վերադառնում է համալսարանական գործունեությանը[1]: Ժամանակի թուրքական մամուլում Աթեշի մոր հայկական ծագման մասին լուրերը մեծ աղմուկ են բարձրացրել, իսկ այնուհետև՝ մարել: Սակայն Գարեգին Բեքչյանի հարցազրույցից հետո հարցը նոր թափով սկսեց շրջանառվել:

Այն, որ ցեղասպանության ժամանակ առևանգված կանանց պարտադրվել է ընդունել իսլամ, հայտնի է, և բացառություն չի եղել նաև Շնորհք պատրիարքի մայր Շուշան Գյուլթանեն: Սակայն թեկուզ մեծ տարիքում նա վերադարձել է իր արմատներին, քրիստոնեությանը, իսկ նրա ճակատագիրը կիսած հազարավոր հայ կանայք նման հնարավորություն չեն ունեցել ու իրենց հայ լինելու գաղտնիքն ու հիշողությունը մեծ մասամբ գաղտնի են պահել մինչև կյանքի վերջ: Բացի այդ, նրանք գտնվել են հոգեբանական բարդ վիճակում և դաժան ընտրության առջև՝ մնալ արդեն պարտադրված նոր ընտանիքում և խնամել իրենց առևանգիչներից ծնված երեխաների՞ն, թե՞ փախչել: Այս դաժան երկընտրանքը և մայրական բնազդը շատերին ստիպել է գնալ յուրատեսակ ինքնազոհության և ամբողջ կյանքում տառապել: Սակայն եղել են դեպքեր, երբ հնարավորության դեպքում նրանք լքել են իրենց պարտադրված ընտանիքները, իսկ երեխաները մեծացել են իրենց հայ մոր հանդեպ ատելությամբ, որը նրանց լքել է: Փաստերը ցույց են տալիս նաև, որ Շնորհք պատրիարքի մայրն ամեն կերպ ցանկացել է փրկել իր երեխաներին, և դա հաջողվել է միայն մեկի պարագայում, իսկ գյուղում

[1] *Yeşilyurt S.,* Geçmişten günümüze Rum ve Ermeni dönmeler, Ankara, 2007, s. 46-50.

մնացած աղջիկը՝ Շնորհիկը, ի վերջո, ամուսնացել է քրդի հետ: Այստեղ պարզորոշ նկատում ենք, որ պարտադրված իսլամ ընդունելուց հետո էլ հայ կանանց մեջ չի մարել հայկականության զգացումը, և բավական խոսուն է, որ Պոլսո Հայոց պատրիարքության նշանավոր ղեկավարներից մեկը՝ Շնորհք պատրիարքը, այդպիսի մի կնոջ որդին է:

***«Ինքնության ճգնաժամ»***

Թուրքական հասարակության այսօրվա կարևոր խնդիրներից է, այսպես կոչված, «ինքնության ճգնաժամը»: Թուրքիայում տարբեր ժամանակաշրջաններում ասիմիլյացիայի ենթարկված մարդիկ և նրանց սերունդները սկսում են լուրջ կասկածներ ունենալ իրենց էթնիկ պատկանելության վերաբերյալ, որը հետզհետե խորանալով՝ վերածվում է ճգնաժամի: Այս առումով բավական հետաքրքիր են անգլիական և գերմանական մասնագետների հետազոտությունների արդյունքները, համաձայն որոնց՝ Թուրքիայի բնակչության 38-40 տոկոսը իրեն թուրք չի համարում: «Ինքնության ճգնաժամն» ունի զարգացման և հանգուցալուծման տարբեր ուղիներ, որոնք հաճախ կապված են ինչպես կոնկրետ անձի, այնպես էլ նրան շրջապատող միջավայրի և հանգամանքների հետ: Մեր կարծիքով, հենց այս երևույթի մեջ կարելի է տեղավորել նաև Թուրքիայի իսլամացված հայության և նրանց սերունդների շրջանում ակտիվորեն նկատվող արմատների փնտրտուքի գործընթացը: Հարկ է նկատել, որ կարող են տարբեր լինել դեպի այդ արմատները կամ դրանց կարևորումը տանող ճանապարհները:

Վերջին ժամանակներս Թուրքիայում էլ ավելի հաճախ են

նկատվում վերն ասվածի գործնական օրինակներ, որոնցից հարկ է առանձնացնել մեկ-երկուսը: Այսպես, Թուրքիայում հայտնի երգիչ-երգահան Յաշար Քուրթը խոստովանել է, որ երկար տարիներ եղել է ինքնության փնտրտուքի մեջ և ի վերջո վերագտել է իր հայկական ինքնությունը: Հետաքրքիր է, որ դրանում զգալի է եղել երգիչ Արտո Թունչբոյաջյանի և Armenian *Navy Band*-ի հետ նրա ծանոթությունն ու համագործակցությունը: «Ակօս» թերթի հարցազրույցում Յաշար Քուրթն իր էթնիկ ինքնության վերաբերյալ մտորումներն արտահայտում է հետևյալ ինքնախոստովանական հայտարարությամբ. *«Հավանաբար ես հայ եմ...»* և ավելացնում. *«Ես հիմա իմ ինքնության մեջ փոքր մի անցք եմ բացել և խոսում եմ ավելի շատ իմ անունից: Մի դուռ կա, որը բացել ես, սակայն չես կարողանում մտնել: Այնտեղ մի անջրպետ կա: Միգուցե երգերիս թեմաները փոխվեն: Ես քառասուն տարեկան եմ և նոր ինքնությունս յուրացնելու համար շատ ժամանակ չունեմ, սակայն կամաց-կամաց սկսում եմ որոշ բաներ օգտագործել: Օրինակ, երբ Armenian Navy Band-ի համար Թուրքիայում թարգմանություն էի անում, շատ տարօրինակ մի բան եղավ: Խանութներից մեկում մի մարդ հարցրեց. «Ընկերները որտեղի՞ց են»: Երբ ես ասացի՝ Հայաստանից, նա հարցրեց. «Դո՞ւ էլ ես հայ»: Այս հարցը ինձ առաջին անգամ էր տրվում, և ես պատասխանեցի. «Այո, հայ եմ»...*[1]:

Ինքնության ճգնաժամի մեջ գտնվող անձինք որոշակի հանգրվանում կարիք են զգում ինքնախոստովանության, և այդ պարագայում անգամ արգելք չի հանդիսանում Թուրքիայում հալածվելու և հասարակությունից մեկուսացվելու իրական հե-

[1] *Yaşar Kurt:* Galiba ben Ermeniyim, Agos, 29.02.2008.

ռանկարը: Նմանատիպ ինքնախոստովանական նամակ էր հրապարակվել վերջերս պոլսահայ էլեկտրոնային պարբերականներից մեկում, որտեղ քրդացած մի հայ ուղղակի հարցնում էր. *«Ի՞նչ եմ ես»*: Նամակում հեղինակը պատմում է, որ 28 տարեկան է և ուսումնասիրելով իր ծագումը՝ պարզել է, որ հայ է: Ընդ որում՝ իր հայկական ծագման մասին հայտնի է եղել շրջապատին, և դրա համար անգամ մանկական վեճերի ժամանակ հասակակիցներն իրեն «մեղադրել» են դրանում: Որպեսզի ապացուցի իր հայ չլինելը, նա դարձել է ջերմեռանդ մուսուլման, այցելել մզկիթ, սակայն դա էլ չի փոխել շրջապատի վերաբերմունքը: Ի դեպ, նույնն արել են նաև նրա ծնողները, անգամ պապը, վաճառելով ունեցվածքը, գնացել է հաջի: Սակայն դա նույնպես արդյունք չի տվել. Մուշի Լիզ գյուղում նրանց շարունակել են անվանել հայ: Նա նշում է, որ իրեն ոչ մուսուլման, ոչ քրիստոնյա, ոչ թուրք, ոչ էլ քուրդ է զգում: Վերջին տարիներին սկսել է գերիշխել հայկական ինքնագիտակցությունը, սակայն չգիտի հայերեն և հասկանում է, որ լիակատար հայ էլ չի կարող կոչվել: *«Ինչպես տեսնում եք, ես ինքնության խառնաշփոթ եմ ապրում, ես ի՞նչ եմ՝ հա՞յ եմ, թո՞ւրք եմ, քո՞ւրդ եմ...»*[1]: Այս հարցը նա ուղղում է ընթերցողներին՝ ակնկալելով պատասխան, որը բարդ է և միաժամանակ չի կարող լինել միանշանակ:

[1] Kürtleşen Ermeniler. Tam bir kimlik karmaşası yaşıyorum, ben neyim…? http://www.hyetert.com/yazi3.asp?s=2&Id=549&DilId=1

### *Արմատների որոնումներում. կորստի հիշողության դրսևորումները Թուրքիայի իսլամացված հայերի սերունդների մեջ*

Թուրքիայում ապրող բռնի իսլամացված հայերի և նրանց սերունդների մեջ արդեն տևական ժամանակ է, ինչ ընթանում են տարբեր գործընթացներ, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն վկայում են տասնամյակներ անց ազգային ինքնագիտակցության և հիշողության որոշակի շերտերի պահպանման մասին: Մասնավորապես, «ինքնության ճգնաժամի» քննարկումների ծավալմանը զուգընթաց ի հայտ են գալիս և արդեն մամուլում տարածվում իսլամացված հայերի պատմություններ, տպագրվում են հայտարարություններ, որոնցով մարդիկ փնտրում են իրենց արմատները, կորցրած ազգականներին: Ստամբուլում հրատարակվող «Ակօս» թերթը լի է այդպիսի հայտարարություններով և, ինչպես նկատել էր Հրանտ Դինքը, *«Այսօր Թուրքիայում շատերն են դեգերում իրենց ինքնության լաբիրինթոսում»:* Հետաքրքիր է և, միևնույն ժամանակ, բնական, որ փնտրելու գործընթացն ավելի շատ տարածված է իսլամացված հայերի և նրանց սերունդների շրջանում: Այս ամենը ևս Հայոց ցեղասպանության ուղղակի հետևանքներն են, քանի որ հենց Ցեղասպանությունն է բաժանել և տարբեր ճակատագրերի արժանացրել այս մարդկանց նախնիներին: Բացի այդ, այսօր ի հայտ են գալիս նաև հայկական որոշակի ծագում ունեցող խառնածիններ, որոնց մեջ ևս նկատվում են «ինքնության ճգնաժամին» բնորոշ երևույթներ:

Թուրքիայում ինքնության հարցի օրեցօր ծավալվելու նշան կարելի է համարել «Փնտրում եմ ազգականիս» ծրագիրը,

որը ստեղծվել է 2006թ. Ստամբուլում: Ծրագիրը մտահղացել և կազմակերպել են տեղի հայկական համայնքի երիտասարդական «Հատիկ» և «Նոր Զարթոնք» խմբերը: Այն նպատակ ունի հայտարարությունների տարածման միջոցով օգնել մարդկանց գտնելու կորցրած ազգականներին, որոնց գոյության մասին հաճախ այդ մարդիկ լսել են իրենց ավագներից: Սակայն պետք է նշել, որ հայերի պես աշխարհասփյուռ մի ազգի համար այս երևույթը նորություն չէ, և դեռևս 1960-ական թթ. երկրորդ կեսին Խորհրդային Հայաստանում, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում նույնպես կազմակերպվել էր նմանատիպ մի ծրագիր, որը կոչվում էր «Փնտրում են հարազատներին»:

Խոսելով ծրագրի ստեղծման մասին՝ կազմակերպիչներից հայազգի լրագրող Արիս Նալչըն նշում է, որ սկզբնապես իրենց նպատակներից է եղել «Ակօս» թերթին տրված հայտարարություններով փնտրել կորած ազգականներին և արմատները: *«Այդ ժամանակաշրջանում,-* ասում է Արիս Նալչըն,- *կարողացանք 500 հայտարարություն փակցնել Ստամբուլի փողոցներում, և նույնիսկ Անգլիայից տուրիստական նպատակով եկած մեկը այդ հայտարարությունների միջոցով պատահաբար գտավ իր ազգականին»*[1]: Ըստ Նալչըի՝ ցանկանալով ընդլայնել ծրագրի աշխարհագրությունը՝ իրենք նպատակ են դրել այն տարածել նաև Ստամբուլից դուրս՝ Եվրոպայում, Լիբանանում, Թուրքիայի այլ վայրերում: Կենտրոնացնելով բոլոր միջոցները և կապերը՝ նրանց հաջողվել է իրականացնել դա, և, ինչպես ասում է Նալչըն, ծրագիրը միջազգային մասշտաբ է ձեռք բերել: Այն այժմ տարածված է Բեռլինում, Քյոլնում, Փարիզում, Բեյրութում,

[1] *Görgü E.,* Akrabanızı arıyor musunuz?, Evrensel Hayat, 18.11.2007.

մի խոսքով՝ այն վայրերում, ուր ապրում են հայերի հոծ խմբեր: Բաժանվել է ավելի քան 5000 հայտարարություն ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն լեզուներով: Ստեղծվել է նաև ինտերնետային կայք, որտեղ մարդիկ կարող են հայտարարություն տալ, ինչպես նաև իրենց ազգականներին փնտրել արդեն տրված հայտարարություններում, ընդ որում՝ մի քանի լեզուներով (տե՛ս *www.akrabamiariyorum.com):* Ծրագրի ստեղծումը և ծավալումը, բնականաբար, նաև որոշակի հասարակական պահանջարկ ունի և կարող է հետաքրքիր ու խոսուն ցուցիչ դառնալ Թուրքիայի բռնի իսլամացված կամ հայկական ծագման որոշակի մաս ունեցող մարդկանց շրջանում կատարվող գործընթացները հասկանալու համար: Բավական խոսուն է այն փաստը, որ ծրագիրն իրականացվում է հայերի շրջանում և ձնագնդի էֆեկտով լայն տարածում գտնում ոչ միայն Թուրքիայում, այլև աշխարհի տարբեր մասերում ապրող հայության մեջ: Փաստերը ցույց են տալիս, որ հայ պապիկ, տատիկ ունեցողները բավական մեծ թիվ են կազմում, որոնց կամ նոր է ասվել իրենց ընտանիքի մասին իրականությունը, կամ նրանք իմացել, բայց վախեցել են արտահայտվել: Ահա հենց այս մարդիկ են, որ տեղեկանալով տասնամյակներ շարունակ թաքցված և գաղտնի պահված իրենց իրական ինքնության մասին՝ ապրում են «ինքնության ճգնաժամ»:

Եվ վերջում, կարծում ենք, ավելորդ չէ թարգմանաբար մեջբերել կայքում տեղադրված բազմաթիվ հայտարարություններից մեկը՝ միաժամանակ նշելով, որ նմանատիպ հայտարարությունների թիվն ավելանում է, ինչն իր հերթին կարող է դառնալ առանձին և հետաքրքիր ուսումնասիրության նյութ՝ հազեցած ինչպես

փաստագրական, այնպես էլ ազգագրական տարրերով:

*«Ես ծնվել եմ Էլյազիգի Մաղեն գավառում: Գիտեմ, որ մայրս հայ է և 1915թ. սև օրերին ստիպված է եղել բաժանվել ամբողջ ընտանիքից: Մայրս ասում էր, որ իր ընտանիքից ողջ մնացածները Մարսելում և ԱՄՆ-ում են: Գիտեմ, որ նա Էլյազիգի Թաղըմ գյուղից է, և անունը Եղիսաբերթ Թումասյան է եղել: Սրանից բացի այլ տեղեկություն չունեմ: Մայրս մահացավ 1978թ.՝ մոր, հոր և եղբայրների կարոտը սրտում: Ամեն անգամ, երբ հիշում եմ մորս, շատ եմ վշտանում, որ նա մահացավ՝ իր ընտանիքի կարոտը սրտում: Ցանկանում եմ գտնել մորս կողմի բարեկամներին: Խնդրում եմ այս հարցում ինձ օգնեք: Էքրեմ Ու.»*[1]:

[1] www.akrabamiariyorum.com

## *Ծպտյալ և իսլամացված հայերի խնդրի շահարկումները Թուրքիայում*

Ծպտյալ և իսլամացված հայության խնդիրը, բնականաբար, հետաքրքրում և անհանգստացնում է նաև թուրքական գիտական և «մերձգիտական» շրջանակներին: Սա են վկայում թեմայի վերաբերյալ օրեցօր ավելացող հոդվածները, գրքերը, ուսումնասիրությունները: Թուրքիայում բնակվող ծպտյալ և իսլամացված հայերի հարցը ժամանակ առ ժամանակ հայտնվում է թուրքական մամուլի, քաղաքական, գիտական շրջանակների օրակարգում և պատճառ դառնում տարատեսակ շահարկումների: Նույնիսկ մակերեսային դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ շահարկումների քաղաքականությունը խորանալու և էլ ավելի ծայրահեղ դառնալու միտում ունի: Ընդհանրապես, հայկական թեմատիկան նուրբ և զգայուն հարց է Թուրքիայում, վերջին տարիներին դրան ավելացել է նաև ծպտյալ ու իսլամացված հայերի թեման, ինչը թուրքական քարոզչամեքենային կեղծիքի նոր ալիք բարձրացնելու հնարավորություն է տվել:

Պատահական չպետք է համարել, որ ծպտյալ և իսլամացված հայերի խնդրի առնչությամբ արդեն հրապարակավ արտահայտվել են Թուրքիայի մի շարք հայտնի պատմաբաններ: Նրանցից մեկը՝ Ինենյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեն, Հրանտ Դինքի թաղման բազմահազարանոց արարողությունն ուղղակիորեն կապեց ծպտյալ հայերի հետ՝ դա վերազարթոնքի նշան համարելով: Նա, մասնավորապես, նշել է. *«Ես կարծում եմ, որ Դինքի թաղման արարողության մասնակիցներից շատերը ծպտյալ հայեր էին: Իմ*

*կարծիքով, իրենց մինչ այս պահը թաքցրած և Ահմեթ, Մեհմեթ անուններով հայերը հուղարկավորության ժամանակ զիտակցաբար բացահայտվեցին: «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ ենք» արտահայտությունը դրա վկայությունն էր: Ըստ իս, Հրանտ Դինքի սպանությունը ծպտյալ հայերի հիմնովին բացահայտվելու համար մի հայտնություն եղավ»*[1]: Նույն խնդրին անդրադարձավ նաև թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, հայտնի պատմակեղծարար Յուսուֆ Հալաչօղլուն, որի կարծիքով՝ Դինքի թաղման արարողությանը մոտավորապես 50.000-անոց հայկական համայնքից կարող էր մասնակցել 20.000 հայ և 10.000 էլ իրենց բողոքի ձայնը անկեղծ բարձրացնող թուրքեր, այսինքն՝ մոտ 30.000 մարդ: *«Իսկ ովքե՞ր են մնացածները,-* հարցնում է Հալաչօղլուն և ավելացնում,- *անհրաժեշտ է այժմ այս ամենը շատ լավ ուսումնասիրենք և իմանանք»*[2]: Այնուհետև, մեջբերելով Դինքի այն միտքը, թե Թուրքիայում մուսուլման հայեր էլ կան, Հալաչօղլուն կասկած է հայտնում, թե միգուցե թաղման թափորի մնացած մասնակիցներն այդ հայերն են եղել, և առաջարկում է, որ պետական հետազոտական հաստատությունները զնահատական տան դրան:

Նույն Սալիմ Ջյոհջեն նույնիսկ կարծիք է հայտնում, որ մինչև 2015թ. ծպտյալ հայերը պահաբեկչական պայքար են սկսելու. *«Ուշագրավ է, որ 20-րդ դարի սկզբին այս կամ այն պատճառով իսլամ ընդունած հայկական ծագմամբ մեր քաղաքացիների ուղղությամբ տարվող աշխատանքները վերջին ութ-տասը*

[1] *Salim Cöhce:* Cinayet, Kripto Ermeniler için milât
http://www.aksiyon.com.tr/detay.php?id=26589
[2] Milliyet, 25,02,2007.

*տարիներին ապշեցնող թափ են ստացել: Այսպիսի զարգացումը չէր կարող ի հայտ գալ հենց այնպես, և պարզ է, որ սրա հիմքում ապագային միտված մի շարք հաշվարկներ կան: Թուրքերի հետ հաշիվներ պարզելու, նրանցից վրեժ լուծելու և, ի վերջո, «դրախտային Հայաստանը» վերակերտելու նպատակները, 2015թ., այսինքն՝ աքսորի և տեղահանության որոշման ընդունման 100-ամյակի մոտենալն էլ կրիպտո-հայերի խնդրում առկա սպառնալիքները բավական մեծացրել են: Ուստի, ես կարծում եմ, որ ապագայում, հավանաբար՝ սկսած 2013-2014 թվականներից, հատկապես կրիպտո-հայերի կողմից Թուրքիան ենթարկվելու է բացահայտ կամ էլ թաքուն հարձակման, որն անցյալ դարի սկզբներին տեղի ունեցածներից շատ ավելի տարբեր է լինելու»: «Ես կարծում եմ, որ հայերի զինված շարժումը սկիզբ է առնելու քաղաքներից: Հատկապես արևելյան և հարավարևելյան անատոլիական որևէ քաղաքում որոշակի գործողություններ իրականացնելու համար 10-12.000-անոց զաղութը բավարար է: Ըստ էության, տարածաշրջանի քաղաքներում մոտավորապես այս քանակությամբ ծպտյալ հայեր կան»*[1]:

Թուրքական մամուլում և զանազան վերլուծություններում կարծիքներ են հնչում, որ ծպտյալ հայերը մեծ թիվ են կազմում նաև պետական համակարգում, ինչպես նաև մասնավոր հատվածում: Սակայն ամենաշատ տարածված մեղադրանքը, որ հասցեագրվում է իսլամացված և ծպտյալ հայերին, այն է, որ նրանք ակտիվ համագործակցում են Քրդական բանվորական կուսակցության՝ *PKK*-ի հետ, որն ահաբեկչական գործունեու-

[1] *Մելքոնյան Ռ.,* Ծպտյալ հայերը թուրք գիտնականների ուշադրության կիզակետում, Գլոբուս, Երևան, 2007, թիվ 12, էջ 24-26:

թյուն է ծավալել թուրքական պետության դեմ: Կրոնափոխ հայերը, ըստ թուրքական աղբյուրների, մեծ դեր ունեն նաև այլ ծայրահեղ ձախ կազմավորումներում: Հարցին մեծ հնչեղություն հաղորդեց «պալատական» պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուն՝ 2007թ. օգոստոսի 18-ին Կեսարիա քաղաքում կայացած գիտաժողովի ժամանակ հայտարարելով, որ Թուրքիայի քրդերի մեծ մասն ունի թուրքմենական ծագում, իսկ ալևի քրդերն իրականում կրոնափոխ հայեր են, որոնք առերես իսլամ են ընդունել և փոխել անունները՝ 1915թ. «տեղահանությունից» ազատվելու համար. *«Այսօր բազմաթիվ մարդիկ, որոնք հայտնի են որպես քուրդ ալևի, ցավոք սրտի, հավատափոխ հայեր են: Մեր երկիրը մասնատել ձգտող PKK և TIKKO*[1] *ահաբեկչական կազմակերպության անդամներից շատերը հենց այս հայերն են: Այսինքն, ինչպես և մենք կարծում էինք, PKK-ն և TIKKO-ն իրականում քրդական շարժումներ չեն»*[2]: Այս խոսքերն անմիջապես լայն արձագանք գտան, ընդ որում՝ և՛ դրական, և՛ բացասական, թուրքական մամուլում ու քաղաքական, գիտական, մտավորական շրջանակներում: Թեժ քննարկումների շրջանակներում, օրինակ՝ «Հյուրիյեթ» թերթի լրագրող Մեհմեթ Յըլմազը, ըստ էության, հռետորական հարց էր տալիս, թե ինչու պետք է այդ հայերը փոխեին իրենց անունները և ներկայանային որպես մուսուլմաններ[3]: Իսկ հայտնի գրող և լրագրող Մուրաթ Բելգեն արտահայտեց այն միտքը, թե իսլամ ընդունելու միջոցով փրկված հայերի նման քայլը պատկերացում է տալիս, թե ինչ է եղել

[1] *TIKKO* - Թուրքիայի բանվորների և գյուղացիների ազատագրության բանակ, որը ձախ ծայրահեղական կազմակերպություն է:

[2] Hürriyet, 22.08.2007.

[3] *Yılmaz M.,* İsimleri neden değiştirdiler acaba?, Hürriyet, 23.08.2007.

նրանց հետ, ովքեր չեն դիմել այդ քայլին[1]: Փորձելով հակադարձել իր դեմ սկսված քննադատության ալիքին՝ Հալաչօղլուն հավելել է նաև, որ ունի իսլամացված հայերի ցուցակը և տիրապետում է նրանց մասին մանրամասն տվյալների: *«Իմ ձեռքին կան 100 հազար կրոնափոխ հայերի մասին մանրամասներ. նրանց նախկին հայկական անունը, թուրքական անունը, բնակության վայրը և այլն»*[2],- հայտարարեց նա՝ միևնույն ժամանակ ասելով, որ դա չպետք է ընկալվի որպես սպառնալիք: Բացի այդ, ըստ Հալաչօղլուի՝ ինքը և Թուրքական պատմական ընկերությունը *«Հայոց ցեղասպանության պնդումների դեմ մի ամրոց են»*, և ներկայումս իր աշխատանքներում փորձում է տալ հայկական կողմի այն հարցի պատասխանը, թե ուր են մինչև 1915թ. այդ տարածքներում ապրող 1 500 000 հայերը: Պատմակեղծարարը գտնում է, որ իսլամացված հայերի մասին իր «գիտական աշխատանքը» հենց այս հարցի պատասխանն է, և մատնացույց անելով մահից փրկվելու համար ստիպված իսլամ ընդունած հայերին՝ ասում է. *«Ահա այդ «անհետացած» հայերը, նրանք չեն կոտորվել, և նշանակում է, որ հայկական կողմը մինչև այսօր սուտ է խոսել: Իմ ասածներն ուղղակի ոչնչացնում են հայկական սփյուռքի պնդումները»*[3]:

Ինչպես և սպասելի էր, թուրքական պետական քարոզչամեքենան ամեն կերպ փորձում է հօգուտ իրեն ներկայացնել հարցը, և ավելորդ չէ նշել, որ բռնի կրոնափոխված հայերի խնդրի այսօրինակ շահարկումը, փաստերի խեղաթյուրումը և

[1] Sabah, 23.08.2007
[2] Hürriyet, 22.08.2007, Sabah, 22.08.2007
[3] Zaman, 21.08.2007, 29.08.2007

նման անտրամաբանական եզրահանգումը սպասելի էր շատերի, համենայնդեպս՝ մասնագետների, համար: Սակայն կարևոր է դիտարկել, որ Հալաչօղլուի պնդումները լուրջ չեն ընկալվում նաև որոշ թուրք գիտնականների կողմից, և կարծում ենք, այստեղ ավելորդ չէ մեջբերել հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամի հետևյալ միտքը. *«1915 թվականին իրենց կյանքը փրկելու համար որոշ հայեր ընդունել են մուսուլմանություն: Սա սկզբում թույլատրվել է, սակայն հետո, երբ ավելի մեծ թվով հայեր սկսեցին իսլամ ընդունել, հատուկ հրամանով արգելվեց կրոնափոխությունը»*[1]: Իսկ հետազոտող Օսման Քոքերը նշում է, որ հայերն իսլամացվել են ոչ միայն 1915-ին, այլև սկսած այն ժամանակվանից, երբ թյուրքերը հայտնվել են Անատոլիայում: Քոքերը նույնպես անհիմն է համարում Հալաչօղլուի պնդումները և կարծիք հայտնում, որ առնվազն անլուրջ է կարծել, թե հայերը կարող էին փրկվել այդպիսի պարզունակ միջոցով, այն է՝ հայտարարելով, թե քուրդ են կամ ալևի: Ըստ նրա՝ պետությունը մանրամասն գիտեր, թե որ գյուղերն են հայկական, որոնք՝ քրդական[2]:

Գալով քուրդ ալևիների, զազաների շրջանում կրոնափոխ հայերի առկայության խնդրին՝ նշենք, որ դա հաստատող փաստեր կան, և 1915թ. Հայոց ցեղասպանության տարիներին, իրոք, բազմաթիվ հայեր (տարբեր տվյալներով՝ 20-40 հազար) ապաստան են գտել Դերսիմի ալևիների մոտ: Հատկապես Դերսիմի ընտրությունը, ըստ տարբեր հեղինակների, պայմանավորված

[1] *Türker Y.,* Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27.08.2007

[2] *Dinç G.,* Anneannesi, babaannesi, dedesi Ermeni olanlar geçmişle yüzleşiyor. Müslüman Ermeniler anlatıyor, Yeni Aktüel, #116, ekim, 2007, s. 50.

էր այն հանգամանքով, որ պատերազմի մեջ գտնվող օսմանյան բանակը մեծ վերահսկողություն չի ունեցել այդ տարածքների վրա, ինչն էլ հնարավորություն է տվել տեղացիներին պատսպարել հայերին: Մեր կարծիքով՝ երկրորդական չպետք է համարել նաև այն հանգամանքը, որ հայերին ապաստան տվողները մեծ մասամբ ալևիներ էին: Դերսիմցի ալևիների հետ մեր անձնական շփումների արդյունքում տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչև այսօր էլ նրանց շրջանում տարածված է մի դարձվածանման միտք՝ «Մեր տան հայը», որը կարելի է ընդունել հայերին իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայություն և հիշողություն:

Ծպտյալ և իսլամացված հայերի թեմայի շահարկումներով աչքի է ընկնում նաև թուրքական *Aktif Haber* թերթի լրագրող Յուսուֆ Գեզգինը, որը մեկն է նրանցից, ով ակտիվորեն զբաղվում է Թուրքիայի այլակրոնների և հատկապես ծպտյալների խնդրով: Նրա հոդվածներն աչքի են ընկնում ծայրահեղական, կողմնակալ, ոչ օբյեկտիվ մոտեցումներով: Յուսուֆ Գեզգինը, թեմային վերաբերող «Ծպտյալ հայերը հայերի դեմ» հոդվածում զարկ տալով երևակայությանը, անդրադարձել է ծպտյալ հայերի մեջ իբրև թե գոյություն ունեցող երկու խմբերի խնդրին[1]: Ըստ նրա՝ Թուրքիայում 35-50 հազար հաշվվող հայկական համայնքից բացի, որոնք քրիստոնյա են և պաշտոնապես ճանաչված են որպես փոքրամասնություն, կան մուսուլման ներկայացող ծպտյալ հայեր, որոնց թիվը, ըստ տարբեր աղբյուրների, 1 միլիոն է: *«1915-ի դեպքերից հետո Անատոլիայում մնացած այս հայերի մեծ մասը՝ ամենաքիչը կեսը, թուրքերի կամ քրդերի մեջ*

[1] *Gezgin Y.,* (Kripto) Ermeniler Ermenilere Karşı, Aktif Haber, 18.04.2008.

*շարունակում են ապրել որպես խսկական մուսուլմաններ: Եթե նույնիսկ գիտեն էլ իրենց նախկին ինքնության մասին, ապա, միևնույն է, նպատակ չունեն վերադառնալ դրան: Սակայն Եվրոպայից ֆինանսավորվող որոշ կազմակերպություններ ցանկանում են այս հատվածի կրթված երիտասարդներին հիշեցնել իրենց հայկական արմատները: Այս մեկ միլիոնի զգալի մասը, իմանալով և գիտակցելով իր հայկական ինքնությունը, ներկայանում է որպես թուրք կամ քուրդ: Այս մասը մի կողմից՝ քուրդ և քրդական ինքնությամբ PKK-ի և նրա քաղաքական կազմակերպության ամենաառջևում է տեղ զբաղեցնում, մյուս կողմից՝ ազգային, նույնիսկ ազգայնական ինքնությամբ ամենառասիստ թուրքիստների շարքերում է տեղ գտնում: Սակայն ամենաազդեցիկ տեղը, որ զբաղեցնում են այս կրիպտո-հայերը, քաղաքացիական և զինվորական բյուրոկրատիան է: Քրդերի, թուրքերի, ալևիների մեջ տեղ զբաղեցնող ծպտյալ հայերը բյուրոկրատիայի կարևոր դիրքերում բավական ազդեցիկ են: Դատական, ռազմական համակարգերում և համալսարաններում բավական թվով ծպտյալ հայեր կան, և համալսարաններում գտնվողները տեղ-տեղ բացահայտվում են: Սակայն բանակի և դատական համակարգի մեջ եղածների անունները ոչ ոք համարձակություն չի ունենում արտասանել»*[1]:

Ըստ Յուսուֆ Գեզգինի՝ Թուրքիայի ծպտյալ հայերը բաժանվում են երկու խմբի. առաջինը նրանք են, ովքեր ցանկանում են ծպտյալ մնալով շարունակել իբրև թե թուրքական պետության ներսում իրենց ունեցած ազդեցությունը, երկրորդը՝ նրանք, ովքեր ցանկանում են բացահայտել ծպտյալ հայերին և

[1] Նույն տեղում:

այդպիսով ստեղծել ուժեղ հայկական ներկայություն: Եվ իբրև թե ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջև լուրջ պայքար է ընթանում: *«Ծպտյալ հայերի իրական ինքնությունը բացահայտելու և հայկական զաղութ ստեղծելու քաղաքականությունը պաշտպանվում է հայկական սփյուռքի կողմից, որը հավատում է հայկական ծագմամբ մարդկանց արմատներին վերադարձնելու անհրաժեշտությանը: Ամերիկացի, եվրոպացի հետազոտողների, զբոսաշրջիկների, լրագրողների անվան տակ ուղևորություններ են կազմակերպվում այն վայրեր, որտեղ բնակվում են հայկական ծագմամբ քաղաքացիները, այստեղի հայկական ինքնությունն ավելի ամրապնդելու, կազմակերպելու ուղղությամբ աշխատանքներ են կատարում: Եվրամիության ֆոնդերից օգտվելով՝ Անատոլիայի հայկական հուշարձանների վերականգնման համար ջանքեր են գործադրվում: Հայկական մշակույթը վերակենդանացնելու խնդրում պետության մեջ տեղ գտած ծպտյալ հայերն էլ լուրջ աջակցություն են ցույց տալիս: Ես կարծում եմ, որ Եվրատեսիլների ժամանակ Թուրքիայից Հայաստանին տրված բարձր միավորները հայկական ներկայությունն ապացուցելուն միտված ատրակցիոն են: Իսկ մյուս խումբը կողմ չէ բացությանը և կարծում է, որ իր ուժը զաղտնի լինելու մեջ է: Այս խումբը հավատում է, որ ծպտյալ հայերին պետության, PKK-ի, ազգայնականների մեջ ներդնելով՝ կկարողանա հեշտությամբ ներսից ծնկի բերել, մասնատել թուրքական հասարակությունը, պետությունը: Այս խումբն անհանգստանում է, որ բաց քաղաքականությամբ կզաղտնազերծվեն այն դիրքերը, որ ձեռք են բերել երկար տարիների աշխատանքով: Նրանք կարծում են, որ ծպտյալ մնալն ավելի ազդեցիկ և ձեռն-*

*տու է նպատակին հասնելու և թուրքերից վրեժ լուծելու համար: Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացն սկսելու հետ մեկտեղ ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջև լուրջ պայքար է սկսվել»*[1]: Հոդվածագիրն ավելի հեռուն է գնում և Հրանտ Դինքի սպանությունը վերագրում ծպտյալ հայերին. *«Ես այնքան էլ անհավանական չեմ համարում նաև այն, որ Հրանտ Դինքին, որը կողմ էր բաց լինելուն և խոսում էր ծպտյալ հայերի գոյության մասին, սպանել են ազգայնականների մեջ ներդրված ծպտյալ հայերը»*:

Ըստ Գեզգինի բաց քաղաքականություն վարող և հայկական ինքնությունը բացահայտել ձգտող խումբը, ի տարբերություն մյուս խմբի, ավելի «մաքուր, անմեղ է»: Նրա կարծիքով՝ ինքնաբացահայտվող ծպտյալ հայերն անհամեմատ ավելի քիչ վնաս կարող են պատճառել Թուրքիային: Հոդվածագիրն ավելի է բացում խաղաթղթերը և վերլուծում հնարավոր զարգացումները, որոնց կարող են հանգեցնել ծպտյալ հայերի ինքնաբացահայտումը և վերադարձն արմատներին. *«Անատոլիայում մի ժամանակ բնակչության մոտավորապես մեկ չորրորդը հայերն են կազմել, շատ լավ բարեկամություն, հարևանություն են արել, և նույնիսկ համարվել են «հավատարիմ ազգ»: Այսօր եթե բոլորն էլ իրենց արմատներին վերադառնան, չեմ կարծում, թե Թուրքիայի բնակչության հազիվ 1 տոկոսը գերազանցող հայ բնակչությունը երկրի համար պրոբլեմ կլինի: Սակայն ծպտյալ հայերն արդեն մեկ դար է՝ ոչ հայերին, ոչ էլ թուրքերին հանգիստ չեն տալիս»*[2]:

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

Վերջում Գեզգինն անդրադառնում է թուրքական հայտնի թեզին, թե ծպտյալ հայերը ներդրված են ամենուր, և նրանցից մեծ վտանգ է սպառնում. *«Այս երկրում ծպտյալ հայերը մեր մեջ են այն աստիճան, որ կարող են լինել թուրքական ազգայնականության ղեկավար, Շվեցարիայում՝ Լոզանում, հայկական թեզերին թուրքական կողմի անունից պատասխան տվող, ազգայնական ցույցերում առջևում թուրքական դրոշը թափահարող»:*

Իսկ այս խնդրով զբաղվող մեկ այլ լրագրող՝ Մեհմեթ Շնքեթ Էյգին նշում է, որ այս խնդրի շուրջ պետք է զգույշ գրել և խոսել: Ըստ նրա՝ ծպտյալ հայերից պետք է տարանջատել բացահայտ հայերին, որոնք Թուրքիայում ապրում են որպես փոքրամասնություն: *«Ճիշտ չէ մեղադրել ծպտյալ հայերի մեծամասնությանը (լինեն 500 հազար կամ էլ 1.5 միլիոն): Նրանց մեծ մասը, իմ կարծիքով, խիկապես մուսուլման է դարձել: Սակայն փաստ է, որ այս կրիպտո-հայերի մեջ կան մարդիկ, որոնք վնաս են տալիս Թուրքիային»*[1]: Այնուհետև նա ևս, շարունակելով բազմիցս հնչած կարծիքը, թե Թուրքիայում տեղի ունեցած գրեթե բոլոր բացասական երևույթների համար մեղավոր են հայերը՝ լինեն բացահայտ, թե ծպտյալ, նշում է. *«1960թ. մայիսի 27-ի հեղաշրջման մեջ նրանք (ծպտյալ հայերը) մեծ դեր են ունեցել: PKK-ի շարժումն իրականում ոչ թե քրդական, այլ հայկական շարժում է: Վերջին 60 տարվա ընթացքում բոլոր ահաբեկչությունների, հեղաշրջումների, խռովությունների, հուզումների, բռնությունների մեջ դեր են ունեցել կրիպտո-հայերը: Կրկին հայկական փոքրամասնության անդամ իմ քաղաքացիներին առանձնացնելով՝ ասում եմ. այսօր իսլամի, մուսուլմանների, Ղուրանի, սրբության դեմ ամենակատաղի հարձակվողներն*

[1] *Eygi M.,* Anadolu"da 500 Bin Ermeni Varmış!.., Milli gazete, 26.05.2008.

*արտաքուստ թուրք և մուսուլման երևացող կրիպտոներն են»*[1]:

Ծպտյալ և իսլամացված հայերի խնդրին վերջերս սկսել են անդրադառնալ նաև ադրբեջանցի «վերլուծաբան-գիտնականնե-րը»՝ ձայնակցելով ավագ եղբայրներին: Մասնավորապես, ադր-բեջանական «Եվրասիայի անվտանգության և ռազմավարու-թյան կենտրոն»-ի նախագահ, քաղաքագիտության դոկտոր Հա-թամ Ուլուխանլըն հայերեն հոդվածով է հանդես եկել, որտեղ նշում է. *«Թուրքիայի կրիպտո-հայերը մինչև Հայաստանի ան-կախության հայտարարելը պրոբլեմ չէին եղել: Սակայն այդ տարեթվից հետո կրիպտո-հայերի ազգային և կրոնական անց-յալում լուրջ ակտիվություն է սկսվել: Կրիպտո-հայերը թուրքա-կան հասարակության մեջ չմիաձուլվելու համար ազգային պատկանելությունը, ազգային սովորությունները կարողացել են պահպանել: Վերջին ժամանակներս այդ հայերը դատարանի որոշմամբ անուն-ազգանունները հայերենով փոխարինում ու քրիստոնեական կրոնն են ընդունում»*[2]:

Թուրքիայում հայերի թեմայի շահարկումն այն աստիճա-նի է հասել, որ անգամ հոդվածով է հանդես եկել մոլի թուրքա-սեր, «Գորշ գայլեր» կազմակերպության անդամ, «հայազգի» Լևոն Փանոս Դաբաղյանը: Նույնիսկ ծայրահեղ թուրքասեր «հայը» հարց էր տալիս, թե եթե հայերը չլինեին, ինչո՞վ պետք է զբաղվեին ոմանք, նրանց համար ի՞նչը պետք է լիներ գրելու նյութ և այդպիսով նաև ապրուստ հոգալու միջոց: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցին՝ ասելով, որ այդ դեպքում նրանց

[1] Նույն տեղում:

[2] *Ուլուխանլը Հ.,* Թուրքիայի կրիպտո-հայերը http://www.irevan-az.com/?reqid=100&id=64&lang=0&issue=analytics&year=-2009&month=1&day=29&kind=1&queue=1&qcomn=1&srchmode=0&wsrch=

համար նյութ ուղղակի չէր լինի: Նա անդրադարձել է նաև հայերի իսլամ ընդունելու խնդրին՝ նշելով, որ հայերի իսլամացումը ոչ թե 1915-ի, իր ձևակերպմամբ՝ աքսորի, այլ թուրքերի և հայերի առաջին շփման ժամանակ է սկսվել, որը շարունակվել է նաև օսմանյան շրջանում: Իսկ խոսելով ցեղասպանության ժամանակ իսլամ ընդունած հայերի մասին՝ նա մեջբերում է այդ տարիներին արձակված հրամանը, որով թուրք ոստիկանները շրջում էին մուսուլմանների տները և պահանջում հանձնել իրենց մոտ ապաստան գտած հայերին: Այդ հրամանում հետագայում ավելացվել է, որ եթե հայերը նույնիսկ իսլամ էլ են ընդունել, ապա, միևնույն է, պետք է հանձնել նրանց: *«Եվ այսքանից հետո փրկվածներին այսօր PKK-ական համարելը, պիտակ կպցնելը որքանո՞վ է պատվաբեր»*[1]:

Այս բոլոր շահարկումները, մեր կարծիքով, «տեղավորվում» են ավելի լայն ընկալման մեջ. հանրապետական Թուրքիայում հայերը միշտ էլ ներկայացվել են որպես դավաճան, «5-րդ շարասյուն», և այս ամենը կատարվել է պետական ամենաբարձր մակարդակով: Այս նույն համատեքստում կարելի է տեղավորել Թուրքիայում թշնամի ունենալու անհրաժեշտությունը, իսկ թշնամու ամենահարմար «թեկնածուն» հայերն են:

[1] *Dabağyan L.,* Şayet Ermeni olmazsa yazacak ne kalırdı?, Önce Vatan, 06.06.2008.

## *Թուրքական պետական կառույցների մոտեցումը կրոնափոխ հայերի խնդրին*

Բնական է նաև, որ թուրքական պետական կառույցները ևս հետաքրքրված են ծպտյալ և իսլամացած հայերի խնդիրներով: Այս մասին են վկայում ժամանակ առ ժամանակ մամուլում, վերլուծական տեղեկագրերում հայտնվող մանրամասն տվյալները կրոնափոխ հայերի ներկայիս բնակության վայրերի, թվաքանակի, նրանց շրջանում ընթացող գործընթացների մասին: Թուրք պատմաբան Թաներ Աքչամը նշում է, որ թուրքական պետությունը հենց սկզբից է միջոցներ ձեռնարկել Ցեղասպանության տարիներին իսլամ ընդունած հայերին հետագայում տարբերակելու համար, և, օրինակ, համապատասխան մարմիններից պահանջվել է գրանցամատյաններում հայերի անունների դիմաց հատուկ նշումներ անել և անձնագրերը լրացնել այնպես, որպեսզի հասկացվի նրանց հավատափոխ լինելը[1]:

Այս համատեքստում ուշադրության է արժանի Հալաչօղլուի վերոնշյալ հայտարարության մեկ այլ նրբերանգ ևս. պատմակեղծարարը հայտարարել էր, որ ունի հայ հավատափոխների ցուցակները, որոնք պատրաստվել են բծախնդրությամբ, ավելին՝ *«պետությունը տուն առ տուն շրջելով արձանագրել է այս մարդկանց»*[2]: Խնդիրն ավելի հետաքրքիր ենթատեքստ է ձեռք բերում նաև այն պատճառով, որ Հալաչօղլուն խուսափում է նշել կոնկրետ աղբյուրը: Բնականաբար, հարց է ծագում. եթե այդ մարդկանց գրանցել է պետությունը, ապա դա պետք է արված լիներ պետական օղակների և դրանց հատկացված գործա-

[1] *Türker Y.,* Hepimiz maalesef Ermeniyiz!, Radikal, 27.08.2007.

[2] *Özgür B.,* Halaçoğlunun listesi 1935teki “gizli’ nüfus sayımdan mı çıktı, Referans,08.09.2007.

ռույթների միջոցով։ Իսկ մարդկանց գրանցելու ընդունված տարբերակներից է մարդահամարը։ Հայտնի է, որ Թուրքիայում առաջին անգամ մարդահամար անցկացվել է 1927թ., դրանից հետո՝ սկսած 1935-ից, որոշում է ընդունվել մարդահամար անցկացնել հինգ տարին մեկ։ Սակայն թուրքական աղբյուրներում հանդիպում ենք տվյալների, որոնք ապացուցում են, որ, օրինակ, 1935թ. Թուրքիայում անցկացվել են նաև կրկնակի մարդահամարներ։ Այսպես, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արձանագրությունների մատյանում պահվող փաստերը վկայում են, որ 1934թ. մայիսի 29-ին Թուրքիայի մեջլիսն ընդունել է թիվ 2465 օրենքը, որով նախատեսվում էր 1935թ. մարդահամար անցկացնել։ Սակայն ուշագրավ է, որ մոտ մեկ ամիս անց նույն մեջլիսն ընդունել է 2576 թվագիր օրենքը «գաղտնի բնակչության» մարդահամարի մասին, որն ուժի մեջ է մտել նույն թվականի հունիսի 15-ին[1]։ Այսպիսով, անցկացվել է երկու տեսակի մարդահամար, և «գաղտնի բնակչության» մարդահամարն ավարտվել է 1935թ. հուլիսին, իսկ «համընդհանուր»-ն անցկացվել է նույն թվականի հոկտեմբերին։ Վերոնշյալ օրենքը բաղկացած է եղել 12 հոդվածից, որոնցից առաջինը պահանջում էր, որ բոլորը 1,5 ամսվա ընթացքում տեղեկացնեն իրենց տանը կամ ենթակայության տակ գտնվող գաղտնի բնակչության մասին, չորրորդ հոդվածը 1-10 լիրա պատիժ էր սահմանում ճիշտ տեղեկություն չտվողների համար։ Բնականաբար, «գաղտնի բնակչության» մարդահամար անցկացնելու պաշտոնական պատճառաբանությունը բավական տրամաբանական էր, և չենք էլ բացառում, որ այդ մարդահամարները, իրոք, ունեցել են նաև զուտ

[1] Նույն տեղում։

բնակչության իրական թվաքանակը որոշակիացնելու նպատակ: Սակայն միամտություն կլինի կարծել, թե «գաղտնի բնակչության» մարդահամարի ընթացքում լրացուցիչ չի ճշգրտվել մուսուլմանների մոտ ապաստանած կամ հետագայում իսլամ ընդունած հայերի թվաքանակը: Պետության կողմից մանրամասն փաստեր հավաքելը, հատկապես Դերսիմ նահանգում ապրող կրոնափոխ հայերի մասին, մեր կարծիքով՝ ունեցել է կոնկրետ նպատակ: Հայտնի է, որ 1938թ. թուրքական պետությունը կոտորած է կազմակերպել Դերսիմում, և պատմելով այդ մասին՝ մեր զրուցակից դերսիմցի շատ ալևիներ մեջբերում էին իրենց ավագներից ու կոտորածի ժամանակակիցներից լսածները, որոնց համաձայն՝ այդ ժամանակ թուրքական բանակի թիվ մեկ թիրախը 1915-ին այնտեղ ապաստանած հայերն էին: Ինչպես նշեց մի տարեց զրուցակից. *«1915-ին կիսատ թողածը շարունակեցին 1938-ին, և այդ կոտորածի ժամանակ սպանվեցին մեծ թվով կրոնափոխ հայեր»:* Անվիճելի է, որ Թուրքիայում հայերը՝ լինեն բացահայտ, ծպտյալ, թե իսլամացված, միշտ գտնվում են պետության լուրջ հսկողության ներքո և ընկալվում են որպես պոտենցիալ վտանգ: Սա հաստատում է նաև հետևյալ ուշագրավ տվյալը. հայտնի է, որ 1980թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում իրականացվեց ռազմական հեղաշրջում և իշխանությունն անցավ բարձրաստիճան զինվորականներից կազմված Ազգային անվտանգության խորհրդի ձեռքը, որը տեղերում նշանակեց Արտակարգ դրության հրամանատարներ, որոնք օժտված էին անսահմանափակ լիազորություններով: 1982թ. սեպտեմբերի 8-ին արտակարգ դրության հրամանատարությունը անվտանգության ծառայությունից պահանջում

է տարածքներում ստուգել, թե արդյոք հայեր կամ հայկական ծագմամբ մարդիկ կան, և եթե կան, ապա գրանցել նրանց ու վերցնել հսկողության տակ: Թուրքական «Ռադիկալ» թերթը հրապարակել է նաև Թուրքիայի անվտանգության ծառայության նախկին մի աշխատակցի խոստովանությունը, որտեղ մասնավորապես ասվում է. *«Արտակարգ դրության հրամանատարությունից մեզ գրավոր հրաման եկավ: Մենք ուսումնասիրեցինք մեր պատասխանատվության տակ եղած շրջանը, հարցրինք, թե արդյոք այնտեղ կան հայկական ծագում ունեցող քաղաքացիներ: Արտակարգ դրության ժամանակաշրջանն էր, բոլորը վախենում էին, և քանի որ հայերը համարվում էին «անջատողական», ուստի, եթե կային, ոչ ոք չէր համարձակվում թաքցնել»*[1]: Հարկ ենք համարում ավելացնել նաև, որ նմանատիպ կարգադրությունները հանրապետական Թուրքիայի պատմության մեջ եզակի չեն և հանդիպում են տարբեր ժամանակաշրջաններում:

Ակնհայտ է, որ թուրքական պետական տարբեր օղակներ, վերլուծական, հետազոտական կենտրոններ զբաղված են ծպտյալ և իսլամացված հայերի մասին նոր տվյալներ ձեռք բերելու գործով, և թուրքական «Աքսիոն» հանդեսում հրապարակված ցուցակը, որտեղ տվյալներ են նշվում ներկայումս Թուրքիայում բնակվող ծպտյալ հայերի բնակության վայրերի, թվաքանակի մասին, դրա լավագույն ապացույցն է: Հետաքրքրական է, որ թուրքական հանդեսի տեղեկության համաձայն՝ այդ տվյալներն անընդհատ փոփոխվում են, քանի որ աշխատանքները շարունակվում են:

[1] *Işık T.,* Ermenileri fişleyin, Radikal, 4.10.2007.

Ստորև ներկայացնում ենք այդ հանդեսում տեղ գտած տվյալները Թուրքիայում բնակվող ծպտյալ հայերի թվաքանակի և աշխարհագրական սփռվածության, ինչպես նաև «պաշտոնական» կարգավիճակի մասին[1]:

| ՔԱՂԱՔԸ | ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ | «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ |
|---|---|---|
| Դիարբեքիր | 1000 ընտանիք | քուրդ, ասորի, ալևի |
| Մալաթիա | 3655 ընտանիք | քուրդ-ալևի |
| Կեսարիա | 5000 ընտանիք | թուրք |
| Էլյազիգ (Խարբերդ) | 1000 ընտանիք | քուրդ, ալևի |
| Վան | 4000 ընտանիք | քուրդ |
| Թունջելի (Դերսիմ) | 2000 ընտանիք | քուրդ-ալևի |
| Շանլըուրֆա | 3500 ընտանիք | քուրդ, արաբ |
| Սղերթ | 1200 ընտանիք | արաբ, քուրդ |
| Հաթայ (Ալեքսանդրեթ) | 1100 ընտանիք | արաբ |
| Բիթլիս | 200 ընտանիք | քուրդ |
| Էրզրում | 3000 ընտանիք | քուրդ, ալևի, թուրք |
| Երզնկա | 1300 ընտանիք | ալևի, քուրդ |
| Սեբաստիա | 2000 ընտանիք | քուրդ, ալևի |
| Մարդին | 1500 ընտանիք | արաբ |
| Քահրաման Մարաշ | 3000 ընտանիք | քուրդ, ալևի |
| Ադըյաման | 1600 ընտանիք | քուրդ |
| Ադանա | 2000 ընտանիք | քուրդ, արաբ, ալևի |

[1] *Söylemez H.,* Türkiye'de, Araplaşan binlerce Ermeni de var, http://www.aksiyon.com.tr/detaylar.do?load=detay&link=17376

## *Ցեղասպանությունը վերապրած Սասունի հայության արդի խնդիրների շուրջ*[1]

Ինչպես հայտնի է, Սասունը միշտ էլ առանձնահատուկ դեր է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ: Մեր օրերում ևս, հատկապես իսլամացված ու ծպտյալ հայերի թեմայի առումով, Սասունն աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով: Պետք է ասել, որ լինելով խիստ լեռնային գոտի՝ երկրամասը ներկայումս ծայրահեղ հետամնաց վիճակում է: Բավական է նշել, որ ասֆալտապատ ճանապարհը հասնում է մինչև Սասուն անվանակոչված գյուղաքաղաք, իսկ այնտեղից դեպի գյուղեր տանող ճանապարհներ, որպես այդպիսիք, չկան, և միայն մեկ-երկու տարի առաջ տրակտորներով հարթեցրել են ձորերի եզրերով ձգվող նեղլիկ ուղիները, որոնցով մեքենաները մի կերպ կարող են անցնել: Տեղի բնակիչները սովորաբար գյուղաքաղաք գնում և վերադառնում են ոտքով: Շատ գյուղերում չկան դպրոցներ, մարդիկ հիմնականում բնակվում են մինչև 1915 թվականը կառուցված հին հայկական տներում: Հատկանշական է, որ չնայած բոլոր գյուղերի անունները, աշխարհագրական տեղանունները պետությունը փոխել է, սակայն ժողովրդի մեջ մինչև օրս էլ օգտագործվում են հին անունները: Օրինակ, լեգենդար Մարութա սարը ներկայումս վերանվանված է Այդընլըք դաղ, սակայն ոչ ոք այդ նոր անունով չի կոչում: Ավելացնեմ, որ Մարութա սարը մինչև օրս էլ յուրահատուկ հոգևոր խորհրդանիշի դեր ունի Սասունում բնակվողների համար և երբեմն

[1] Ցեղասպանությունը վերապրած Սասունի հայերի և նրանց սերունդների մասին ներկայացվող այս նյութի համար հիմք են հանդիսացել 2008թ. Սասունի մի շարք բնակավայրերում մեր կողմից կատարված դաշտային-հետազոտական աշխատանքները:

վկայաբերվում է որպես երդում:

Թուրքական պաշտոնական տվյալներով՝ այսօր Սասունում բնակվում են թուրքեր, քրդեր և արաբներ. վերջինները գաղթել են Բասրայից և խոսում են յուրահատուկ արաբական բարբառով[1]: Տարբեր աղբյուրներում հանդիպում են նաև կցկտուր տվյալներ, որոնք վկայում են, որ Սասունում կան Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայեր և նրանց հետնորդներ, որոնց մի մասը ծպտյալ քրիստոնյաներ են, իսկ մի մասը՝ իսլամացված, ուծացած կամ այդ ճանապարհին գտնվողներ: Սասունում են բնակվում նաև ինչ-որ առումով պարադոքսալ թվացող արաբացած հայերը և նրանց հետնորդները: Նրանց մեջ նույնպես նկատվում են ընդհանրապես իսլամացված հայերին բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Այս մարդկանց նախնիների մի մասին Ցեղասպանության ժամանակ ապաստան են տվել և փրկել (հաճախ՝ շահադիտական նկատառումներով) տեղի մուսուլման բնակիչները՝ արաբները, քրդերը: Փրկվելուց հետո նրանք արտաքուստ և պաշտոնական փաստաթղթերում ստիպված են եղել հանդես գալ որպես իրենց ապաստան տված ազգի ներկայացուցիչներ: Այս մասին Թուրքիայում գործող սասունցիների միության ներկայացուցիչ Էրդալ Ցլդըրըմը նշում է, որ ժամանակին որոշ մուսուլմաններ փրկել են իրենց պապերին, սակայն այն պատճառով, որ պապերն արհեստավորներ էին, և դա փրկողներին էլ է ձեռնտու եղել: «Փրկարարներն» իրենց մեջ բաժանել են ինչպես հայերին, այնպես էլ նրանց ունեցվածքը, այսինքն՝ կարելի է ասել, որ հայերը շահագործվել են որպես ստրուկներ, և սա հաստատող պեր-

[1] *Սոյտան Է.,* Սասուն, Ակօս, 5.09.2008:

ճախոս փաստ է այն, որ փրկող աղաների մեջ տարածված է եղել «իմ հայը» հասկացությունը: Այս մասին Էրդալ Ցլըըրըմն ասում է. *«Մեր հարևանները, այսինքն՝ աղաները, մեզ իրար մեջ բաժանել էին: Ամեն մի հայ ընտանիքի մի աղա էր վերցրել, և կար «իմ հայը» խնդիրը: Մեզ պատկանող ամեն ինչ նրանք ընկալում էին իրենցը, որովհետև իրենք իրենց համարում էին մեր տերը»*[1]:

Սասունի վերապրած հայությանը և նրա հետնորդներին կարելի է բաժանել երկու խմբի. 1. ծպտյալ հայեր, 2. արաբացած հայեր, ընդ որում՝ երկրորդ խմբի մեջ պայմանականորեն ընդգրկում ենք նաև հայերի խառնածին հետնորդներին:

***1. Ծպտյալ հայեր.*** նրանցից շատերին երբեմն միայն պայմանականորեն կարելի է համարել այդպիսին: Ինչպես մեզ հայտնի դարձավ սասունցի հայերի հետ բազմաթիվ զրույցներից, շփումներից, նրանց մեծ մասը ծպտյալ կամ բացահայտ քրիստոնյաներ են: Շատերը հպարտությամբ խոստովանում էին, որ ամեն տարի հուլիսին ուխտի են գնում Մարութա սարի գագաթին գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցի, ինչպես իրենք են ասում. «Մարթկա սարի ուխտին», մատաղ անում, այցելում են նաև Գոմքի եկեղեցի, մոմ վառում և այլն: Կան նաև տարիքային տարբեր խմբերի պատկանող սասունցիներ, որոնք տարբեր մակարդակով տիրապետում են հայերենին՝ Սասնո բարբառին: Մենք հաղորդակցվում էինք համարյա թե ազատ, բայց, միևնույն է, երբեմն առաջանում էին խոչընդոտներ. նրանք ինձ ասում էին. «Քու լեզուդ մեզի ծանր կուգա, լաո»: Նկատելի է նաև հայերեն սովորելու այն մեծ ձգտումը, որ ունեն նրանցից շատերը:

[1] http://www.hyetert.com/yazi3.asp?s=0&AltYazi=Makaleler%20\>%20Anadolu%20Ermenileri% 20deðerlerine%20saygý%20istiyor&Id=322&DilId=1

Սակայն հարկ է նշել, որ Սասունում բնակվողների մեջ ևս առկա է վախի մթնոլորտը, որի հետևանքով հաճախ խուսափում են իրենց էթնիկ կամ իրական կրոնական ինքնության մասին բացահայտ խոսել:

Հետաքրքիր օրինաչափության տիպի մի երևույթ ևս նկատելի է սասունցիների մեջ. այսօրվա Սասունում բնակվող շատ հայեր կամ նրանց հետնորդներ ազգակցական կապեր ունեն Հայաստանի Հանրապետությունում, հատկապես՝ Թալինում բնակվող սասունցիների ժառանգների հետ, և որքան էլ տարօրինակ է, վերջերս այս ուղղությամբ սկսել են քայլեր արվել. տասնամյակներ անց մարդիկ գտնում են իրենց ազգականներին, որոնց մի մասը ծպտյալ է, մի մասն էլ՝ իսլամացված և խառնածին:

Վերջին տարիներին նկատելի է նաև արտագաղթ Սասունից դեպի Թուրքիայի մեծ քաղաքներ, հատկապես՝ Ստամբուլ: Վատ պայմանների պատճառով մարդիկ ստիպված են արտագաղթել, սակայն հետաքրքիր օրինաչափությամբ չեն կտրում կապն իրենց հայրենիքի հետ, և տարին մեկ անգամ, հատկապես ամռանը, այցի են գալիս այստեղ: Սակայն այդ գաղթի մեջ նույնպես կա դրական կողմ. գալով Ստամբուլ՝ նրանց մեծ մասը բացահայտ ընդունում է քրիստոնեություն, եթե դա հնարավոր է, եթե ոչ, ապա, միևնույն է, ձգտում է ինտեգրվել քրիստոնեական համայնքին. այցելում է պատարագների, կնունքների և այլն: Այսինքն՝ գաղթը թույլ է տալիս նրանց մեջ առկա քրիստոնեության տարրերն ավելի խորացնել և ամրապնդել:

Խոսելով Սասունի վերապրած հայության մասին՝ կցանկանայինք նշել նաև մի հետաքրքիր մանրամասն, որին հանդիպեցինք Սասունում. դա կապված էր, որքան էլ զարմանալի է,

«Սասնա ծռեր» էպոսի՝ ժողովրդի շրջանում պահպանված հիշողության հետ: Մասնավորապես, հանդիպում էին մարդիկ, որոնք պնդում են, թե իրենք Սասունցի Դավթի սերնդից են. սա, իհարկե, կրում է առասպելական բնույթ: Այդ մարդիկ դրանով ցանկանում են ընդգծել իրենց քաջ, անվախ լինելը: Մեզ հանդիպած մարդիկ, ովքեր խոսում էին այդ մասին, ծպտյալ հայեր էին, սակայն ավելի ուշ «Ակօս» թերթում թուրք լրագրող Էրսոյ Սոյդանն իր ճամփորդական նոթերում գրել էր, որ նման երևույթի է հանդիպել Սասունի մուսուլմանների մոտ. *«Այսօր Սասունի մէջ մարդիկ կան, որոնք կըսեն, թէ իրենք Սասունցի Դաւիթի ցեղին կը պատկանին: Ասոնց մեծ մասը մահմետական ըլլալով հանդերձ, չեն խուսափիր այսպէս արտայայտուելէ»*[1]:

Ավելորդ չէ նշել, որ սասունցիներին բնորոշ համարձակությունը երբեմն նկատվում է նաև նրանց մերօրյա հետնորդների մոտ, որոնք համարձակորեն խոստովանում և փորձում են տեր կանգնել ինչպես իրենց ինքնությանը, այնպես էլ մշակութային արժեքներին: Այսօր Սասունում պահպանված հայկական կրոնամշակութային հուշարձաններից ժողովրդի մեջ շարունակում են յուրահատուկ դեր ու նշանակություն ունենալ հատկապես 2000մ բարձրության վրա գտնվող Գոմքի[2] և Մարութա սարի գագաթին (2973մ) գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցիները: Թեկուզ կիսավեր, թալանված, գոմի վերածված՝ դրանք այսօր էլ դեպի իրենց են ձգում հազարավոր ուխտավորների, որոնց մեծ

[1] *Սոյտան Է.,* Սասուն, Ակօս, 5.09.2008:

[2] Ստամբուլի «Ակօս» թերթի խմբագիրներից Սարգիս Սերոբյանը նշում է, որ ներկայումս է ժողովուրդը այդ եկեղեցին անվանում Գոմքի կամ «365 սենյակներով եկեղեցի», սակայն նախկինում այն անվանվել է «Պետրոս Առաքյալի Օսկե ճկունդ», տե՛ս *Սերովբեան Ս.,* Քէլէ Լաօ, Ակօս, 4.04. 2008:

մասը ծպտյալ, իսլամացված հայերն ու իրենց հետնորդներն են:

Հայտնի է, որ Թուրքիայի Հանրապետությունը որդեգրել և տարիներ շարունակ կիրառում է հայկական քրիստոնեական հուշարձանների ոչնչացման կամ էլ իսլամացման, թուրքացման քաղաքականություն: Նպատակն, անշուշտ, այդ տարածքների հայկականությունը ջնջելն է: Տարբեր դիտարկումներ թույլ են տալիս եզրակացնել, որ հայկական հուշարձանները ոչնչացնելու կամ հայկականությունը ջնջելու համար թուրքական իշխանությունները կիրառում են տարբեր մեթոդներ.

1. Հայկական պատմական հուշարձանները մատնվում են անուշադրության և ժամանակի ընթացքում, անխնամ մնալով, ավերվում են:
2. Հայկական եկեղեցիները որպես սեփականություն հանձնվում են ներկայումս այդ տարածքներում բնակվող թուրքերին և քրդերին, որոնք էլ դրանք տնօրինում են ըստ իրենց կամքի:
3. Պետական կարիքները պատրվակ համարելով՝ հուշարձանները քանդվում են:
4. Հայկական կրոնամշակութային հուշարձանները զանազան միջոցներով թուրքացվում, իսլամացվում են:

Բնական է, որ Պոլսո Հայոց պատրիարքարանը կամ համայնքը որոշ ջանքեր են գործադրում հայկական հուշարձանների պահպանության համար, որոնք, ինչպես ցույց են տալիս փաստերը, սպասելի արդյունք չեն տալիս: Սակայն ուշագրավ է, որ հայկական կրոնամշակութային հուշարձանների, գերեզմանների պահպանության ուղղությամբ վերջերս սկսել են

ջանքեր գործադրել նաև սասունցի հայերը: Այսպես, Թուրքիայում բնակվող մի խումբ սասունցի հայեր ստեղծել են հասարակական կազմակերպություն, որը սկսել է պայքար մղել Սասունի կիսավեր հայկական եկեղեցիների և գերեզմանատների համար: Կազմակերպության նախագահ Ազիզ Դաղչըն սկզբնական շրջանում (2006թ.) միայնակ է փորձել գործել, սակայն պետական տարբեր օղակների հետ հարաբերվելիս բախվել է զանազան դժվարությունների և հասկացել, որ ավելի նպատակահարմար է գործել հասարակական կազմակերպության միջոցով և ձևավորել է սասունցիների միությունը: Կազմակերպությունը դիմում է պատկան մարմիններին՝ ներքին գործերի նախարարություն, նահանգապետարան, կադաստրի կոմիտե և հասնում է մինչև Թուրքիայի Ազգային ժողովի մարդու իրավունքների հանձնաժողով: Նրանք պահանջում են գերեզմանատները գրանցել որպես հայկական, եկեղեցիներին նույնպես պատշաճ վերաբերմունք ցուցաբերել, թույլ տալ, որ ավերված և հաճախ ախոռի վերածված, թալանված եկեղեցիներում կատարվեն արարողություններ, քահանա այցելի և այլն[1]: Կադաստրի կոմիտեում եկեղեցիները գրանցված են որպես ավերակ տուն, հայկական գերեզմանները՝ որպես անտառ, հողատարածք և այլն: Սասունցիների միությունը պահանջում է դրանց ճիշտ վերագրանցում: Ինչպես նշում է Ազիզ Դաղչըն, *«Պետությունը չի ուզում դրանք գրանցել որպես հայկական գերեզմանատուն, չի ցանկանում օգտագործել անգամ հայ բառը: Սակայն սահմանադրության հոդվածների համաձայն՝ պարտավոր է գրանցել»*[2]:

[1] Ermeniler Batmani terk etmis!, Agos, 9.05.2008.

[2] http://www.hyetert.com/yazi3.asp?s=0&AltYazi=Makaleler%20\>%20Anadolu%20Ermenileri% 20deðerlerine%20saygý%20istiyor&Id=322&DilId=1

Ուշագրավ է, որ ի պատասխան այս կազմակերպության հարցման՝ Բաթմանի նահանգապետարանը (որի վարչական սահմանում է ներկայումս գտնվում Սասուն գավառը) պնդել է, որ եկեղեցիները և գերեզմանատներն ավերվել և լքվել են, քանի որ հայերը հեռացել են այդ տարածքներից[1]: Այսինքն՝ պետական կառույցներն ասում են, թե այդ վայրերում հայեր չկան, սակայն կազմակերպության անդամները պնդում են հակառակը՝ նշելով, որ այդ վայրերում ապրում են հայեր, այն էլ՝ ընտանիքներով: Ազիզ Դաղջըն նույնիսկ ավելացրել է. *«Եթե հարգելի նահանգապետը բարձրանար Մարութա սար, ապա կտեսներ, որ եկեղեցում անզամ մոմ են վառում»*[2]: Սասունցիների կազմակերպության անդամ Էրդալ Ցլդըրըմը փաստում է. *«Ամենացավալին այն է, որ մեր եկեղեցիներին և գերեզմանատներին ընդհանրապես հարգանք ցույց չեն տալիս: Երբ մարդ է մահանում, անհրաժեշտ է մեր սովորույթների համաձայն թաղել, սակայն դա չենք կարողանում անել»*[3]: Անդրադառնալով այդ տարածքներում հայ լինել-չլինելու խնդրին՝ նա նշում է. *«Երբ մեր պապերն այնտեղ ապրում էին, մուսուլման հարևաններ չունեինք, նրանք ավելի ուշ եկան, բնակություն հաստատեցին: Հիմա ասում են, թե հայ չի մնացել, պետք է հարցնել, թե ինչու հայ չի մնացել: Մեր ընտանիքներն էլ են մասնատվել. կեսը քրիստոնյա է մնացել, կեսը՝ իսլամացվել: Ես իսլամացված քեռիներ, հորաքույրներ ունեմ: Նրանք շարունակ ստիպված են ապացուցել, որ մուսուլման են:*

[1] Ermeniler Batmani terk etmis!, Agos, 9.05.2008.

[2] Նույն տեղում:

[3] http://www.hyetert.com/yazi3.asp?s=0&AltYazi=Makaleler%20\>%20Anadolu%20Ermenileri% 20deðerlerine%20saygý%20istiyor&Id=322&DilId=1

*Նրանց մի մասը նույնիսկ մուսուլմանից ավելի մուսուլման է դարձել»*[1]։

Ազիզ Դաղչըն և սասունցիների միությունը պահանջում են եկեղեցիներից օգտվելու իրենց բնական իրավունքը. *«Մենք չենք կարողանում օգտագործել մեր եկեղեցիները, որոնք ավերակի են վերածվել։ 1915-ից մինչև օրս մեր գյուղ մի քահանա չի այցելել։ Պետք է կնքվենք՝ գնում ենք Ստամբուլ, ամուսնությունների դեպքում ևս։ Մենք դեռ կանք Սասունում, այնտեղ դեռևս ընտանիքներով մնացածներ էլ կան։ Մենք հարյուրավոր եկեղեցիներ ունենք, որ օգտագործելի չեն։ Մեր ամենակարևոր եկեղեցին Մարութա սարի վանքն է, ամեն տարի հուլիսի 25-ին այնտեղ ենք գնում, մատաղ անում։ Այնտեղի հայերի քրիստոնյա մնալու ամենագլխավոր պատճառն այդ վանքն է։ Մուսուլմանների գերեզմանները գրանցում են, մեր հայերի գերեզմանները չեն գրանցում, սակայն ես կտակում, որ գրանցեն։ Ես արևելքի մարդ եմ և ես իմ գերեզմանը չեմ լքի»*[2]։

Եվ վերջերս Ազիզ Դաղչըի և սասունցիների միության պայքարը տվեց առաջին արդյունքը. Թուրքիայի հուշարձանների պահպանության հանձնաժողովը Մարութա սարի Սուրբ Աստվածածին եկեղեցին ընդգրկել է պետության պաշտպանության տակ գտնվող հուշարձանների շարքը։ Ի դեպ, հետաքրքիր է, որ այն Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցու նման ընդգրկվել է պահպանության ենթակա հուշարձանների առաջին խմբում, բայց դեռևս չի նշվում, թե նախատեսվում է արդյոք Մարութա սարի եկեղեցու վերականգնումը։ Սակայն ուշագրավը Ազիզ Դաղչըի հայտարարությունն էր. նա ասաց, որ մոտ ժամանակ-

[1] Նույն տեղում։

[2] Նույն տեղում։

ներս իրենք դիմելու են նաև այլ հայկական գյուղերում պահպանված եկեղեցիների և հայկական գերեզմանատների գրանցման պահանջով[1]:

Մեր կարծիքով՝ հատկապես ուշագրավ է այն, որ այս դեպքում հայկական մշակութային հուշարձանների պահպանության հարցն առաջ է քաշվում ոչ թե միջազգային կառույցների կամ Հայաստանի Հանրապետության, այլ ներսից՝ Թուրքիայի քաղաքացի սասունցի հայերի կողմից: Այս ամենը թույլ է տալիս խոսելու նոր զարգացումների կամ գոնե միտումների մասին, իսկ ծպտյալ և արդեն բացահայտված հայերի շրջանում հայկական հուշարձանների պահպանության ձգտումը կարելի է որակել որպես ազգային ինքնագիտակցության բաղադրիչ:

***2. Արաբացած հայերն*** ունեն առաջին հերթին մուսուլմանի ինքնագիտակցություն, սակայն չեն էլ ժխտում, որ ունեն հայկական արմատներ, բայց գերակա է կրոնական ինքնությունը: Արաբի կամ քրդի և մուսուլմանի գերակա ինքնությամբ այս մարդիկ Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված, այնուհետև ինքնությունը չպահած հայերի հետնորդներն են: Էթնիկ ինքնության մասին հարցին Սասունի տարբեր գյուղերում մեզ պատասխանում էին իսլամում տարածված հետևյալ արտահայտությամբ. «Փառք Աստծո, մուսուլման եմ»: Մեր դիտարկումները թույլ են տալիս ասել, որ Սասունի արաբացած հայերի մեջ հստակ պահպանված է հայկական ծագման հիշողությունը, ուղղակի այն ծածկված է կրոնական պատկանելության շղարշով, որը շատ հաճախ օգնում է նրանց խուսափել էթնիկ ինքնության հետ կապված վտանգավոր հարցից: Արաբացած հայերի մեջ տարածված է նաև այն մտածելակերպը, թե իրենք նախկինում հայ են եղել, սակայն հիմա մուսուլման են:

[1] Mereto nihayet koruma altında, Agos, 14.11.2008.

Այսինքն՝ կա էթնիկ և կրոնական պատկանելության միտումնավոր կամ ակամա շփոթում, աչքի է զարնում նաև նրանց կրոնամոլությունը: Սակայն պետք է նաև փաստել, որ արաբացած հայերը, որոնց մենք հանդիպեցինք, մեր հանդեպ ցուցաբերում էին դրական վերաբերմունք, որը կապված էր նաև էթնիկ ծագման հիշողության հետ: Ինչպես խոստովանեց նրանցից մեկը. «*Իմ արմատները հայկական են, դրա համար ես չեմ կարող ձեզ վատ վերաբերվել*»: Էթնիկ և կրոնական ինքնությունների միտումնավոր շփոթման հարցում, իհարկե, չպետք է անտեսել նաև հստակ վախի մթնոլորտը, որը տիրում է Թուրքիայում:

Այս նույն խմբում պայմանականորեն ընդգրկված խառնածիններն ունեն հայկական արմատներ՝ հիմնականում տատեր և, որի մասին հիշողությունն առկա է նրանց մեջ: Այս խումբը, ինչպես շատ այլ վայրերում, այնպես էլ Սասունում ձևավորվել է Ցեղասպանության ժամանակ առևանգված, ի պահ վերցված հայ աղջիկների, կանանց և մուսուլմանների խառնամուսնության հետևանքով: Ինչպես Սասունի կենտրոն Սասոն գյուղաքաղաքում, այնպես էլ գյուղերում կարելի է հանդիպել հայկական դիմագծեր ունեցող մարդկանց, հատկապես աչքի են զարնում այդ վայրերի հայերին բնորոշ կապտականաչ աչքերը, բաց մազերը: Իսլամացված հայերի խառնածին հետնորդները նույնպես լավատեղյակ են իրենց հայկական արմատների մասին: Սասունի գյուղերում գրեթե բոլորը գիտեին հայկական տների նախկին տերերի անունները. օրինակ, խոսքի մեջ շատ են օգտագործում «Ասատուրի տունը», «Տիգրանի տունը» արտահայտությունները: Շատերը նաև հպարտությամբ էին ասում, որ իրենք, օրինակ, Ասատուրի թոռն են աղջկա կողմից և այլն: Եվ հենց ջերմ հիշողություններն իրենց տատերի մասին ստիպում են շատերին դրական կամ առնվազն տարբերակված վերաբերմունք ցուցաբերել հայերի նկատմամբ:

## *Հայության տարբեր խմբերի փոխընկալման խնդիրը Թուրքիայում*

Մեր կարծիքով՝ չափազանց կարևոր և արդիական խնդիր է ինչպես Թուրքիայի, այնպես էլ ընդհանրապես քրիստոնյա հայության և ծպտյալ, իսլամացված հայության ու նրանց հետնորդների փոխադարձ ընկալումը: Հայաստանյան գիտական-վերլուծական շրջանակներում հարցը սկսել է ակտիվանալ վերջերս: Տասնամյակներով անհայտ, փակ խնդիրը, հրապարակ գալով, ոչ միանշանակ արձագանքներ է առաջացնում: Առաջին հերթին առկա է օբյեկտիվ անտեղյակության խնդիրը, որը հետզհետե վերանում է: Կարծում ենք՝ արմատներից բռնի հեռացված հայության և նրանց հետնորդների խնդրի համակողմանի ուսումնասիրությանը զուգահեռ մեր հասարակությունը (այդ թվում և գիտական) խնդիր ունի տեղեկանալ հարցին՝ փորձելով հասկանալ և «մարսել» այն: Այնպես որ՝ այս փուլում խնդրի առաջ բերած խիստ հակասական (չարդարացված լավատեսականից մինչև ժխտողական) գնահատականները պետք է համարել բնական և նորմալ: Բայց այս նույն խնդիրն ավելի օրակարգային և արդիական է պոլսահայության համար, որոնք էլ անմիջականորեն շփվում են բռնի կրոնափոխ հայության և նրանց հետնորդների տարբեր խմբերի հետ: Փաստերը ցույց են տալիս, որ պոլսահայ համայնքում ևս հայության տարբեր խմբերի փոխընկալման խնդիրը սուր է: Պետք է ասել, որ տարբեր կարծրատիպերով, կաղապարներով առաջնորդվող և դրանց մեծ տեղ տվող պոլսահայ համայնքն այնքան էլ հակված չէ հայության այլ՝ իրեն չնմանվող խմբերի հետ շփվելու: Բացառություն չեն նաև հայաստանցիները, որոնք մեծ մասամբ մինչև այսօր էլ պոլսահայերի կողմից ընկալվում են որպես «ուրիշ», «օտար»: Այն, որ ուծացման տարբեր աստիճաններում գտնվող Թուրքիայի հայության և պոլսահայության փոխադարձ ընկալ-

ման խնդիրն ավելի արդիական և օրակարգային նշանակություն է ձեռք բերում, ցույց է տալիս տեղի հայկական մամուլում տպագրված հոդվածների, մտավորականների անդրադարձների աճը: Այսպես, պոլսահայ մտավորական, «Ակօս» թերթի լրագրող Բագրատ Էստուկյանը հատկապես վերջին շրջանում անդրադառնում է նաև այդ խնդրին: Հարկ ենք համարում ընդարձակ մեջբերումներ կատարել նրա հոդվածներից, քանի որ նա, լինելով պոլսահայ համայնքի անդամ, կարողացել է անաչառ, միևնույն ժամանակ, կառուցողական դիրքերից, և որ ամենակարևորն է, «ներսից» պատկերել խնդիրը. *«Թուրքիոյ ներկայ օրակարգի գլխաւոր նիւթերէն մին կը հանդիսանայ բնակչութեան ինքնութիւնը: Նախապաշարուած անհամար միտքեր, կամ կարծիքներ, նոյնիսկ հաստատումներ փուլ կու գան այժմ: Մինչև մոտ անցեալ, երկրի վարիչները շատ կը սիրէին 99,9 տոկոսով մահմետական համարել Թուրքիոյ բնակչութիւնը: Երկրի Հայ հասարականութիւնն ալ իւրացուցած կերևի այս համոզումը: Թէ չի գիտակցիր, որ իրմէ զատ հայեր ալ կան այս երկրի մէջ, և թէ չուզեր լսել անոնց գոյութիւնը:* ***Մեր քաղքենի ըմբռնման մէջ տեղ չկայ այն հայուն որ քրիստոնեայ չէ*** *(ընդգծումը մերն է- Ռ.Մ.): Նոյնիսկ մինչև մօտ անցեալին կրնայինք յամառիլ Հայ չկոչել այն, որ հայախօս չէ: Այսօր ալ լսել չենք ուզեր բոլոր այն հայերուն մասին, որոնց կենցաղը նման չէ մեր քաղքենի սովորութիւններուն: Բայց կան: Կան հայեր, որոնք փարած են իրենց ազգային ինքնութեան, ամբողջովին զանց առնելով կրօնական պատկանելիութիւնը: Կան քրիստոնեաներ, որոնք փարած են իրենց հաւատքին, առանց գիտակցելու ազգային պատկանելութիւնը: Կան հայախօսներ, որոնք դեռ նոր գիւտը կընեն իրենց նախնիքներուն ազգային ինքնութեան: Ոմանք մնացած են քրտաբնակ շրջաններու մէջ, քրտացած: Ոմանք մնացած են թրքաբնակ շրջաններու մէջ, թրքացած: Իսկ ոմանք, և բաւական*

*թիւով ոմանք, հետքը որոնելով իրենց նախնիքներուն, կու գան մեր եկեղեցւոյ դուռը: Իսկ դուռը բա՞ց է արդեօք իրենց դէմ: Երբ գաւառի հայ մը մկրտութեան, պսակի կամ թաղման համար դիմում կատարէ մեր հոգևոր իշխանութեանց, քահանայի պահանջքով ի՞նչ պատասխան կը ստանայ»*[1]: Ի դեպ, Բագրատ Էսդուգյանը այս նույն խնդիրներին է անդրադարձել նաև հայաստանյան «Հետք» (Հետաքննող լրագրողների ընկերակցություն) ինտերնետային կայքին տված հարցազրույցում. *«Երբ ասում ենք Թուրքիայի հայ հավաքականություն, պետք է նկատի ունենալ Ստամբուլի հայ հավաքականությունը: Երբ ասում ենք Ստամբուլի հավաքականություն, պետք է հասկանալ մի որոշ քաղքենի կենցաղ: Այդ քաղքենի կենցաղը հայ տեսնել կուզե միայն իր նմանը: Այսինքն՝ հայը պետք է որոշ թաղերի մեջ բնակվի, ամառները պետք է կղզի գնա, պետք է որոշ հաճախականությամբ եկեղեցի այցելի: Եվ հայն այդպիսի կաղապարված սահմաններ պետք է ունենա, ինչպես որ այս քաղաքի ընդհանուր մեծամասնությունը գոյացրել է: Իսկ այն հայը, որ կհակասի այս համայնապատկերին, ընդհանրապես շփոթով կդիտվի, երբեմն ստորագնահատությամբ կդիտվի: Այս օրինակին կմտնեն թե՛ հայաստանցիները և թե՛ այն հայերը, որոնք երկար տարիներ մնացել են Ստամբուլից դուրս վայրերում, իրենց ինքնությունը պահած են կամ նույնիսկ կորցրել են, բայց այսօր զիտակցում են: Ահավասիկ այդ զանգվածն էլ չի կարողանում պոլսահայերի ամբողջության մեջ թափանցել»*[2]:

Ծպտյալ և իսլամացված հայության և նրանց հետնորդների ճիշտ ընկալման, ինչպես նաև ինտեգրման հարցում լուրջ և ամենևին էլ ոչ երկրորդական դեր ու անելիքներ ունի նաև Հայ Առաքելական եկեղեցին: Սակայն մեր կարծիքով՝ Պոլսո Հայոց

[1] *Էստուգեան Բ.,* Գաւառի հայութիւնը, Ակօս, 01.08. 2008:

[2] http://www.hetq.am/arm/society/8217/

պատրիարքության երբեմն ոչ գրկաբաց վերաբերմունքը կրոնադարձվել՝ քրիստոնեություն վերընդունել ցանկացող հայերի նկատմամբ կարող է ունենալ տարբեր պատճառներ, որոնք կապված են զգուշավորության, թուրքական պետության կողմից կիրառվող սահմանափակումների, ինչպես նաև տարբեր շահախնդրությունների հնարավոր վտանգի հետ:

Այս բոլոր երևույթների հետևանքով նաև պոլսահայ դիսկուրսում է ի հայտ եկել և ծառացել «ո՞վ է հայը» հարցը, որին անդրադարձել է նաև Բագրատ Էստուքյանը «Ակօսի» էջերում. *«Իսկապէս, ո՞վ է Հայը: Հայ ըսելով ի՞նչ կըհասկնանք: Օրինակ, մենք՝ պոլսահայերս, ինչե՞ր կակնկալենք հայէն: Արդեօք կարելի՞ է որ Հայը հայախօս չըլլայ: Փորձառութեամբ սորվեցանք, կարելի է: Հայաստանաբնակ Հայն ալ նոյնպէս պիտի յոժարի՞ արդեօք հայախօս չեղողը Հայ համարելու: Ով գիտէ, թերևս ալ ան դեռ չունի մեր ունեցած փորձառութիւնը: Հայը կարելի՞ է որ քրիստոնեայ չըլլայ: Կըրնա՞նք պատկերացնել իսլամացած մէկը, որ ըսէ, թէ Հայ է: Ապրեցանք ու տեսանք որ կարելի է: Հրանդի սպանութեան յաջորդող օրը, ամբողջ գիշեր հերթ պահեցինք ԱԿՕՍ-ի դրան առջև, Սայաթ Նովացիներս, Քարտեշ Թիւրքիւլեր խմբակի տղաքը, Տոսթլար Գորոսու խումբէն երիտասարդներ ու տասնեակ մը սասունցիներ: Այդ գիշեր հանդիպեցանք հաւատացեալ մահմետական հայերու, որոնք եկած էին զօրակցելու մերօրեայ ամենամեծ նահատակին՝ Հրանդ Տինքին յիշատակը յարգելու: Համոզուեցանք որ այս ալ կարելի էր»*[1]: Հոդվածագիրը գալիս է հաստատելու բազմիցս արտահայտած մեր այն միտքը, որ Թուրքիայի ծպտյալ և իսլամացված հայության և նրանց հետնորդների ընկալման, նրանց հանդեպ մոտեցումների հստակեցումը կարող է գալ միայն հարցի համակողմանի ճանաչումից, հասկանալուց հետո միայն: Կարելի է

[1] *Էսդուքեան Բ.*, Ո՞վ է Հայը, Ակօս, 26.09.2008.

պնդել, որ այսօր հայության տարբեր խմբերի մեջ առկա ամենակարևոր խնդիրներից է փոխադարձ ճանաչումը: Նկատելի է, որ Էսդուգյանն անթաքույց երկյուղով ու վերապահումով է մոտենում հայաստանցիներիս կողմից Թուրքիայի ուծացած հայության ընկալման հարցին, և դա անելիս իրավացիորեն հիմք է ընդունում այս հարցում իրենց համեմատ մեր «անփորձ», այն է՝ անտեղյակ լինելը: Էսդուգյանն անուղղակիորեն ընդունում է նաև, որ հենց իրենք պոլսահայերը, ներկայումս խնդիր ունեն ճանաչել գավառներում վերապրած, ուծացման տարբեր աստիճանում գտնվող հայերի հետնորդներին, քանի որ օբյեկտիվ պատճառներով չեն տիրապետում խնդրին ամբողջությամբ և խորությամբ. *«Տասը տարի առաջ ո՞վ լսած էր Ատըյամանի շուրջ քսան հազար հայերու մասին: Վերջին երկու տարիներուն մեր համայնքը ծանօթացաւ այդ գաւառին, քանի հոնկէ տասնեակ աշակերտներ կու գան ուսանելու մեր ազգային վարժարանները: Միթէ մեր երկիրը գաղտնի կամ կորած հայերու պահածո՞յ է»*[1]:

### *Կրոնափոխ հայերի և նրանց հետնորդների ընկալման հարցը Թուրքիայի մուսուլմանների կողմից*

Մեր կարծիքով՝ երկրորդական չէ և նույնիսկ ուշադրության է արժանի իսլամացված հայերի և նրանց հետնորդների ընկալման հարցն իրենց շրջապատի թուրքերի, քրդերի, մի խոսքով՝ մուսուլմանների կողմից: Գաղտնիք չէ, որ Թուրքիայում ոչ պետական և ոչ էլ հասարակական մակարդակով կրոնափոխ հայերին «իսկական մուսուլման» չեն համարել, և ներկայումս էլ մտածելակերպը չի փոխվել: Փաստերը բազմաթիվ են. բավական է նշել հանրապետական Թուրքիայում պետականորեն կիրառված որոշ պատժամիջոցներում կրոնափոխ հայերին

[1] Նույն տեղում:

ընդգրկելու հանգամանքը[1]: Իրենք՝ կրոնափոխ հայերն են խոստովանում, որ իսլամ ընդունելու պարագայում անգամ իրենց իրական մուսուլման չեն համարում, և գյավուր, դյոնմե (կրոնափոխ) որակումները միշտ ուղեկցում են իրենց: Օրինակ, 85-ամյա սասունցի, կրոնափոխ հայուհի Ջեյնեփ Յըլմազը (որը բարեպաշտ մուսուլմանի համբավ ունի, 24 ժամ նամազ է անում, և շրջապատում կարծում են, որ մուսուլման ամուսնուց էլ ավելի լավ մուսուլման է) ասում է. *«Մենք հայ էինք, մուսուլման դարձանք, սակայն երբ տեղը գալիս է, մուսուլմանները մեզ կրկին ասում են. «Դուք հայ եք»: Սրանից չենք կարողանում ազատվել»*[2]: Բագրատ Էսդուգյանը նույնպես, անդրադառնալով այս խնդրին, նշում է, որ իսլամացված հայերին և նրանց հետնորդներին մինչև այժմ էլ հայ են համարում. *«Երբեք չեն ընդունում, ասում են՝ հա, էդ գյուղը գյավուրի գյուղ է, նրանք հայ են: Շրջակայքում չես կարող փոխել, սերնդեսերունդ գալիս է, որ դա հայի գյուղ է, բայց երբ քաղաք են գալիս, ամեն բան փոխվում է»*[3]:

Հետաքրքիր է նաև իմանալ թուրք ռասիստ ազգայնամոլների կարծիքը՝ ո՞վ է թուրքը հարցի շուրջ և այս նույն համատեքստում տեսնել, թե նրանք ինչպես են վերաբերվում ուծացման տարբեր աստիճաններում գտնվող ոչ թուրքերին: Այսպես, պանթյուրքիզմի ռահվիրաներից մեկը՝ Նիհալ Աթսըզը (1905-

[1] Այս մասին մասնավորապես տե՛ս *Մելքոնյան Ռ.,* «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2008, թիվ 5, էջ 127-143, *Մելքոնյան Ռ.,* «20 դասակարգ» զորակոչի անցկացումը հանրապետական Թուրքիայում, Մերձավոր Արևելք և Կովկաս (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների թեզիսներ) Երևան, 2008, էջ 34-36:

[2] *Dinç G.,* Ermeni kökenli müslüman olan veya hıristiyan kalanlar birarada yaşıyor ve aynı şeyi söylüyor, Yeni Aktüel, 2007, 117. s.50.

[3] http://www.hetq.am/arm/society/8217/

1975թթ.), պատասխանելով ո՞վ է թուրքը հարցին, դեռևս 1934թ. «Օրքուն» ամսագրում հրապարակված «Թուրք ռասան=Թուրք ազգի» վերնագրով հոդվածում ասում է. *«Թուրքերի համար ազգը ամեն ինչից առաջ արյան խնդիր է: Այսինքն՝ նա, ով ասում է՝ թուրք եմ, պետք է թուրքական ցեղից լինի: Սակայն օտար արյուն կրող մարդը եթե նույնիսկ թուրքերենից բացի այլ լեզու չիմանա էլ, նա թուրք չէ»*[1]:

[1] *Kürkçüoğlu F.,* Milli savunma bakanı Vecdi Gonül açıkladı, Birgün, 16.11.2008.

## *Ամփոփում*

Այսպիսով, կարելի է ևս մեկ անգամ փաստել, որ Թուրքիայի բռնի կրոնափոխ հայության խնդիրը բազմաշերտ է, ուստի հարկ է յուրաքանչյուր շերտի նկատմամբ որդեգրել համապատասխան մոտեցում: Նկատենք նաև, որ գրքում ներկայացված սահմանումները և գնահատականները կրոնափոխ հայերի խմբերի, նրանց շրջանում տեղի ունեցող գործընթացների մասին արդյունք են մինչ այս կատարած աշխատանքների, սակայն չի բացառվում, որ հետագայում՝ ուսումնասիրությունների շարունակմանը զուգընթաց, ի հայտ գան խնդրի նոր շերտեր, երևույթներ, որոնք պահանջեն որոշակի սրբագրումներ անել արդեն ձևավորված մոտեցումներում:

Միևնույն ժամանակ, հարկ է շեշտել, որ բռնի կրոնափոխ հայերի խնդիրը Թուրքիայում շարունակում է դասվել փակ, տաբուացված թեմաների շարքին, և այս առիթով Հրանտ Դինքը նկատել է, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին սպանվածների մասին խոսելը բարդ է, սակայն դրանից էլ ավելի բարդ է տարբեր կերպ (այդ թվում և կրոնափոխվելով) վերապրածների մասին խոսելը[1]: Այս ամենը, միևնույն ժամանակ, բարդացնում է թեմայի ուսումնասիրության և օբյեկտիվ, ամբողջական պատկերի վերհանման աշխատանքները:

Կարևոր է հստակ գիտակցել նաև, որ Թուրքիայի կրոնափոխ հայերի խնդիրը պարունակում է բաց և քողարկված վտանգներ, և թեմայի անհարկի շահարկումը, ոչ ճշգրիտ մեկնաբանությունները, հուզական մոտեցումները կարող են պատ-

[1] *Dink H.,* İki yakın halk, iki uzak komşu, İstanbul, 2-inci baskı), 2008, s. 61.

ճառ դառնալ լուրջ պրոբլեմների: Ուստի, այս հարցում զգույշ և մասնագիտական մոտեցում որդեգրելը ուղղակի անհրաժեշտություն է:

Ի հայտ եկող փաստերի ճիշտ ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն կտան մշակել կրոնափոխ հայության տարբեր խմբերի հետ շփվելու որոշակի ծրագիր, որը պետք է լինի ապաքաղաքական և առավելապես հիմնված մշակութային հարթության վրա:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան ........................................................................................................ 3

Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում.
ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ ...................................................... 7

Հայ երեխաների բռնի իսլամացումը
Հայոց ցեղասպանության տարիներին ......................................................... 17

Կրոնադարձությունը Թուրքիայի ծպտյալ հայերի շրջանում .................... 28

Ներէթնիկ ինքնագիտակցության դրսևորումներ Թուրքիայի
ծպտյալ հայերի շրջանում. ներքին ամուսնություններ .............................. 36

Վերապրած հայեր. Էրմենի Վարթո աշիրեթը .............................................. 44

Էթնիկ ծագման խնդիրը Թուրքիայում .......................................................... 49

Ծպտյալ և իսլամացված հայերի խնդրի
շահարկումները Թուրքիայում ………..…………………………………..…… 73

Թուրքական պետական կառույցների
մոտեցումը կրոնափոխ հայերի խնդրին ....................................................... 86

Ցեղասպանությունը վերապրած Սասունի
հայության արդի խնդիրների շուրջ ............................................................... 91

Հայության տարբեր խմբերի փոխընկալման
խնդիրը Թուրքիայում ...................................................................................... 102

Ամփոփում ......................................................................................................... 109

Ռուբէն Մելքոնյան

# ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

*Տեխնիկական խմբագիրներ*՝
Խոնարհիկ Քարաուղլանյան
Լուսինե Բաղրամյան

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 7 տպ.մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: